ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 4 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1747: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 18 ՓԵՏՐՎԱՐԻ 2016Թ.
№ 5 (381)

www.syuniacyerkir.am

Տկար, մեկուսացած ու անկազմակերպ Հայաստանը չի կարող մեր ազգի իրավունքների պահանջատերը դառնալ, չի կարող հարգանք պարտադրել ու լսելի դառնալ միջազգային համայնքում: Հետեւաբար Հայաստանի հզորացումն իր տնտեսական, զինվորական եւ այլ բնագավառներով հրամայական անհրաժեշտություն է: Այս իրագործելու համար արտագաղթի կասեցումը, կոռուպցիայի վերացումն ու Սփյուռքի առավել կազմակերպ զորակցությունը Հայաստանի համար կենսական են:

ԱՐԱՄ ԱՌԱՋԻՆ

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս

Սերժ Սարգսյանը «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունում

Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Սյունիքի մարզ

Նախագահ Սերժ Սարգսյանը փետրվարի 6-ին աշխատանքային այցով այցելել է Սյունիքի մարզ: Նախագահը Մեղրիում մասնակցել է հերթական՝ թվով 14-րդ մարզային բժշկական կենտրոնի բացման արարողությանը, որն իրականացվել է ՀՀ նախագահի՝ մարզերի համաչափ զարգացման հանձնարարականի շրջանակներում: «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնը» ստեղծվել է «Մեղրու բժշկական կենտրոն» եւ «Ագարակի հիվանդանոց» ՓԲԸ-ների միավորման արդյունքում՝ պահպանելով ամբողջ բժշկական անձնակազմը: Արդիականացված նորաբաց բազմապրոֆիլ բժշկական կենտրոնը հնարավորություն կընձեռի Մեղրու տարածաշրջանի բնակչությանը մատուցել ժամանակակից, որակյալ եւ

էջ 3

ՏԻՄ ընտրություններ Տաթեւ նորակազմ համայնքում

2016թ. փետրվարի 14-ին Տաթեւ նորակազմ համայնքում տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ:

Տաթեւ համայնքը՝ ներկա տեսքով, Հայաստանի Հանրապետությունում խոշորացվող համայնքներից մեկն է, իսկ Սյունիքի մարզում՝ առաջինը:

Դեռեւս 2011 թվականին էր ՀՀ կառավարությունը մշակել «Համայնքների խոշորացման եւ միջհամայնքային միավորումների ձեւավորման հայեցակարգը»: Իսկ 2014-ին մեկնարկել է այդ հայեցակարգի իրականացման «պիլոտային» ծրագիրը, որի մեջ ընդգրկվել էր նաեւ Գորիսի տարածաշրջանի Տաթեւի ենթաշրջանը:

2015թ. մայիսի 17-ին ենթաշրջանի գյուղերում հանրաքվե էր:

Առաջադրվել էր հետեւյալ հարցը՝ *«Համաձա՞յն եք, որ Շինուհայր, Տաթեւ, Հալիձոր, Հարժիս, Սվարանց, Խոտ, Տանձատափ, Քաշունի համայնքները միավորվեն Տաթեւ համայնք անվամբ, Շինուհայր համայնքային կենտրոնով»:*

Ութ գյուղի ընտրողները ձայների ճնշող մեծամասնությամբ «այո» պատասխանեցին առաջադրված հարցին:

էջ 14

2016թ. սեպտեմբերի 18-ի ուրվականը

Տարին, ըստ էության, քաղաքական առումով բուռն է լինելու:

Նախ՝ պետության կառավարման մեջ էական փոփոխություններ ու վերադասավորումներ տեղի կունենան՝ Հայաստանի Հանրապետության նորացված սահմանադրությունից բխող:

Այնուհետեւ, ականատես կլինենք 2017թ. խորհրդարանական ընտրությունների նախապատրաստմանը, որը նոր սահմանադրության դեպքում կարեւոր նշանակություն կունենա երկրի հետագա զարգացման ճանապարհին:

Կառավարող թիմում կհայտնվի (արդեն իսկ հայտնվել է) ՀՅԴ-ն, թեեւ ՀՀԿ-ՀՅԴ կոալիցիոն համագործակցությունը դեռ պիտի ապացուցի իր անկեղծությունն ու պետքականությունը:

Կարեւոր իրադարձություն կլինի ընտրական նոր օրենսգրքի ընդունումը, որի ուղղությամբ աշխատանքները տարվում են:

Միգուցե եւ այլ իրողությունների բախվենք՝ աշխարհաքաղաքական անցուդարձով պայմանավորված:

Եվ, այդ ամենով հանդերձ, սպասվում է մեկ իրադարձություն նույնպես, որը ոչ պակաս հետաքրքիր է շարքային մարդկանց համար: Նկատի ունենք տեղական ինքնակառավարման մարմինների եւ հատկապես քաղաքային համայնքների ղեկավարների ընտրությունը:

Սյունիքում, ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ժամանակացույցի, ընտրությունները տեղի կունենան սեպտեմբերի 18-ին (այդ մասին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունել դեռեւս 2015թ. սեպտեմբերի 11-ին):

Դժվար է ասել՝ կհասցնե՞նք այդ ընտրություններն անցկացնել ընտրական նոր օրենսգրքով, թե՞ ոչ:

Դժվար է նաեւ ասել, թե ինչ պատկեր կունենա մարզի համայնքների քարտեզը սեպտեմբերի 18-ի շեմին. որովհետեւ Տաթեւի ենթաշրջանում ութ գյուղը մեկ համայնքի մեջ միավորելուց հետո սպասվում են նորանոր քայլեր մարզի համայնքների խոշորացման ուղղությամբ, մանավանդ որ նորացված սահմանադրությամբ՝ *«Հանրային շահերից ելնելով՝ համայնքները կարող են օրենքով միավորվել կամ բաժանվել»:*

Դժվար է նույնիսկ ասել՝ համայնքի ղեկավարը կընտրվի ուղղակի՞, թե՞ անուղղակի ընտրակարգով, չէ՞ որ ՀՀ սահմանադրության հոդված 181-ն այլեւս կարելի է համարում համայնքի ղեկավարի անուղղակի ընտրությունը:

Հավանական է, որ համայնքի ղեկավար ընտրենք հինգ տարի ժամանակով:

Եվ չնայած բազմաթիվ հարցականների ու անորոշությունների առկայության, մարզի համայնքներում արդեն իսկ զգացվում է նախընտրական շունչը:

Մեղրի, Ագարակ քաղաքներում եւ առհասարակ այդ տարածաշրջանում սպասում են համայնքների խոշորացման. շրջանը մեկ համայնքի մեջ միավորելու հնարավոր տարբերակի մասին քանիցս հայտարարել են կառավարության պատասխանատուները եւս:

էջ 2

2016թ. սեպտեմբերի 18-ի ուրվականը

էջ 1

Եթե կյանքի կոչվի այդ ծրագիրը, ապա ընտրապայքարը, ամենայն հավանականությամբ, տեղի կունենա Մեղրու եւ Ագարակի քաղաքապետեր Արշավիր Հովհաննիսյանի ու Մխիթար Զաքարյանի միջեւ: Երկու քաղաքապետն էլ վայելում են վերադաս իշխանությունների վստահությունը, եւ դժվար թե որեւէ մեկը նախապես ֆավորիտ հռչակվի: Ըստ էության Մեղրի համայնքում (եթե միավորում տեղի ունենա) ամեն ինչ կթողնվի ընտրողների հայեցողությանը, որը, կարծում ենք, ամենաողջամիտ տարբերակն է: Իսկ եթե համայնքների միավորում տեղի չունենա, ապա երկու քաղաքապետն էլ վերընտրվելու ռեալ հնարավորություն կունենան, թեեւ կլինեն նաեւ մրցակիցներ:

Մխիթար Զաքարյան
Ագարակի քաղաքապետ

Արշավիր Հովհաննիսյան
Մեղրու քաղաքապետ

Վարդան Գեւորգյան
Քաջարանի քաղաքապետ

Աշոտ Հայրապետյան
Կապանի քաղաքապետ

Վաչագան Ադունց
Գորիսի քաղաքապետ

Աղասի Հակոբջանյան
Սիսիանի քաղաքապետ

Գորիսում սպասվում է ավագանու ընտրություն. քաղաքապետն ընտրվել է 2014-ին: Չի բացառվում, սակայն, Գորիս համայնքի խոշորացում նույնպես՝ Ակներ, Վերիշեն եւ Քարահունջ գյուղերը քաղաքային համայնքին միացնելով. այդ դեպքում անխուսափելի կդառնա նաեւ քաղաքային համայնքի ղեկավարի ընտրությունը: Գործող քաղաքապետ Վաչագան Ադունցը, նման զարգացումների դեպքում, կլինի հավակնորդներից առաջինը, մանավանդ որ հասցրել է ապացուցել իր ակտիվ գործունակությունը, դժվարին մեր օրերում համայնքը պատշաճորեն ղեկավարելու կարողությունը:

Քաջարանում վերընտրվելու մեծ շանս ունի գործող քաղաքապետ Վարդան Գեւորգյանը, ում եռանդը, պրպտումները, համայնքում համերաշխության մթնոլորտն ամրապնդելու ձգտումը մարդկանց աչքի առջեւ են: Սակայն Քաջարանում կարեւոր է լինելու նաեւ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության ղեկավարության դիրքորոշումը: Իհարկե, ընկերության նոր ղեկավարությունը, որքանով տեսնում ենք, ի սկզբանե եւ արդարացիորեն, հրաժարվել է քաղաքական մահակի դերից, որ տարիներ շարունակ ստանձնել էր այդ ձեռնարկության ղեկավարությունը, բայց եւ քիչ հավանական է, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի պատասխանատուներն անտարբեր լինեն համայնքի ղեկավարի ընտրության հարցում:

Լարված ընտրություն է սպասվում Կապանում: Ե՛վ 2015-ի դեկտեմբերի 6-ի հանրաքվեն, ե՛ւ 2012-ի ՏԻՄ ընտրությունները, ե՛ւ 2013-ի նախագահական ընտրությունը ցույց տվեցին, որ միաբեւեռ Կապանի մասին երազելն անօգուտ զբաղմունք է: Ոչ մի կոմբինացիայի շնորհիվ միաբեւեռություն չի կարող լինել նաեւ այս տարի սպասվող ՏԻՄ ընտրություններում:

Գործող քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը, անտարակույս, կլինի ՀՀԿ-ի թեկնածուն, չնայած կուսակցության կապանյան կառույցում քիչ չեն նրա ընդդիմախոսներն ու նրա գործունեությունը բացահայտ քննադատողները:

Աշոտ Հայրապետյանը, ցավոք, իր ձեռքն առավ խոսքի ազատության դեմ պայքարի մրոտված դրոշը (մի ժամանակ այդ դրոշը հպարտորեն ծածանում էր Արմեն Կարապետյան քաղաքապետը), նա մոռացավ, թե ինչ հանգամանքների շնորհիվ է քաղաքապետ դարձել 2012-ին, մոռացավ իր նախընտրական խոստումները, կադրային քաղաքականության մեջ եւ թոշակառուների հանդեպ ունեցած վերաբերմունքում մարդկանց բաժանեց մերոնքականի եւ ոչ մերոնքականի: Այդ բոլորով հանդերձ՝ հանրապետական մյուս հավակնորդների համեմատությամբ նա անվիճելի առավելություններ ունի:

Կապանում կարեւոր կլինի քաղաքի ամենախոշոր գործատուի՝ լեռնահանքային կոմբինատի ղեկավարության եւ մասնավորապես Հրաչ Զաբրայանի դիրքորոշումը:

Աշոտ Հայրապետյանի գլխավոր մրցակիցը, ինչպես չորս տարի առաջ, կլինի Արտուր Աթայանը, ով շարունակում է որոշակի դրական հեղինակություն վայելել Կապանում: Լինելով ՀՅԴ անդամ՝ նա, սակայն, քաղաքապետարանում 2008-12թթ. պաշտոնավարելու ընթացքում (դրանից առաջ եւ հետո նույնպես) ցույց տվեց, որ ունի վերկուսակցական պահվածք, որ կարող է լինել հուսալի կամուրջ իշխանությունների եւ ժողովրդի միջեւ, կարող է հրաժարվել անձնական նկրտումներից եւ համերաշխության ձեռք մեկնել յուրաքանչյուր ուժի եւ անհատի՝ ի շահ Կապանի զարգացման: 2012-ին անհասկանալի հանգամանքներում նա դուրս մղվեց ընտրապայքարից, բայց երբեք չարությամբ չլցվեց ոչ իր հաջորդի, ոչ հանրապետության իշխանությունների հանդեպ:

2016 ընտրական տարում Սիսիանը շարունակում է մնալ բազմաբեւեռ եւ ըմբոստ՝ իր դեմքը պաշտպանելու հարցում: Համայնքի ղեկավարի համար, ամենայն հավանականությամբ, կպայքարի մի քանի բեւեռ: Գործող քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը նախորդ երկու ընտրության ժամանակ կարողացավ պարտության մատնել իր հզոր մրցակիցներին: Այսօր էլ նա ունի կայուն թիմ, հետեւորդներ, որոշակի դրական վարկանիշ, թեեւ մեկ տարի առաջ հեռացել է ԲՀԿ-ի շարքերից, թեեւ նրան ցեխոտելու արշավը չդադարեց մեկ օր անգամ:

Սակայն Սիսիանում, կարծում ենք, իր թեկնածուն կունենա ՀՀԿ-ն (թեկնածուն կարող է լինել Սամվել Թանգյանը կամ Արթուր Սարգսյանը, ով որդին է նախկին քաղաքապետ ու ճանաչված շինարար Լավրենտ Սարգսյանի): Չի բացառվում, որ թեկնածու կունենան Հերմինե Նաղդալյանի կողմնակիցները. այդ թեկնածուն կարող է լինել Արմեն Անդրեասյանը, ով վերջին տարիներին ճանաչում է ձեռք բերել ճանապարհաշինության ոլորտում կատարած աշխատանքների շնորհիվ: Կարեւոր կլինի Զիվան Մարգարյանի, Աշոտ Մինասյանի (ով շարունակում է մնալ Սիսիանի երկրապահների անպաշտոն առաջնորդը) դիրքորոշումը, ինչը ցույց տվեց նաեւ 2015թ. դեկտեմբերյան հանրաքվեն:

Ամբողջ նախընտրական գործընթացներում էական (որոշ դեպքերում՝ վճռորոշ) կլինի Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի դիրքորոշումը, ով տիրապետում է ոչ միայն տարածքային իշխանության ու կուսակցության մարզային կառույցի լծակներին, այլ նաեւ հանրային աջակցության մեծ ռեսուրսի: Սակայն Սուրեն Խաչատրյանը, որքանով հասկանում ենք, վաղաժամ է համարում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախապատրաստությամբ զբաղվելը: Բայց քանիցս հնչեցրել է մի ֆրազ, որը կարող է եւ առաջիկա ընտրություններում գործելակերպի սկզբունք դառնալ տարածքային իշխանության համար: Ահա այդ ասույթը՝ *«Որեւէ անձնավորության, ով ձգտում է համայնքի ղեկավար ընտրվել, կարելի է աջակցել առաջին անգամ: Երկրորդ անգամ նույն այդ մարդու ընտրությունը պետք է տվյալ համայնքում տոնակատարության վերածվի, այլապես ավելորդ կլինի վերընտրվելու նրա ձգտումը»:*

Առաջիկա ընտրությունների մի առանձնահատկության մասին եւս (ավելի ճիշտ՝ հնարավոր առանձնահատկության մասին): Վերեւում նշեցինք, որ նորացված սահմանադրությունը թույլատրելի է համարում համայնքի ղեկավարի անուղղակի ընտրությունը: Այդ դրույթը, անշուշտ, կհստակեցվի ընտրական նոր օրենսգրքում: Դժվար չէ կռահել, որ համայնքի ղեկավարն այդ դեպքում կընտրվի ավագանու անդամների կողմից: Իսկ դա նշանակում է, որ քաղաքապետի հավակնորդները (չսպասելով ընտրական օրենսգրքի փոփոխությանը) սեպտեմբերի 18-ի ընտրություններին ընդառաջ կգնան ավագանու անդամների իրենց ցուցակով:

Չմոռանանք նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի վերջին ելույթը. նախագահը ներկայացրեց իր տեսլականը հանրային ծառայողի որակական հատկանիշների մասին: Եթե այդ պահանջները գոնե մասամբ իրականություն դառնան, ապա պարապությունից ֆեյսբուքում խզբզող քաղաքապետ չենք ունենա, պետական գրասենյակներում սերիալներ դիտելով օր մթնեցնող տիկնայք եւ պարոնայք չենք ունենա, բանսարկությամբ տուն պահող նաժիշտներ չենք ունենա, երեկվա սապոգավորին մարգարե հռչակող եւ մեռյալների (կենդանության օրոք անտեսված ու մոռացված) հաշվին վարկանիշ շինող համայնքապետ չենք ունենա:

Ահա այսպիսի շարքերով, ուժերի դասավորությամբ եւ նման իրողությունների առկայությամբ են Սյունիքի քաղաքային համայնքներում ընդառաջ գնում 2016թ. ՏԻՄ ընտրություններին:

Անտարակույս, կարող են եւ լինել իրավիճակի կտրուկ կամ անսպասելի փոփոխություններ, կարող են երեւան գալ համայնքների ղեկավարների նորանոր ու առավել ցանկալի, առաջադեմ հավակնորդներ: Կարող են եւ ուժերի վերադասավորումներ տեղի ունենալ: Կլինի (եւ արդեն կա) «դաբրոների» փնտրտուք: Այդ ամենը, սակայն, ժամանակը ցույց կտա…

Վերը շարադրվածով հանդերձ, սակայն, ոչ մի գործոն այնքան վճռորոշ չի լինի, որքան ընտրողների կամքը. այդ հարցում հավանաբար միակարծիք ենք բոլորս:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Արտուշ Ղուկասյանը՝ Գորիսի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար

Նշանակում

2016թ. փետրվարի 11-ին Յուրի Սաֆարյանն ազատվել է Գորիսի պետական համալսարանի ռեկտորի պարտականություններից:

Յուրի Սաֆարյանը ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է, 27 տարի (1989 թվականից) գլխավորել է Գորիսի բուհը, այս տարվա նոյեմբերին պիտի ավարտվեր նրա պաշտոնավարման ժամկետը:

Յուրի Սաֆարյանի պաշտոնանկության վերաբերյալ պաշտոնական հաղորդում չի տարածվել, ինչի համար եւ շրջանառվում են տարաբնույթ վարկածներ: Ըստ շրջանառվող վարկածներից մեկի՝ հերթական արձակուրդում գտնվող տնօրենը փետրվարի 10-ին հրավիրվել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն եւ արձակուրդից վերադառնալու ու աշխատանքից ազատվելու մասին դիմում գրելու առաջարկություններ ստացել: Ըստ մեկ այլ վարկածի՝ Յուրի Սաֆարյանի պաշտոնանկության հարցը քննարկման առարկա էր դարձել փետրվարի 6-ին՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի Սյունիքի մարզ կատարած այցելության ընթացքում:

ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի հրամանով Գորիսի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար է նշանակվել ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտուշ Ապրեսի Ղուկասյանը:

Արտուշ Ղուկասյանը ծնվել է 1958թ., 2002-2010թթ. Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորն էր, որից հետո աշխատել է ՀՀ ԿԳՆ բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահ, ապա՝ ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի փոխտնօրեն: Ի դեպ, կրթության ազգային ինստիտուտում նրա տեղը հավանաբար կզբաղեցնի Յուրի Սաֆարյանը:

Առաջիկայում կճշտվի նաեւ Գորիսի պետական համալսարանի ռեկտորի ընտրության օրը: Մինչ այդ, սակայն, փոփոխություններ են սպասվում նաեւ «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդում, որին վերապահված է ռեկտորի ընտրության գործառույթը, որի նախագահը դեռեւս Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյանն է:

Սեփ. լրատվություն

Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Սյունիքի մարզ

Մեղրու բժշկական կենտրոնի բացումը

«ԶՊՄԿ» ՓԲԸ ֆինանսավորմամբ վերակառուցված Քաջարանի մանկապարտեզում

Ֆինանսների նախարարության Կապանի տարածքային հարկային տեսչության նոր մասնաշենքում

էջ 1 հասանելի բժշկական ծառայություններ: ՀՀ կառավարության եւ Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորված «Առողջապահական համակարգի արդիականացում» ծրագրի շրջանակներում այս բուժհաստատությունում իրականացվել է շուրջ 1.62 մլրդ դրամի ներդրում: Նորակառույց կենտրոնը հագեցվել է ժամանակակից բժշկական սարքավորումներով, կահույքով եւ անհրաժեշտ պարագաներով: «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնում» առկա է նաեւ հեռաբժշկության հնարավորություն:

Նախագահը առողջապահության ոլորտի պատասխանատուների, ՀԲ-ի, բուժհաստատության եւ մարզային իշխանությունների ներկայացուցիչների հետ շրջայց է կատարել «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնում», ծանոթացել ստեղծված պայմաններին, առաջարկվող բժշկական ծառայություններին, բուժանձնակազմի հետ զրուցել կենտրոնի գործունեության հետ կապված հարցերի շուրջ: Առողջապահության նախարարը զեկուցել է վերջին տարիներին Սյունիքի մարզում առողջապահության ոլորտում իրականացված ծրագրերի, այդ թվում՝ Գորիսի, Քաջարանի եւ Կապանի բժշկական կենտրոնների հիմնանորոգման ու վերազինման աշխատանքների մասին, որոնց ավելացել է այսօր բացված Մեղրու տարածաշրջանային բժշկական նորակառույց կենտրոնը: Նախարարը ներկայացրել է նաեւ մարզում առողջապահական արդիական ենթակառուցվածքների ստեղծման եւ բարելավման ուղղությամբ նախատեսվող առաջիկա ծրագրերը:

> *Հանրապետության նախագահն այնուհետեւ մեկնել է Քաջարան, որտեղ մասնակցել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ֆինանսավորմամբ վերակառուցված մանկապարտեզի բացման արարողությանը: Վերանորոգման եւ շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է ավելի քան 190 միլիոն դրամ: Պատասխանատուների ներկայացմամբ, մանկապարտեզի շահագործման արդյունքում կլուծվի եւս 90 երեխայի նախակրթարան հաճախելու խնդիրը, ինչպես նաեւ Քաջարան քաղաքում կստեղծվի լրացուցիչ 40 աշխատատեղ:*

Սերժ Սարգսյանն այցելել է նաեւ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ, որտեղ նրան ներկայացրել են կոմբինատի զարգացման ծրագրերը, իրականացված ներդրումները, ինչպես նաեւ կոմբինատի աշխատակիցների համար ստեղծված պայմանները: Նախագահը շրջայց է կատարել կոմբինատի տարածքում, ծանոթացել ձեռնարկության արտադրողականության եւ կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով վերջին շրջանում իրականացված աշխատանքներին, կոմբինատի կողմից իրականացվող քաղաքաշինական, բնապահպանական, առողջապահական եւ բարեգործական ծրագրերին:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում Սերժ Սարգսյանն անցկացրել է խորհրդակցություն՝ կոմբինատի զարգացման ծրագրերի եւ հանքարդյունաբերության ոլորտի խնդիրների վերաբերյալ: **«Կատարված աշխատանքներն իրոք տպավորիչ են: Եվ եթե այդ աշխատանքները չիրականացվեին, ապա շատ ավելի հավելյալ բարդություններ կունենայինք միջազգային շուկաներում մետաղի գների անկման հետ կապված: Ես հիշում եմ 2008-2009 թվականները, այն ժամանակ էլ այսպիսի խնդիրներ ունեինք, եւ այն ժամանակ էլ լուծումներ տրվեցին: Հնարավորություն տրվեց այդ բարդությունները հաղթահարել եւ հետո արդեն 2011-2012 թվականներին՝ հանքարդյունաբերողների համար ամենաբարենպաստ տարիներին ստանալ իրենց աշխատանքի արդյունքը: Ես վստահ եմ, որ լուծումներ հիմա էլ անպայման գտնվելու են, եւ ոչ միայն Քաջարանում, այլ ընդհանրապես: Մեր հանքարդյունաբերության պոտենցիալը մեծ է, եւ այսօրվա գործող ձեռնարկություններն անպայման պետք է աշխատեն, նույնիսկ եթե պետք է աշխատեն ինքնարժեքով, անգամ ինքնարժեքից մի քիչ ցածր՝ գիտակցելով, որ ոչ միայն սոցիալական խնդիր են լուծում, այլ նաեւ, այսպես ասած, պատրաստվում են վաղվա իրենց աշխատանքի արդյունքները քաղել, այսինքն՝ նախապատրաստվում են միջազգային շուկաների բարենպաստ պայմաններում իրենց շահույթների կամ իրենց կատարած ծախսերի վերադարձին: Շատ լավ հասկանում եմ, որ այն ձեռնարկություններում, որտեղ վիճակը շատ թե քիչ բարենպաստ է, ունեն հավելյալ միջոցներ, ունեն ավելի հարուստ հանքաքար, դժվարությունները շատ ավելի քիչ են, քան միգուցե այստեղ: Բայց երբ ընդհանուր նայում ենք մեր հանքարդյունաբերության համալիրը, կարծես դուք ամենաբարենպաստներից մեկն եք ոչ միայն այն պատճառով, որ ծավալներն են մեծ, վստահ եմ, նաեւ այն պատճառով, որ տարիների տեւական աշխատանքը հիմա էլ բոլոր դեպքերում տալիս է իր արդյունքը: Ես մեր կողմից կարող եմ ավելացնել, որ մենք մշտապես փորձել ենք օժանդակել, որովհետեւ մեծ կոմբինատները մեր բյուջեի եկամուտների հիմքն են, մեծ ձեռնարկությունները մեր սոցիալական խնդիրները լուծողներն են: Մենք մշտապես աջակցում ենք եւ հիմա էլ պատրաստ ենք աջակցելու: ՀՀ կառավարությունը եւ բոլորս պատրաստ ենք մեր հնարավորությունների սահմաններում եւ շատ պարագաներում էլ հնարավորություններից էլ ավելի ձեզ օժանդակել: Ուզում եմ շնորհակալություն հայտնել ձեր սեփականատիրոջը կամ սեփականատերերին, կառուցվածքը չգիտեմ, ձեզ՝ որպես կոմբինատի ղեկավարներ եւ, իհարկե, ողջ կոլեկտիվին՝ ամենապարզ բանվորից սկսած, որովհետեւ հենց նաեւ նրանց լավ աշխատանքով է, որ գործերը լավ են գնում: Վստահ եմ՝ այս անգամ էլ լուծումներ են լինելու, ես դրա մասնագետը չեմ, բայց համոզված եմ, որ կլինի մեկ-երկու տարի հետո, գները կնորմալանան, նորից բոլորդ էլի շատ մեծ հաճույքով եւ առատաձեռն կսկսեք սոցիալական ծրագրերը նաեւ այս տարածաշրջանի ժողովրդի համար»,** - ասել է հանրապետության նախագահը: Խորհրդակցության ժամանակ հանքարդյունաբերության ոլորտի եւ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գործունեության վերաբերյալ զեկուցել են ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարն ու կոմբինատի գլխավոր տնօրենը:

Սյունիքի մարզ աշխատանքային այցի շրջանակներում հանրապետության նախագահը ներկա է գտնվել Ֆինանսների նախարարության Կապանի տարածքային հարկային տեսչության նոր մասնաշենքի բացման արարողությանը: Տեսչությունն սպասարկում է Կապան, Քաջարան, Ագարակ, Մեղրի քաղաքների, ինչպես նաեւ 46 գյուղական համայնքների 4318 հարկ վճարողների: 2014թ. ՀՀ կառավարության որոշմամբ վիճակագրական ծառայությանը պատկանող շենքը հատկացվել է ֆինանսների նախարարությանը, որը նախատեսվել է Կապանի տեսչության համար: Մինչ այդ տեսչությունը գործում էր վարձակալական հիմունքներով զբաղեցված տարածքում: Նորագույն սարքավորումներով վերազինված եռահարկ կառույցի առաջին հարկում տեղակայվել է սպասարկման կենտրոնը, որտեղ հարկ վճարողների սպասարկումը կիրականացվի «մեկ պատուհան» սկզբունքով: Ֆինանսների նախարարության պատասխանատուների հավաստմամբ, այս մասնաշենքի շահագործմամբ ավարտվում է տարածքային հարկային տեսչությունները սեփական շենքով եւ գույքով ապահովելու ծրագիրը, որի շրջանակներում հարկային համակարգում շահագործման է հանձնվել հիմնովին վերանորոգված 15 վարչական շենք. Կապանի ՏՀՏ-ի վարչական նոր շենքը 16-րդն է: 2016թ. էջմիածնի եւ Իջեւանի տեսչությունների շենքերի հիմնանորոգմամբ կավարտվի բոլոր տարածքային հարկային տեսչությունների վարչական շենքերը ժամանակակից չափանիշներին համապատասխանեցնելու գործընթացը:

president.am

Սերժ Սարգսյանը Մեղրու նորաբաց բժշկական կենտրոնում

Նորամուտ

Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնը

«Հայրենիք ստեղծելը հերոսություն է, հայրենիք շենացնելը՝ առաքինություն»

Դեռեւս 2006 թվականին հանրապետության կառավարությունը որոշել էր Մեղրու բժշկական կենտրոնը եւ Ագարակի հիվանդանոցը միավորել՝ ստեղծելով «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը: Որոշումը տարբեր խոսակցությունների տեղիք տվեց, մարդկանց մեջ մտավախություն կար, թե մի հիվանդանոցը նորմալ կարո՞ղ է սպասարկել տարածաշրջանի ողջ բնակչությանը: Այս ամենն արդեն սոսկ հիշողություն է, շարք է մտել ժամանակակից մի բժշկական կենտրոն՝ արդիական կահավորմամբ եւ բժշկական հետազոտություններ իրականացնող նորագույն բուժսարքավորումներով հագեցած:

Ազատ Գասպարյան «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ փնօրեն

Նախկին այգիների տեղում՝ Արաքսի հարեւանությամբ, խստահայաց լեռների խորապատկերի վրա, երկհարկանի ակնահաճո կառույցն է, որ փետրվարի 6-ին բացեց դռները, ավելի ստույգ՝ տեղի ունեցավ Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնի բացման հանդիսավոր արարողություն: Հիշարժան միջոցառմանը մասնակցում էին հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման եւ բարեփոխումների նախարար Վաչե Գաբրիելյանը, ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը, էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Երվանդ Զախարյանը, պաշտոնատար այլ անձինք, մարզի բուժհաստատությունների ղեկավարներ, հյուրեր:

– Գորիսի, Կապանի եւ Քաջարանի բժշկական կենտրոնների հետ համատեղ այս կենտրոնը համալրեց Սյունիքի առողջապահական համակարգը: Կարող ենք արձանագրել, որ էնդոսկոպիկ վիրաբուժական հագեցվածությամբ Սյունիքի մարզն ամենաառաջատարն է հանրապետությունում: Հաշված ամիսներ անց Սյունիքի մարզը կհամալրվի համակարգչային տոմոգրաֆով, որը կտեղադրվի Գորիսի բժշկական կենտրոնում, – ներկաներին իրազեկեց առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը:

Երկու հիվանդանոցի միաձուլումով կրճատումներ չեն եղել: Կենտրոնի առողջության առաջնային պահպանման ծառայությունները տեղավորվել են նախկին պոլիկլինիկայի շենքի երեք հարկում, իսկ այս բժշկական կենտրոնում միաժամանակ ստացիոնար բուժում կստանա 45 հոգի. այդքան մահճակալ է նախատեսված:

Մեկ տարուց քիչ ավելի ժամանակ պահանջվեց «Մեղրու ճանապարհների շինարարության եւ շահագործման ձեռնարկություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության շինարարներից, որ կառույցը շահագործման հանձնեն: Իսկ կենտրոնի շինարարությանը ձեռնամուխ եղան 2014-ի դեկտեմբերին՝ ենթակապալառուի կարգավիճակով: Շինարարությունը սկսել էր «Պառեքս-գազ» ընկերությունը 2013-ին, կառույցի հստակ վերջնաժամկետ էր նշված, եւ շինարարության ընթացքը հսկվում էր հանրապետության ղեկավարության կողմից: Աշխատանքային մի այցի ժամանակ հանրապետության նախագահը եղել էր կառույցի շինարարությունում, հետաքրքրվել գործերի ընթացքով:

«Ժամկետը կարճ էր, խնդիրները՝ շատ, պատասխանատվությունը՝ մեծ, բայց Սյունիքի մարզպետի առաջարկով ստանձնեցի գործը, առողջապահության նախարարության ծրագրերի իրականացման գրասենյակի միջնորդությամբ շարունակեցի շինարարությունը: Եվ մարզպետարանը, եւ ծրագրերի իրականացման գրասենյակը մինչեւ վերջ կանգնեցին իմ կողքին, ինչի շնորհիվ կարողացա ավարտել շինարարությունը: Ֆինանսական եւ այլ բնույթի խնդիրներ ծագեցին կառուցման ընթացքում, բայց, փառք Աստծո, ամեն ինչ հարթվեց», – պատմում է ընկերության տնօրեն Ազատ Գասպարյանը: Նրա փոխանցմամբ՝ իր կենսագրության մեջ բժշկական կենտրոնը բացառիկ կառույց էր, բնականաբար, լրացուցիչ ուժեր էլ էին ներգրավվել շինարարության մեջ, ճանապարհաշինության հետ առնչություն չունեցող՝ ծեփագործներ, պատշարներ, ատաղձագործներ, մեխանիզատորներ, միայն կենտրոնի շինարարությունում 70-80 մարդ էր աշխատում:

«Այնպես ստացվեց, որ անցյալ ձմռանը ստանձնեցինք հիվանդանոցի շինարարությունը եւ այս ձմռանն էլ ավարտին հասցրինք, որակի հետ կապված խնդիրներ չունեցանք, քանի որ բետոնի բաղադրության մեջ հավելանյութեր օգտագործեցինք: Լուրջ ուշադրություն էինք դարձնում վիրահատարանների, ծնարանի վրա, նաեւ նորության հետ շփվեցինք, ռենտգեն կաբինետի ծեփի մեջ օգտագործեցինք բարիտ կոչվող նյութը, որ ռադիոակտիվությունը մեկուսացնող հատկություն ունի, – մանրամասնում է մեր զրուցակիցն ու ավելացնում, – **կառույցն ընդունվեց 2015-ի հոկտեմբերին, բայց որոշակի թերություններ շտկելու հետ կապված ժամկետը երկարաձգվեց, ինչը պայմանավորված էր սարքավորումների տեղադրումով, եւ ամենակարեւորը՝ հիվանդանոցի ծածկը շատ ամուր է կառուցված, ջրահեռացմանն էլ (խոսքը տարածքի մասին է, խմբ.) շատ ճիշտ լուծում է տրված»:**

...«Հայրենիք ստեղծելը հերոսություն է, հայրենիք շենացնելը՝ առաքինություն»: Վազգեն Առաջին կաթողիկոսի ձեւակերպումն է: Հայրենիք ստեղծեցինք: Քառորդ դարով է չափվում մեր նորանկախ պետության ճանապարհը: Մեր երկիրը դեռեւս շենացնելու շատ կարիք ունի: Բայց լավ է, որ կան մարդիկ, ովքեր իրենց գործով նպաստում են երկրի շենացմանը, որոնցից մեկն Ազատ Գասպարյանն է: Ծննդավայրն Ապարանի շրջանի Արագած գյուղն է, որտեղ միջնակարգ կրթություն է ստացել: Երեւանի Կարլ Մաքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի «Ավտոմոբիլային ճանապարհներ» բաժինն ավարտելուց հետո գործուղվել է Մեղրի, աշխատել ճանապարհաշինարարական վարչությունում նախ՝ վարպետ, հետո՝ աշխողեկ, արտադրության բաժնի ճարտարագետ, արտադրության բաժնի պետ, վարչության փոխտնօրեն, 1996 թվականի մայիսից՝ տնօրեն: Երբ ստանձնեց կոլեկտիվի ղեկավարությունը, իր խոսքով՝ ասֆալտի գործարանից կմախքն էր մնացել, բետոնի հանգույցի մասին խոսք լինել չէր կարող: Ոչ միայն ոտքի կանգնեցրեց արտադրությունը, այլեւ ահա երկու տասնամյակ ոչ միայն նոր ճանապարհներ է կառուցում, այլեւ բարեկարգ ու նորոգ է պահում եղածը՝ բարեխղճությամբ տանելով տարածաշրջանի ճանապարհների ձմեռային եւ ամառային սպասարկման գործը: 2001 թվականին նրան շնորհվել է Մեղրի քաղաքի պատվավոր քաղաքացու կոչում:

Ազատ Գասպարյանը գործի մարդ է եւ շարունակում է իր ուղին:

Իսկ անելիքներ շատ կան 2016-ին: Թեպետ բոլոր խաղաքարտերը չի բացում, դեռ մրցույթներ պիտի լինեն, բայց, այնուամենայնիվ, մեկ-երկուսը թվարկում է. **«Նախատեսվում է կամուրջ կառուցել N2 միջպետական ճանապարհի երկու գետի միախառնման տեղում: Նախկին կամուրջը վթարային էր, շրջադարձի շառավիղը՝ շատ փոքր, հատկապես ձմռանը դժվար էր մեքենան կառավարելը»,** – նշում է մեր զրուցակիցը: Այս տարում ավարտին կհասցվի Ագարակի գնդի զորանոցի շինարարությունը, Ագարակի եւ Մեղրու դպրոցների նորոգումները կշարունակվեն:

Վերակառուցման աշխատանքներ պիտի կատարեն Քաջարան-Մեղրի ճանապարհի 332 կմ հատվածում: Փլվածք էր առաջացել, անցյալ ձմռանը ճանապարհի անցանելիությունն ապահովելու համար որոշակի աշխատանքներ են կատարվել, այս տարի հիմնովին կավարտեն գործը:

Անցած տարում, բացի բժշկական կենտրոնից, վերակառուցել են Մեղրի-Քաջարան մայրուղու 4,3 կմ ճանապարհահատվածը, հիմնանորոգել, որ ներառում է նաեւ Դիբագի լեռնանցքը: Ընկերության շինարարները նախորդ տարում կատարել են նաեւ Սյունիքի, Գեղարքունիքի եւ Վայոց ձորի մարզերի ճանապարհների նշագծման աշխատանքներ:

Զրույցի ընթացքում մի չափազանց հուսադրող լուր հաղորդեց Ազատ Գասպարյանը: Մայիսից, ամենայն հավանականությամբ, Մեղրու տարածաշրջանից մեկնարկելու է Հյուսիս-Հարավ ճանապարհը: **«Որ սկսվեց, Մեղրու ճանապարհաշինարարների մեծ մասնակցությունը կլինի, այսինքն՝ կունենանք աշխատանքային շա՜տ մեծ ծակատ»,** – ասում է:

> *Բացի ճանապարհաշինությունից եւ քաղաքացիական շինարարությունից՝ Ազատ Գասպարյանն օգնության ձեռք է մեկնում բանակին: Ավազ, խիճ, աղ է հատկացնում, անհրաժեշտության դեպքում տեխնիկա տրամադրում ժամանակավոր ճանապարհներ բացելու համար: Օրինակելի ավտոհավաքական է կառուցել, զորանոց է կառուցում: Եվ խրախուսանքը չուշացավ: Հունվարի 22-ին արժանացել է «Վազգեն Սարգսյան» մեդալի՝ բանակաշինության գործին նպաստելու համար, որ Ագարակում նրան հանձնեց ՀՀ պաշտպանության նախարարության 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանը:*

Այնուամենայնիվ, իրեն գնահատված մարդ զգո՞ւմ է երկարամյա շինարարը: Դրական է պատասխանում հարցին՝ հիմնավորելով նրանով, որ մշտապես աշխատանքի պակաս չի ունեցել ընկերությունը. *«1996 թվականից մինչեւ այսօր ոչ մի տարի չենք կանգնել, մեզ միշտ վստահել են եւ ապահովել աշխատանքային ճակատով: Դա ամենամեծ վարձատրությունն է»:*

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հ.Գ. Երբ նյութը պատրաստվում էր տպագրության, նորակառույց բժշկական կենտրոնի շահագործման առթիվ շնորհավորեցինք նրա տնօրեն Լուսինե Վարդանյանին եւ որոշ տվյալներ ցանկացանք իմանալ նոր բուժհիմնարկի՝ կադրերով ապահովվածության մասին: Նրա փոխանցմամբ՝ այսօրվա դրությամբ կենտրոնում 22 բժիշկ է աշխատում, իսկ ընդհանուր առմամբ ունեն նեղ մասնագիտացումներով բժիշկների՝ ռենտգեն-ռադիոլոգի, բժիշկ-լաբորանտի, վիրահատող գինեկոլոգի, ինչպես նաեւ մեկ ընտանեկան բժշկի կարիք: Կենտրոնում իտալական ռենտգեն սարքավորում կա, որի տեղադրումը եւ կարգաբերումն իտալացի մասնագետն է կատարել, ով, բացի դրանից, տեղացի մասնագետների համար թրեյնինգներ է կազմակերպել: Բացի դրանից բժշկական կենտրոնի մասնագետները մայրաքաղաքի համալսարանական կլինիկայում վերապատրաստում եւ վերամասնագիտացում են անցել՝ բժշկական կենտրոնում տեղադրված նոր տեխնոլոգիաներին տիրապետելու եւ գործնականում կիրառելու համար: ■

ԱՆՎԱՆԻ ԳՈՐԻՍԵՑԻՆԵՐ

²ñÙ»Ý ³Ï Ê³ã³ï ñÛ³Ý՝ մեզ ծանոթ եւ անծանոթ

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



Մոտ քսան տարի (1943-63թթ.) Գորիսի հասարակական-քաղաքական կյանքում վճռորոշ դեր խաղացած անձնավորության՝ Արմենակ Խաչատրյանի մասին ժամանակակիցներս շատ քիչ գիտենք կամ գրեթե չգիտենք: Գորիսի պատմությամբ զբաղվողները չեն հասցրել ըստ պատշաճի ուսումնասիրել խորհրդային դարաշրջանի տեղական լիդերների կյանքն ու գործունեությունը, որոնց թվում է Արմենակ Խաչատրյանը: Դրա համար էլ առ այսօր պարզունակ եւ ոչ ամբողջական պատումներ են շրջանառվում նշանավոր այդ գործիսեցու մասին: Դա են հաստատում նաեւ 2011թ. դեկտեմբերին մայրաքաղաքային մեկ-երկու թերթում նրա 100-ամյակի կապակցությամբ լույս տեսած կցկտուր հոդվածները: Տողերիս հեղինակի մոտ էլ կիսատ-պռատ պատկերացում էր իշխում, քանի դեռ հանգամանալից չէինք ուսումնասիրել նրա անցած ճանապարհը, ինչի համար առիթ եղավ Արմենակ Խաչատրյանի 100-ամյակը: Եվ միայն մանրամասն ուսումնասիրությունից, արխիվային նյութերի քննությունից հետո հանգեցինք հիմնավոր եզրակացության, որ Արմենակ Խաչատրյանը հանրապետության՝ այդ ժամանակների երեւելի դեմքերից էր՝ օժտված կազմակերպչական ունակություններով, մարդկանց առաջնորդելու կարողությամբ: Նա Գորիսի շրջանը ղեկավարեց մեր պատմության դժվարին ժամանակահատվածում՝ հետպատերազմյան վերականգնում, ստալինյան բռնություններ եւ, մասնավորապես, 1949թ. հունիսի 14-ի աքսոր, հայրենադարձ հայերի ընդունում եւ տեղավորում, հետստալինյան ձնհալ, Գորիսի շրջանի սոցիալ-տնտեսական եւ կրթական-մշակութային կյանքի վերակազմակերպում, երկրում իրականացվող ռեֆորմներ ե՛ւ կառավարման, ե՛ւ գյուղատնտեսության ոլորտում: Խիստ հակասական եւ դժվարին ժամանակներում կուսակցական ու պետական գործիչներից քչերին հաջողվեց շրջանցել ծայրահեղությունները, մնալ բարձրության վրա եւ ծանրակշիռ ներդրում ունենալ հայրենի երկրամասի զարգացման գործում: Այդ քչերից էր Արմենակ Խաչատրյանը, թեեւ ժամանակակիցներից շատերի հիշողության մեջ մնաց իբրեւ հակասական կերպար, թեեւ կուսակցական-պետական ակտիվ գործունեությունից հեռացավ 57 տարեկանում:

Կյանքի ուղին

Ծնվել է 1911թ. դեկտեմբերի 29-ին (ըստ որոշ փաստաթղթերի՝ այդ տարվա հոկտեմբերին, մի քանի այլ փաստաթղթերի համաձայն՝ 1912թ.) Գորիսի շրջանի Տեղ գյուղում՝ չքավոր գյուղացու ընտանիքում: Հինգ տարեկան էր (1916թ.), երբ կորցրեց հորը եւ երկու եղբոր հետ մնաց մոր խնամքին: 1920-22թթ. Գորիսի որբանոցում էր. այդպես էր կամեցել մայրը՝ ընտանիքի ծանր վիճակից դրդված: 1922-28թթ. բատրակություն է արել Տեղ գյուղում, այնտեղ էլ ստացել է տարրական կրթություն: Մոր հետ միասին, նյութական ծանր վիճակից ելնելով, 1928-29թթ. բատրակություն է արել Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանի Խնձրիստան (Խնձորեստան կամ Խնզրիստան) գյուղում եւ որոշ չափով թեթեւացրել բազմանդամ ընտանիքի հոգսերը: Այնուհետեւ վերադարձել է հայրենի գյուղ եւ 1929-30թթ. աշխատել գյուղի տարրական դպրոցում՝ տեխնիկական աշխատակից: 1930թ. Տեղ գյուղի սկզբնական կուսակազմակերպության որոշմամբ գործուղվել է սովորելու Գորիսի մանկավարժական տեխնիկումի եռամսյա նախապատրաստական դասընթացներ: Նույն թվականին ընդունվել է տեխնիկումի առաջին կուրս եւ 1932-33 ուստարում ավարտել տեխնիկումի լրիվ դասընթացը: Մանկավարժական տեխնիկումում սովորելու հետ մեկտեղ դասավանդել է Գորիսի առաջին աստիճանի դպրոցում: Տեխնիկումն ավարտելուց հետո աշխատանքի է նշանակվել կոմերիտմիության Գորիսի շրջկոմում՝ նախ որպես պիոներական բաժնի վարիչ, ապա (մոտ մեկ տարի)՝ կոմերիտմիության շրջկոմի քարտուղարի տեղակալ (երկրորդ քարտուղար)՝ մինչեւ 1936թ. (1932-35թթ., միաժամանակ, ՀԼԿԵՄ Գորիսի շրջկոմի պիոներական բյուրոյի նախագահն էր): 1936-37 ուստարում եղել է Շինուհայրի, հաջորդ՝ 1937-38 ուստարում՝ Տեղի դպրոցի տնօրեն: 1938-ին, մանկավարժության բնագավառում դրսեւորած ընդունակությունների համար, նրան աշխատանքի են տեղափոխել Գորիսի շրջանային ժողկրթբաժին՝ դպրոցական տեսուչ. այդ պարտականությունները կատարեց մինչեւ 1941թ. հունիսի 20-ը (միաժամանակ աշխատում էր հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ Գորիսի մանկավարժական ուսումնարանում): Այդ ընթացքում, աշխատանքին զուգահեռ, սովորում է Երեւանի հեռակա մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետում (սովորել է մինչեւ 3-րդ կուրսը):

ՀԿ(բ)Պ կենտկոմի բյուրոյի 1941թ. հունիսի 20-ի որոշմամբ Արմենակ Խաչատրյանը հաստատվում է կուսակցության Գորիսի շրջկոմի ագիտացիայի եւ պրոպագանդայի բաժնի վարիչ:

Արմենակ Խաչատրյանը չմասնակցեց Մեծ հայրենականին: Շրջանի ղեկավարությունը նպատակահարմար գտավ նրա ուժերն օգտագործել թիկունքում, որտեղ նույնպես ուժեղ կազմակերպիչների կարիք էր զգացվում: Որդուն՝ Ռոբերտ Ալեքսանյանին, ծանոթ չէր հոր անձնական գործում կատարված այս գրառումը՝ «Պիտանի է ոչ շարային ծառայության համար»: Ըստ նրա՝ Արմենակ Խաչատրյանն օրական 16-18 ժամ աշխատող մարդ էր եւ առողջական խնդիր չուներ այդ ժամանակ, պարզապես ղեկավարությունն էր հարմար գտել, որ նա մնա շրջանում ու մասնակցի թիկունքի աշխատանքների կազմակերպմանը: Նույնիսկ մի քանի անգամ դիմում է գրել ռազմաճակատ մեկնելու համար, սակայն մերժել են:

Մինչ այդ՝ 1929թ. ընդունվել էր կոմերիտմիության, 1939թ.՝ Համամիութենական կոմունիստական (բոլշեւիկյան) պարտիայի (կուսակցության) շարքերը: 1930 թվականից կոմերիտմիության շրջկոմի անդամ էր, 1932-40թթ.՝ նույն շրջկոմի բյուրոյի անդամ:

Հայաստանի կոմկուսի Գորիսի շրջկոմի պլենումը 1943թ. հունիսի 26-ին Արմենակ Խաչատրյանին ընտրում է շրջկոմի երկրորդ քարտուղար, այդ պաշտոնում վերընտրվում է 1945թ. փետրվարի 11-ին:

Կուսշրջկոմի երկրորդ քարտուղարի պաշտոնում միաժամանակ խմբագրում է շրջանային «Ստալինյան դրոշով» թերթը:

1947թ. օգոստոսի 5-ին 36-ամյա Արմենակ Խաչատրյանն ընտրվում է կուսակցության Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար: Երեք օր անց այդ որոշումը հաստատվում է ՀԿ(բ)Պ կենտկոմի բյուրոյում, որը նախագահում էր կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը: Կուսշրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնում անընդմեջ ընտրվում է երեք անգամ՝ 1948թ. հոկտեմբերի 30-ին, 1950թ. փետրվարի 9-ին, 1952թ. հունվարի 30-ին: Սակայն, ինչ-ինչ զարգացումների արդյունքում, վերջին ընտրությունից մի քանի ամիս անց՝ 1952թ. ապրիլի 22-23-ին, շրջկոմի պլենումում, որին մասնակցում էր կուսակցության կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը, Արմենակ Խաչատրյանն ազատվում է Գորիսի կուսակցական կազմակերպության ղեկավարի պաշտոնից (շրջկոմի աղմկահարույց այդ պլենումի մասին ավելի հանգամանալից՝ սույն հրապարակման մեջ): Պլենումը կուսշրջկոմի բյուրոյի կազմից հանում է Գորիսի շրջխորհրդի գործկոմի նախագահ Պատվական Հարությունյանին: Մի քանի օր անց կուսակցության Երեւանի օկրուգային կոմիտեն (օկրուգկոմի քարտուղար՝ Անտոն Քոչինյան) Պատվական Հարությունյանին ազատում է նաեւ աշխատավորների դեպուտատների Գորիսի շրջխորհրդի գործկոմի նախագահի պարտականությունից: Գորիսի շրջխորհրդի գործկոմի նախագահ է հաստատվում (օկրուգկոմի նույն օրվա որոշմամբ) Արմենակ Խաչատրյանը: Կադրային այս փոփոխությունը վերջնականապես հաստատվում է 1952թ. մայիսի 15-ին ՀԿ(բ)Պ կենտկոմի բյուրոյի նիստում: Սակայն Արմենակ Խաչատրյանը երկար չի մնում շրջխորհրդի գործկոմում եւ 1952թ. սեպտեմբերի 1-ին գործուղվում է սովորելու կենտկոմին կից եռամյա կուսակցական դպրոց (ունկնդիր), որի լրիվ դասընթացը դեռեւս չավարտած՝ 1955-ին, կրկին ընտրվում է Գորիսի շրջխորհրդի գործկոմի նախագահ (կուսակցական դպրոցում սովորելու ժամանակ նա կատարել է նաեւ դպրոցի կուսբյուրոյի քարտուղարի պարտականությունները): Գորիսի շրջխորհրդի գործկոմի նախագահի պաշտոնում երկրորդ անգամ ընտրվելը վավերացվում է ՀԿ(բ)Պ կենտկոմի 1955թ.

էջ 6

ԱՆՎԱՆԻ ԳՈՐԻՍԵՑԻՆԵՐ

²ñÙ»Ý ³ Ï Ê ³ã³ ï ñÛ³Ý՝

մեզ ծանոթ եւ անծանոթ

էջ 5

մարտի 28-ի նիստում (այդ ժամանակ կուսկենտկոմի առաջին քարտուղարը Սուրեն Թովմասյանն էր): Այս անգամ նա Գորիսի շրջխորհրդի գործկոմի նախագահ աշխատեց մինչեւ 1957թ. հունվարը: Արմենակ Խաչատրյանը Գորիսի շրջխորհրդի գործկոմի նախագահի պաշտոնում փոխարինեց Արմենակ Մայսուրյանին (վերջինիս հարցը քննարկման առարկա էր դարձել այն բանից հետո, երբ «Սովետական Հայաստան» թերթը, Արամ Ասատրյան լրագրողի ստորագրությամբ (ծագումով Խանածախից), հոդված էր հրապարակել Գորիսի զբոսայգում մի քանի ծառ հատելու մասին՝ «Բարդիների բարեկամը» վերտառությամբ): 1957թ. հունվարի 29-ին ՀԿՊ կենտկոմի բյուրոն Արմենակ Խաչատրյանին վերստին հաստատում է կուսակցության Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար (նախօրյակին այդ պաշտոնում ընտրվել էր շրջկոմի պլենումում, որտեղ եւ ազատվել էր շրջխորհրդի գործկոմի նախագահի պարտականությունից): Շրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնում նա փոխարինում է Հակոբ Մխիթարի Մելոյանին, ով 1952թ. ապրիլյան հայտնի պլենումում այդ պաշտոնում փոխարինել էր իրեն, իսկ մինչ այդ Սիսիանի շրջխորհրդի գործկոմի նախագահն էր:

Չորս տարի անց՝ 1961թ. փետրվարի 24-ին, կենտրոնական կոմիտեի բյուրոն Արմենակ Խաչատրյանին (կենտկոմի առաջին քարտուղար՝ Յակով Զարոբյան) ազատում է կուսշրջկոմի առաջին քարտուղարի պարտականություններից եւ հաստատում կուսակցության Սիսիանի շրջկոմի առաջին քարտուղար: Սիսիանի կուսշրջկոմի պլենումը նրան առաջին քարտուղար էր ընտրել փետրվարի 18-ին: Նախկին առաջին քարտուղարը՝ Մհեր Սիմոնի Մելքոնյանը, կոմկուսի կենտկոմի քարտուղար ընտրվելու կապակցությամբ, ազատվել էր շրջկոմի առաջին քարտուղարի պարտականությունից:

Մոտ մեկ տարի անց երկրում տեղի է ունենում կառավարման համակարգի բարեփոխում: Ստեղծվում են կոլտնտեսային-սովխոզային տարածքային արտադրական վարչություններ: Ստեղծվում է նաեւ Զանգեզուրի արտադրական վարչությունը՝ Գորիսի, Կապանի, Սիսիանի շրջանների տնտեսությունների կառավարման համար: Այդ վարչության պետի պաշտոնը վստահվում է Արմենակ Խաչատրյանին: Կուսկենտկոմի բյուրոն 1962թ. մարտի 30-ին նրան հաստատում է այդ պաշտոնում եւ ազատում Սիսիանի շրջկոմի առաջին քարտուղարի պարտականությունից: Կենտկոմի բյուրոյի նույն որոշմամբ արտադրական վարչության կուսակցական կազմակերպիչ է նշանակվում Քրիստափոր Պետրոսյանը: Վարչության պետի պաշտոնում Արմենակ Խաչատրյանը վերահաստատվեց 1962թ. դեկտեմբերի 25-ին՝ կուսկենտկոմի նախագահության նիստում: Այդ պաշտոնում, սակայն, մնում է մինչեւ 1963թ. հուլիսի 26-ը: Այդ օրը կենտկոմի նախագահության որոշմամբ (կենտկոմի առաջին քարտուղար՝ Յակով Զարոբյան) Արմենակ Խաչատրյանն ազատվեց վարչության պետի պարտականությունից: Ըստ պաշտոնական արձանագրության՝ նա աշխատանքից ազատվեց ՀՍՍՌ գյուղմթերքների արտադրության եւ մթերումների մինիստրության առաջարկությամբ՝ առաջացած առողջական խնդիրների պատճառով ու նրա անձնական դիմումի համաձայն: Կենտկոմի նախագահությունը հանձնարարում է Մինիստրների խորհրդին առընթեր անհատական թոշակների հարցով հանձնաժողովին՝ քննարկել նրան հանրապետական նշանակության թոշակ նշանակելու հարցը: Հանձնարարվում է նաեւ ՀՍՍՌ առողջապահության նախարարությանը՝ «Ընկեր Արմենակ Խաչատրյանին՝ նախարարության IV վարչության միջոցով ցույց տալ անհրաժեշտ բժշկական օգնություն»: Ըստ այդ որոշման, փաստորեն, Արմենակ Խաչատրյանը, ով ընդամենը 52 տարեկան էր, 1963թ. հուլիսի 26-ից հեռանում է աշխատանքային ակտիվ գործունեությունից:

Արդյո՞ք Արմենակ Խաչատրյանի պաշտոնանկության պատճառն առողջական խնդիրներն էին, ինչպես արձանագրված է կենտկոմի նախագահության որոշման մեջ, թե՞… Այդ կապակցությամբ ահա թե ինչ է ասում նրա որդին՝ Ռոբերտ Ալեքսանյանը. *«Հայրս, հիվանդության երրորդ օրը, եղբոր եւ կնոջ հետ քննարկեց իր հետագա պաշտոնավարման հարցը: Եվ անսպասելիորեն ասաց՝ «Տեսնում եմ, որ ինձ երկար բուժում է սպասվում, ես թույլ չեմ տա, որ աշխատանքը տուժի իմ պատճառով»: Այս զրույցի արդյունքում էլ ծնվեց հրաժարականի դիմումը: Դրանից հետո կենտկոմի կազմբաժնի վարիչը եկավ Գորիս եւ այցելեց հորս: Նա համոզում էր՝ հետ վերցրեք դիմումը, կապաքինվեք եւ կվերադառնաք աշխատանքի: Հայրս կտրականապես մերժեց առաջարկը եւ խնդրեց քննարկել իր դիմումը: Հետագայում կենտկոմի քարտուղարն էլ հեռախոսազրույց ունեցավ հորս հետ՝ առաջարկելով հետ վերցնել դիմումը, բայց նա իր որոշման մեջ մնաց հաստատուն»:*

Արմենակ Խաչատրյանը երեք անգամ ընտրվել է ՀՍՍՌ Գերագույն սովետի դեպուտատ՝ 1951թ. փետրվարի 25-ին (երրորդ գումարում, Տաթեւի N166 ընտրական օկրուգ), 1956թ. մարտի 15-ին (հինգերորդ գումարում, Շինուհայրի N185 ընտրական օկրուգ) եւ 1963թ. մարտի 17-ին (վեցերորդ գումարում, Շինուհայրի N198 ընտրական օկրուգ):

Քանիցս ընտրվել է Հայաստանի կոմկուսի կենտկոմի կազմում՝ 1951թ. մարտի 22-ին (15-րդ համագումար, կենտկոմի անդամության թեկնածու), 1958թ. հունվարի 27-ին (19-րդ համագումար, կենտկոմի անդամ), 1960թ. փետրվարի 12-ին (21-րդ համագումար, կենտկոմի անդամ), 1961թ. սեպտեմբերի 23-ին (20-րդ համագումար, կենտկոմի անդամ):

Կյանքի վերջին տարիներին աշխատում էր հանրապետության ավտոտրանսպորտի մինիստրության կադրերի բաժնի պետ:

Արմենակ Խաչատրյանը վախճանվում է 1969թ. մարտի 10-ին: Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանի եւ հանրապետության մյուս ղեկավարների կողմից ստորագրված մահախոսականում («Սովետական Հայաստան» օրաթերթ, 12.03.1969թ.) նշված է. *«Կարճատեւ հիվանդությունից հետո, 58 տարեկան հասակում վախճանվեց մեր հանրապետության կուսակցական ու սովետական ապարատի հնագույն եւ ճանաչված գործիչ Արմենակ Ալեքսանի Խաչատրյանը: ...Որտեղ էլ որ աշխատել է Արմենակ Խաչատրյանը, իրեն դրսեւորել է որպես հմուտ, փորձված, նախաձեռնող ու սկզբունքային կուսակցական աշխատող, ամենուրեք վայելել է աշխատավորության եւ կուսակցական ակտիվի սերն ու հարգանքը»:* Արմենակ Խաչատրյանի թաղման համար ստեղծվում է կառավարական հանձնաժողով՝ Բաբկեն Սարկիսովի նախագահությամբ: Մարտի 12-ին Արմենակ Խաչատրյանի աճյունը դրվում է Տեխնիկայի տանը (Բարեկամություն փողոց, N14): Նույն օրը տեղի է ունենում հուղարկավորությունը, հողին է հանձնվում Երեւանի քաղաքային պանթեոնում:

Գորիսը Արմենակ Խաչատրյանի ղեկավարման տարիներին

Թերթային մեկ հոդվածով, անշուշտ, դժվար է սպառիչ խոսք ասել մեզ հետաքրքրող այս հարցի վերաբերյալ, քանի որ խոսքը մոտ երկու տասնամյակ ընդգրկող ժամանակաշրջանի մասին է: Ոչ սովորական այդ ժամանակներում՝ 1943-63թթ., Արմենակ Խաչատրյանը Գորիսի կառավարման ղեկին էր՝ կուսշրջկոմի երկրորդ քարտուղար, շրջխորհրդի գործկոմի նախագահ, կուսշրջկոմի առաջին քարտուղար, կոլտնտեսային-սովխոզային տարածքային արտադրական վարչության պետ: Եվ շրջանում իրականացվող ծրագրերին (ե՛ւ մեծամասշտաբ, ե՛ւ փոքրածավալ), ուզենք-չուզենք, ուղղակիորեն առնչվում էր շրջանի ղեկավարությունը: Հաճախ այդ ծրագրերը ծնվում էին տեղի ղեկավարության նախաձեռնությամբ:

Մեր պատմության դժվարին այդ ժամանակաշրջանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, բոլոր խոչընդոտներով հանդերձ, Գորիսի շրջանում նշված տարիներին արձանագրվեցին լուրջ տեղաշարժեր, որոնց մեջ, կրկնում ենք, որոշակի դեր խաղաց շրջանի ղեկավարությունը եւ, իհարկե, Արմենակ Խաչատրյանը: Բոլոր հիմքերն ունենք ասելու, որ հետպատերազմյան տարիները Գորիսի շրջանում ստեղծագործական աշխատանքի, զարգացման տարիներ էին:

Մեծ հայրենականի օրերին՝ 1943-ից սկսած, Արմենակ Խաչատրյանը կուսշրջկոմի երկրորդ քարտուղար էր: Իսկ այդ ժամանակ ամեն ինչ արվում էր հաղթանակի համար: Եվ Գորիսի շրջանը, կարելի է ասել, իր ներուժը լիովին ծառայեցրեց պատերազմող երկրի ամուր թիկունքի կազմակերպմանը: Դրա վկայությունն է Պաշտպանության պետական կոմիտեի նախագահի հեռագիրը Գորիսի շրջանի աշխատավորներին: Ահավասիկ՝ *«Գորիս, Հայաստանի Կ(բ)Պ Գորիսի շրջկոմի քարտուղար ընկեր Լ.Սարգսյանին. իմ եղբայրական ողջույնը եւ կարմիր բանակի շնորհակալությունը հաղորդեցեք Գորիսի շրջանի աշխատավորներին, որոնք 755 հազար ռուբլի հավաքել են տանկեր եւ ինքնաթիռներ կառուցելու համար, կարմիր բանակի ֆոնդին հանձնել են 12 հազար փութ ցորեն եւ ճակատայիններին ուղարկել նվերներ ու տաք հագուստ: Ի.Վ.Ստալին»* («Ստալինյան դրոշով», 1943թ., N163): Համաձայն չենք վերջին տարիներին շրջանառվող կարծիքին, որ Ստալինի նմանատիպ հեռագրերը սովորական շաբլոնի արտահայտություն էին: Գորիսի պարագայում, օրինակ, նման գնահատանքի համար լուրջ հիմքեր կային գյուղատնտեսության բնագավառում: 1945 թվականին, 1940թ. համեմատությամբ, հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունն ավելացավ 1044հա-ով, ծխախոտի ցանքատարածությունը՝ 2.4, կարտոֆիլինը՝ 10, բանջարաբոստանային մշակաբույսերինը՝ 3.5 անգամ: Նույն ժամանակամիջոցում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն ավելացավ 1433-ով, ոչխարներինն ու այծերինը՝ 18714-ով, խոզերինը՝ 630-ով… Գյուղաշխատանքների այդ վերելքը շարունակվեց նաեւ հետագա տարիներին: Շրջանում զարգացան խաղողագործությունը, շերամապահությունը, մեղվաբուծությունը, խոզաբուծությունն ու թռչնաբուծությունը:

Արմենակ Խաչատրյանի ղեկավարման տարիներին հիմնովին փոխվեց Գորիս քաղաքը: Բոլոր հիմքերն ունենք նրան համարելու արդյունաբերական Գորիսի հիմնադիրը: 1960-ին շրջանի համախառն արտադրանքի 23%-ն արդեն արդյունաբերությունն էր զբաղեցնում: 1948 թվականին կոճակի նախկին գործարանի տեղում հիմնադրվեց Գորիսի արդյունաբերության առաջնեկը՝ տրիկոտաժի ֆաբրիկան. սկզբնական շրջանում աշխատում էր 17, 1960-ականներին՝ 470 բանվոր: 1960թ. շարք մտավ եւ առաջին արտադրանքը տվեց փոքր էլեկտրաշարժիչների գործարանը: 1946թ. Գորիսում կառուցվեց մեխանիկական գործարանը, որը սկզբնական շրջանում արտադրում էր մահճակալներ, ավելի ուշ՝ նաեւ կենցաղային իրեր: 1962-ին այն վերանվանվեց ավտովերանորոգման գործարան: 1944-ին վերագործարկվեց գարեջրի գործարանը: 1955թ. կարի, կոշիկի, սայլաշինական արտելների բազայի վրա ստեղծվեց տեղական արդյունաբերության կոմբինատը, որը զբաղվում էր նաեւ բնակչության կենցաղային սպասարկման հարցերով:

Արդյունաբերական Գորիսի ստեղծման համար անհրաժեշտ էր, նախեւառաջ, էներգետիկ հիմքի ստեղծում: 1948թ. սկսվեց Ակներհէկի շինարարությունը: Առաջին հերթը շահագործման հանձնվեց 1949թ. նոյեմբերի 28-ին: 1953-ին շահագործման հանձնվեց Ակներհէկի երկրորդ հերթը: Սկզբնական շրջանում երկու էլեկտրակայանը միասին ունեին 800կվտ հզորություն, ինչի շնորհիվ լուսավորվեցին նաեւ շրջանի մի քանի գյուղեր: Արմենակ Խաչատրյանն առնչություն ունի նաեւ Տաթեւհէկի կառուցմանը: Այդ մասին՝ մի փոքր ավելի ուշ:

Տեղի ունեցող փոփոխությունները հնարավոր չէր պատկերացնել առանց լայնածավալ շինարարական աշխատանքների: 1953թ. ստեղծվեց N1 շինվարչությունը, որն ամենահին էր Գորիսում: 1962թ. Գորիսում ստեղծվեց «Հայհիդրոէներգոշինի» Տաթեւ հիդրոկայանի շինարարական վարչությունը: 1957թ. N3 եւ N770 ճանապարհաշինական տեղամասերը միավորվեցին եւ դարձան N5 ճանապարհային շահագործման տեղամաս, որը կատարում էր Զաբուղ-Գորիս եւ Բիչանակի լեռնանցքի ճանապարհաշինական աշխատանքները: Միեւնույն ժամանակ այդ տեղամասին հանձնարարվեց Գորիս-Սիսիան եւ Գորիս-Ղափան միութենական ու հանրապետական նշանակության ճանապարհների շահագործումը: ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1959թ. հունվարի 20-ի որոշմամբ տեղական ճանապարհների շինաշխատանքներին պետք է մասնակցեին նաեւ կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները, արդյունաբերական ձեռնարկությունները ու մյուս կազմակերպությունները, ինչի արդյունքում ճանապարհաշինությունը թափ առավ նաեւ շրջանի գյուղերում, ընդարձակվեց տեղական ճանապարհների ցանցը:

Լուրջ փոփոխություններ կատարվեցին Գորիսի բնակչության առեւտրական սպասարկման գործում:

1955թ. Գորիսում ստեղծվեց տաքսի ավտոմեքենաների առաջին հավաքակայանը, որը սպասարկում էր շրջանի բնակչության ներքաղաքային ու միջշրջանային ուղեւորությունները:

Ընդարձակվեց դպրոցների, մանկապարտեզների, առողջապահական հաստատությունների ցանցը: 1956թ. բացվեց քաղաքային ծննդատունը, 1957-ին՝ տուբդիսպանսերը:

1948թ. նոյեմբերի 29-ին Գորիսում հանդիսավորապես բացվեց գավառագիտական թանգարանը: Այդ մասին ՀԽՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում էր ընդունել դեռեւս 1946թ. սեպտեմբերի 14-ին: Թանգարանում տեղ գտան Զանգեզուրի բոլոր շրջաններին առնչվող ազգագրական, հնագիտական մեծ արժեք ներկայացնող նյութեր:

1950-ականներին սկսեցին ասֆալտապատել Գորիս քաղաքի փողոցները:

Այդ տարիներին վերելք ապրեց Գորիսի պետական թատրոնը: 1950-ականներին թատրոնում հայտնվեցին մի շարք հանրահայտ եւ երիտասարդ դերասաններ: 1961-ին, սակայն, թատրոնն ինչ-ինչ պատճառներով փակվեց:

1958թ. Գորիսում շահագործման հանձնվեց «Զանգեզուր» կինոթատրոնի շենքը:

Բոլոր այդ աշխատանքների հետ մեկտեղ Գորիսի կուսակցական կազմակերպությունը պետք է իր հավատարմությունն ու նվիրվածությունն արտահայտեր ժողովուրդների մեծ առաջնորդին՝ Իոսիֆ Ստալինին: Նվիրվածության եւ հավատարմության դրսեւորումներից մեկը (եթե ոչ առաջինը) նրա հուշարձանը բնակավայրերում կանգնեցնելն էր: Միայն 1948-ին Ստալինի արձաններ կանգնեցվեցին շրջանի Տեղ, Վերիշեն, Յայջի (Հարժիս), Խանածախ, Խնձորեսկ, Տաթեւ, Քարահունջ, Շուռնուխ գյուղերում:

Ինչպես արդեն նշեցինք, Արմենակ Խաչատրյանն առնչություն ուներ նաեւ Տաթեւհէկի կառուցմանը: Մեծ հայրենականի ավարտից հետո եւ հատկապես 1950-ականներին հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացումն առաջ էր բերել Որոտան գետի հիդրոէներգետիկ ռեսուրսներն օգտագործելու անհրաժեշտությունը: 1950-ականների երկրորդ կեսին այդ հարցն արդեն օրակարգում էր: Դա պայմանավորված էր նաեւ Հայաստանի կոմկուսի այդ օրերի առաջնորդ Սուրեն Թովմասյանի քաղաքականությամբ ու դիրքորոշմամբ: …1958թ. գարնանը Գորիս են այցելում ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Թովմասյանը, Հայաստանի կառավարության նախագահ Անտոն Քոչինյանը, Հայէներգոշինի վարչության պետ Սուրեն Վարդանյանը, նախագծող ինժեներներ: Բարձրաստիճան հյուրերին ուղեկցում եւ քննարկումներին ակտիվ մաս-

ԱՆՎԱՆԻ ԳՈՐԻՍԵՑԻՆԵՐ

Ճակցություն է ունենում կուսակցության Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար Արմենակ Խաչատրյանը: Այդ այցելության ընթացքում վերջնական որոշում կայացվեց Շահվերդլարում (ներկայումս՝ Որոտան) Որոտան գետի վրա հիդրոկայան կառուցելու մասին: Դրան հաջորդում է նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստումը, որն էլ ավարտվում է 1958-ին: Հենց այդ թվականին էլ մեկնարկեցին Զանգեզուր աշխարհի դարի կառույցի աշխատանքները: Իհարկե, մոտ տասը տարի պահանջվեց ծրագիրն իրագործելու համար: Սակայն Տաթեւիէկի կառուցումը երեք հիդրոկայանի կառուցում չէր սոսկ, թեեւ դրանց կառուցման արդյունքում ենթադրվում էր ստանալ հանրապետությունում արտադրվող հինդրոէլեկտրաէներգիայի մոտ 50 տոկոսը: Տաթեւիէկի կառուցումը Զանգեզուրի, մասնավորապես Գորիսի շրջանի, սոցիալ-տնտեսական վերափոխման աննախադեպ ու դարակազմիկ ծրագիր էր: Դա առայսօր չգերազանցված ծրագիր էր հիդրոէներգետիկայի արտադրության, ոռոգման համակարգերի կառուցման, գյուղատնտեսական նշանակության հողերի ջրարբիացման ոլորտում: Տաթեւիէկի նախագծային աշխատանքների սկզբնավորումից եւ բուն աշխատանքների մեկնարկից հետո՝ մոտ երեք տարի, շրջանի ղեկավարն Արմենակ Խաչատրյանն էր: Ճակատագրի կամոք հենց նրա ղեկավարման շրջանում մեկնարկի հանգրվան հասավ այդ ծրագիրը, որի նախաձեռնողն ականավոր կուսակցական, պետական գործիչ, դիվանագետ, ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար (1953-60թթ.), մեծ սյունեցի Սուրեն Թովմասյանն էր (1910-80թթ.), ում անվերապահ վստահությունն էր վայելում Արմենակ Խաչատրյանը:

գ. Տեղ

Գորիս, Մաշտոցի 24 բնակարանը, որտեղ բնակվում էր Արմենակ Խաչատրյանը

Հայրենադարձությունը

Հետպատերազմյան Գորիսը բախվեց հայրենադարձության խնդրին: Դեռեւս 1946-ին Գորիսն ընդունեց հայրենադարձների առաջին խմբին: Օգոստոսի 10-ին Գորիս քաղաքում տեղի ունեցավ հանդիսավոր միտինգ, որի ընթացքում կուսշրջկոմի առաջին քարտուղար Լեւոն Սարգսյանը ողջունեց ավելի քան հազար հայրենադարձի: Հայրենադարձների հոսքը շարունակվեց դրանից հետո եւ մինչեւ 1950թ. (որոշ տեղեկություններով այդ ընթացքում Գորիսն ընդունեց եւս երկու հազար մարդ):

Հայրենադարձների ընդունումը, նրանց համար ապրելու նվազագույն պայմանների ստեղծումը Գորիսի իշխանությունների ուշադրության կենտրոնում էին: Կուսշրջկոմի պլենումներում, ակտիվի ժողովներում ու խորհրդակցություններում հաճախ էին քննարկվում հայրենադարձությանն առնչվող հարցեր: Մեկ օրինակ՝ 1948թ. փետրվարին շրջխորհրդի գործկոմում տեղի ունեցավ խորհրդակցություն՝ կուսշրջկոմի առաջին քարտուղար Արմենակ Խաչատրյանի մասնակցությամբ: Գորիսի քաղխորհրդի գործկոմի նախագահ Վ.Սարգսյանը եւ մյուս ելույթ ունեցողները նշեցին, որ հայրենադարձների համար ստեղծվել են կյանքի ու աշխատանքի նորմալ պայմաններ, նրանց տրամադրվել են անհրաժեշտ տնային իրեր, ժամանակին հատկացվել է վառելափայտ: Արմենակ Խաչատրյանը, այդուհանդերձ, մատնանշեց մի շարք լուրջ թերություններ՝ հայրենադարձների կուլտուր-կենցաղային պայմաններում: Խիստ քննադատության ենթարկվեցին գորգագործական արտելի, շերամկայանի, կոշիկի արտելի, սննդկոմբինատի ղեկավարները, ովքեր անտարբեր են գտնվել հայրենադարձների ընտանիքների նվազագույն պահանջների բավարարման հարցում:

Հայրենադարձների հետ կապված հարցերի լուծումը, այդ ամենով հանդերձ, շարունակվեց մինչեւ 1958թ. եւ հետո: Հայրենադարձների մի մասը տնատեղ եւ տնամերձ հողամաս ստացավ Ըղջիյազի-Ավանգարդ թաղամասում միայն 1958-ին: Իսկ ավելի վաղ՝ 1947-50թթ. ձեւավորվեց Տախտակներ թաղամասը (1952-ին այդ թաղամասում արդեն 130 տուն կար): Իրանահայերի կողմից տներ կառուցելով ձեւավորվեց Քոլին տակ թաղամասը: Տուն կառուցող հայրենադարձներին տալիս էին 32 հազար ռուբլու չափով վարկ: Հայրենադարձների մի մասը բաժանվեց ըստ գյուղերի:

Հայրենադարձների ինտեգրման սկզբնական շրջանը տեւեց մոտ 10-12 տարի: Այդ ընթացքում շրջանը ղեկավարում էին Լեւոն Սարգսյանը, Արմենակ Խաչատրյանը, Հակոբ Մելոյանը եւ նորից Արմենակ Խաչատրյանը:

Չնայած ձեռնարկվող միջոցառումներին, հայրենադարձների ինտեգրումն ընթանում էր դժվար հունով: Վերջին հաշվով նրանց 70 տոկոսն այդպես էլ չինտեգրվեց Գորիսյան իրականությանը: Հատկապես շրջանի գյուղերում ոչ ոք (գրեթե) չմնաց: Մարդիկ տեղափոխվում էին Արարատյան դաշտ, թեեւ տեղական բնակչության, տեղական իշխանությունների հետ հարաբերություններում ստեղծվել էր փոխվստահության մթնոլորտ: Չինտեգրվելու համար կային պատճառներ՝ լեզվահոգեբանական, կենցաղային դժվարություններ, հուսախաբություն (շատերին ի սկզբանե խոստացել էին բնակեցնել Արարատյան դաշտում, ինչը չէր ստացվել): Կային կրոնական զգացմունքների դրսեւորման դժվարություններ: Բազմաթիվ հայրենադարձներ մեղադրվեցին տարբեր քրեական գործերում: 1948-49թթ. բռնությունները չշրջանցեցին նաեւ հայրենադարձներին:

Արմենակ Խաչատրյանը՝ Սիսիանի կուսշրջկոմի առաջին քարտուղար

Արմենակ Խաչատրյանի կենսագրության մեջ որոշակի տեղ է զբաղեցնում Սիսիանը: 1961թ. փետրվարի 18-ին Սիսիանի կուսշրջկոմի առաջին քարտուղար Միհր Մելքոնյանն ազատվում է իր պարտականությունից՝ Հայաստանի կոմկուսի կենտկոմի քարտուղար ընտրվելու կապակցությամբ: Սիսիանի կուսշրջկոմի պլենումը նույն օրն Արմենակ Խաչատրյանին մտցնում է այդ շրջկոմի կազմի մեջ եւ ընտրում շրջկոմի բյուրոյի անդամ ու շրջկոմի առաջին քարտուղար:

Նրա սիսիանյան գործունեության մասին մեզ պատմեց Շչորս Դավթյանը: Ահավասիկ. *«Ես այդ ժամանակ կոմերիտմիության Սիսիանի շրջկոմի առաջին քարտուղարն էի: Նրա մոտեցումների, վերլուծությունների հիման վրա հասկացանք, որ այդ ժամանակ Սիսիանում բազում խնդիրներ կան. ոչ արդյունաբերությունն էր մի լավ վիճակում, ոչ՝ գյուղատնտեսությունը: Այդ ժամանակ սկսվում էր հէկերի շինարարությունը: Երբ ամբողջապես ծանոթացավ Սիսիանին, 25 էջից բաղկացած մի նամակ գրեց կուսակցության կենտկոմ եւ շարադրեց այն խնդիրները, որոնք պետք է լուծվեին՝ Սիսիանը ոտքի կանգնեցնելու համար: Սիսիանի գյուղատնտեսության դժվարություններից մեկն այն էր, որ յոթ կոլտնտեսության նախագահ (եթե չեմ սխալվում)՝ հերոսի կոչում ունեին եւ իրենց ամենագետ էին համարում ու գրեթե անկառավարելի էին դարձել: Արմենակ Խաչատրյանը բախվեց այդ իրողությանը եւ նրանց տեղը դրեց: Նրանք (երկուսից բացի) պաշտոնանկ արվեցին, փոխարենը կոլտնտեսությունների ղեկավարներ նշանակվեցին բարձրագույն կրթությամբ գյուղմասնագետներ: Արմենակ Խաչատրյանը զարմանալի աշխատասեր մարդ էր, աշխատում էր ամբողջ օրը: Չկար մի բնագավառ, որ աչքաթող աներ: Կարելի է ասել՝ Սիսիանի քաղաքային տնտեսության հիմքերն էլ ինքը դրեց: Մինչ այդ Սիսիանի շրջկոմի բոլոր քարտուղարները մեծամասամբ գյուղատնտեսական մտածելակերպ ունեին, նրանց Սիսիան քաղաքը քիչ էր հետաքրքրում: Իսկ ինքն այլ կերպ էր մտածում՝ Սիսիանը պետք է ունենա նորմալ, բարեկարգ շրջկենտրոն: Շուտով, սակայն, երկրում տեղի ունեցավ կառավարման ռեֆորմ, ստեղծվեցին կոլտնտեսային-սովխոզային տարածքային արտադրական վարչությունները, ինքն էլ նշանակվեց Զանգեզուրի կոլտնտեսային-սովխոզային արտադրական վարչության պետ: Մի խոսքով՝ թեկուզ աշխատեց մոտ մեկ տարի, բայց նկատելի հետք թողեց Սիսիանում: Եթե ժամանակն ավելի շատ լիներ, նա իր ծրագրերը, համոզված եմ, կյանքի կկոչեր: Բազմաթիվ հարցերում ընդօրինակման արժանի էր, ինքը սովորական մարդ չէր, այն ժամանակների իսկական կերտվածք ուներ: Իր պարտականությունները կատարելիս ոչինչ*

էջ 8

ԱՆՎԱՆԻ ԳՈՐԻՍԵՑԻՆԵՐ

²ñÙ»Ý ³Ï Ê³ã³ï ñÛ³Ý՝ մեզ ծանոթ եւ անծանոթ

էջ 7

չէր խնայում, նույնիսկ՝ առողջությունը: Նորից եմ ասում՝ եթե շրջկոմները մնային, ու նա մնար Սիսիանի քարտուղար, ապա Սիսիանը շատ կշահեր, լուրջ փոփոխություններ էին սպասվում Սիսիանին, սիսիանցիները հավատ ունեին նրա հանդեպ:

…Կուսակցության գործին նվիրված անձնավորություն. այս արտահայտությունը, կարծեք, հենց նրա համար է ասված»:

Քաղաքական բռնությունները եւ կուսշրջկոմի քարտուղարի դերակատարությունը

Ճակատագրի կամոք Արմենակ Խաչատրյանին էր վիճակված Գորիսի կառավարումը 1948-49թթ. քաղաքական բռնաճնշումների ժամանակ: Թե որքան մարդ է այդ ժամանակ աքսորվել Գորիսի շրջանից՝ չենք կարող ասել: Թեման շրջանի կտրվածքով դեռեւս պատշաճ ուսումնասիրված չէ: Միայն մի քանի տեղեկություններ են պահպանվել որոշ գյուղերից աքսորվածների քանակի վերաբերյալ՝ Տաթեւ՝ 10 ընտանիք, Ակներ՝ 12 ընտանիք, Խնձորեսկ՝ մի քանի տասնյակ ընտանիք, Տեղ՝ 8 ընտանիք, Քարաշեն՝ 2 ընտանիք, Քարահունջ՝ 1 ընտանիք, Շինուհայր՝ ոչ մի ընտանիք… Ամենաշատ աքսորականները (Խնձորեսկից հետո) Յայջի գյուղից էին՝ 70 մարդ (12 ընտանիք):

Սերգեյ Հախվերդյանը «Գորիսի ամփոփ պատմության» մեջ (էջ 356) նշում է. *«…Աքսորը եղել է երկու ալիքով: Նախ՝ ձերբակալվեցին եւ Գորիսի բանտ ուղարկվեցին որոշ նախկին գերիներ, նախկինում դատված որոշ հանցագործներ՝ առանց ընտանիքների: 1948թ. սկզբներին կալանավորվածներին բանտից հանեցին, նստեցրին «ՋԻՍ-5» մակնիշի երկու ավտոմեքենա եւ տարան Երեւան, այնտեղից էլ՝ աքսորավայր, ասում են՝ Թաթարիա՝ տեղի նավթահանքերը յուրացնելու»:*

Աքսորի երկրորդ ալիքը կազմակերպվեց 1949թ. հունիսի 14-ին: Ինչպես գրում է Գրիշա Սմբատյանը *«Հազարավոր հայեր աքսորվեցին Ալթայի երկրամաս» վերտառությամբ հոդվածում («Այսօրվա երկիր», 10 հունիսի 2008թ.)՝ «1949թ. հունիսի 11-ին ՀԿ(բ)Պ կենտկոմում հրավիրվում է գաղտնի խորհրդակցություն, որին մասնակցում էին շրջկոմների եւ քաղկոմների առաջին քարտուղարներ, պետական անվտանգության եւ ներքին գործերի պատասխանատու աշխատողները: ՀԿ(բ)Պ կենտկոմի քարտուղար Գրիգոր Հարությունյանը ներկայացրեց ԽՍՀՄ կառավարության որոշումը՝ հանրապետության անբարեհույս տարրերին Ալթայ եւ հեռավոր այլ շրջաններ աքսորելու վերաբերյալ»:* Նույն այդ խորհրդակցությունում պետանվտանգության նախարարը ներկաներին հայտնեց, որ կազմվել են արտաքսման ենթակա ընտանիքների ցուցակները, ներկայացրեց գործողության մանրամասները: Եվ այդ ամենը ներկայացվեց այնպես, թե արվում է պետության եւ ժողովրդի շահերից ելնելով:

Նույն բովանդակությամբ գաղտնի խորհրդակցություն տեղի ունեցավ հունիսի 13-ի երեկոյան Գորիսում՝ Երեւանի ներկայացուցչի մասնակցությամբ: Օպերացիան իրականացնելու համար կցումներ արվեցին ըստ գյուղերի:

Այդ գիշեր Գորիս մուտք գործեց զինվորական ավտոշարասյուն եւ զինվորների մի խումբ՝ ինչ-որ գնդապետի գլխավորությամբ: Ավտոշարասյունը եւ զինվորականները հանգրվանեցին քաղաքի նախկին ֆուտբոլի դաշտում: Օպերացիայի պատասխանատուն պետական անվտանգության մարմինն էր: Ծրագիրն այսպիսին էր. Գորիսի մոտակա երկաթուղային կայարանը Կապանն է, եւ առավոտյան ժամը 7-ին զինվորական շարասյունը (շրջանի բոլոր բնակավայրերում աքսորվող ընտանիքի անդամներին հավաքելուց հետո) պետք է ճանապարհվեր Կապան, որտեղից էլ՝ բեռնատար վագոններով՝ նշված ուղղությամբ: Դիմադրության դեպքում զինվորականներն իրավունք ունեին կրակ բացել: Նման մի դեպք արձանագրվեց Յայջի (Հարժիս) գյուղում՝ շինծու պատրվակով:

Հնարավո՞ր էր, որ կուսշրջկոմի առաջին քարտուղարն այդ ընթացքում այլ կարծիք հայտներ կամ փորձեր վերանայել աքսորյալների ցուցակը: Անշուշտ, նման վիճակ դժվար է պատկերացնել: Եթե անգամ առաջին քարտուղարն այլ կարծիք հայտներ, ապա, նախ, իրավիճակը դրանով չէր փոխվի, իսկ ինքը, ի վերջո, կհայտնվեր աքսորվողների շարքում: Գրիշա Սմբատյանի կարծիքով, ով բավականին հանգամանալից ուսումնասիրել է 1949թ. հունիսի 14-ի աքսորի պատմությունը, կուսշրջկոմի առաջին քարտուղարը վճռորոշ դեր չէր կարող խաղալ այդ օպերացիայում: Լավագույն դեպքում նա կարող էր մի քանի ընտանիք ցուցակից հանել: Համանման կարծիք հայտնեց Շչորս Դավթյանը. *«Նա, անշուշտ, չէր կարող վճռորոշ դեր խաղալ այդ հարցում, միգուցեեւ կարողանար որոշ մարդկանց ցուցակներից հանել (եւ հավանաբար արել է): Դա պետական մի միջոցառում էր, որին մասնակցում էին կոլտնտեսությունների նախագահները, սկզբնական կուսկազմակերպությունների քարտուղարները, գյուղխորհուրդների նախագահները: Աքսորվողների ցուցակները կազմելիս, իհարկե, նաեւ այդ մարդկանց անձնական մոտիվները կարող էին դեր խաղալ: Իսկ բոլորին հակադրվել՝ Արմենակ Խաչատրյանը չէր կարող»:* Ուրեմն՝ աքսորի ենթակա ընտանիքների ցուցակները կազմում էին տեղերում՝ առնվազն գյուղի «տրոյկայի»՝ գյուղապետի, կուսքարտուղարի եւ կոլտնտեսության նախագահի մասնակցությամբ կամ նախաձեռնությամբ: Շատ հաճախ աքսորյալների ցուցակում հայտնվում էին տեղական իշխանների անձնական հակառակորդները կամ տեղական իշխաններին անհաճո մարդիկ: Մի խոսքով՝ գլխավորը, ինչպես մեր օրերում, անձնական շարժառիթներն էին, իսկ պետական շահն ու պետական անվտանգությունը միայն վարագույր էին: Այդ ցուցակները, բնականաբար, չէին կարող վերջնական տեսք ստանալ առանց կուսշրջկոմի: Ստեղծված ծանր իրավիճակում, ինչպես բազմաթիվ ժամանակակիցներ են վկայում, կուսշրջկոմի առաջին քարտուղար Արմենակ Խաչատրյանն արել է հնարավորը՝ որոշ ընտանիքների աքսորվողների ցուցակից հանելու համար: Հայտնի է 1949թ. հունիսի 14-ին Սերո Խանզադյանի մորը, երկու քրոջն աքսորելու պատմությունը: Հայտնի է նաեւ, որ Սերո Խանզադյանը կարողացել է նրանց հետ բերել աքսորի ճանապարհից: Դժվարին այդ պահին Արմենակ Խաչատրյանը նրա հետ էր:

Արմենակ Խաչատրյանի՝ այդ օրերի գործունեության մասին հավելյալ տեղեկություն տվեց նրա որդին՝ Ռոբերտ Ալեքսանյանը. *«Որքանով գիտեմ՝ կուսշրջկոմի առաջին քարտուղարներին իրավունք էր վերապահված շատ քիչ չափով վերանայել աքսորվողների ցուցակները: Աքսորին նախորդող օրը, հիշում եմ, ռուս գնդապետ էր եկել մեր տուն եւ հորս հետ քննարկում էր աքսորվողների ցուցակների հարցը: Վեճ տեղի ունեցավ մեր տանը, երկար բանավիճեցին: Հայրս ամեն ինչ անում էր, որ ավելի շատ ընտանիքներ հանվեն այդ ցուցակներից: Ինչ-որ բան, բարեբախտաբար, ստացվեց, բայց…»:*

Կա նաեւ մեկ ուրիշ հանգամանք՝ ժողովրդի հիշողությունը: Ե՛ւ Գորիսում, ե՛ւ գյուղերում տարեցները, որոնց հետ զրուցեցինք այդ թեմայի շուրջ, Արմենակ Խաչատրյանի բացասական ու ծայրահեղության հասնող գործողություններ չէին հիշում: Բազմաթիվ օրինակներ կան, երբ կուսշրջկոմի առաջին քարտուղարը մարդկանց փրկում էր աքսորի ճանապարհից:

Կուսակցության Գորիսի շրջկոմի ապրիլյան (1952թ.) պլենումը

ՀԿ(բ)Պ Գորիսի շրջկոմի ապրիլյան պլենումը (22-23 ապրիլի 1952թ.) Արմենակ Խաչատրյանի կյանքի, նաեւ Գորիսի շրջանի պատմության ուշագրավ դրվագներից է: Կուսակցական այդ միջոցառմանը մասնակցում էին նաեւ ՀԿ(բ)Պ կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը, ՀԿ(բ) Պ Երեւանի օկրուգկոմի քարտուղար Անտոն Քոչինյանը:

Մինչ այդ կենտկոմի բյուրոն քննարկել էր Գորիսի շրջկոմի հաշվետվությունը եւ արձանագրել բազմաթիվ թերություններ ու բացթողումներ: Հենց այդ առիթով ընդունված որոշման քննարկմանն էլ նվիրված էր կուսշրջկոմի արտահերթ պլենումը: Անտոն Քոչինյանի զեկուցումից հետո տեղի ունեցավ մտքերի փոխանակություն: Ելույթ ունեցան Ա.Սուջոյանը (Քարաշենի կոլվարչության նախագահ), Ա.Բաղդասարյանը (Խնձորեսկի կոլվարչության նախագահ), Ա.Բարսեղյանը (կուսշրջկոմի պրոպագանդայի եւ ագիտացիայի բաժնի վարիչ), Գ.Հարությունյանը (Հալիձորի կուսկազմակերպության քարտուղար), Ա.Մելքումյանը (Տեղի կուսկազմակերպության քարտուղար), Գ.Փարսյանը (Խոզնավարի կուսկազմակերպության քարտուղար), Գ.Բաղդասարյանը (Խանաձախի կոլվարչության նախագահ), Ս.Գրիգորյանը (Հին Գորիսի կոլվարչության նախագահ), Ա.Ծատրյանը (Գորիսի կուսշրջկոմի քարտուղար), Լ.Իսախանյանը (ՄՏԿ-ի տնօրենի՝ քաղգծով տեղակալ), Ս.Աղաջանյանը (ՊԱՄ-ի Գորիսի բաժանմունքի պետ), Մ.Գրիգորյանը (Բայանդուրի կուսկազմակերպության քարտուղար), Ա.Հարությունյանը (Գորիսի ԼԿԵՄ շրջկոմի քարտուղար), Պ.Հարությունյանը (շրջսովետի գործկոմի նախագահ), Հ.Օհանյանը (ՄՏԿ-ի տնօրեն), Ռ.Գալստյանը (շրջխորհրդի գործկոմի գյուղբաժնի վարիչ), Ա.Վարդանյանը (Տանձատափի կոլվարչության նախագահ), Ա.Մայսուրյանը (կուսակցության Գորիսի շրջկոմի քարտուղար), Ա.Խաչատրյանը (կուսշրջկոմի առաջին քարտուղար), Գ.Հարությունյանը (կուսկենտկոմի առաջին քարտուղար): Ելույթներից մի քանիսի բովանդակությանը դեռ կանդրադառնանք: Մինչ այդ կուզենայինք ներկայացնել Արմենակ Խաչատրյանի եւ Գրիգոր Հարությունյանի ելույթների որոշ հատվածներ:

Արմենակ Խաչատրյան. *«Այն մեծ վստահությունը, որ կար իմ հանդեպ, այսպիսի արդյունք չպետք է ունենար: Կենտկոմի որոշումները միանգամայն ճիշտ են եւ ինձ հնարավորություն էին տվել այդ թերությունները վերացնել: Մենք չկարողացանք մոբիլիզացնել ակտիվը՝ նշված թերությունները վերացնելու համար: Մթերատվության եւ բերքատվության ցածր լինելու պատճառը եղել է այն, որ ամեն մեկի նկատմամբ չէ, որ պահանջկոտ ենք եղել: Արժեր, որ կենտկոմի որոշմամբ վերանայվեր մեր ղեկավարությունը: Մենք միայն ասել ենք, խոսել ենք, իսկ կատարման մասին քիչ ենք մտածել: Վերջին ստուգումները ցույց տվեցին, որ շատ թերություններ ունենք: Աղաղակող թերությունների մասին մեզ տեղյակ չի պահել հաշվապահ հրահանգիչը: Գյուղբաժնի աշխատողներն իրենց դիրքերում չեն եղել: Տեղի կոլտնտեսությանը կցված են եղել ընկերներ Ա.Շեգունցը, Ա.Մայսուրյանը եւ Մելքումյանը: Մինչեւ այսօր որեւէ ահազանգ չի եղել այդ գյուղում ստեղծված վիճակի մասին: Որոշ հարցեր իմ օրոք առաջ է քաշել միայն չարաբաստիկ Ս.Բարխուդարյանը: 1935-37 թվականներից տներ են կառուցում… Մենք պետք է պարտիայից հեռացնեինք նրանց ու դատի տայինք: Մենք չենք հասկանում պետական պլանի կատարման անհրաժեշտությունը: Մենք դիմադրում ենք շատ անասնակերի կուտակմանը: Անասնապահությունը զարգացնելու համար ունենք բոլոր հնարավորությունները: Խնձորեսկի նախագահն արգելք է հանդիսանում նոր ծառերի տնկմանը: Մենք խիստ քննադատել ենք ընկեր Պ.Հարությունյանին, ով ճկուն չի աշխատել: Մենք ունեինք բոլոր հնարավորությունները, որպեսզի կատարեինք պարտիայի դիրեկտիվները, բայց չկատարեցինք»:*

Ներկաները, բնականաբար, երկու օր շարունակ սպասում էին ՀԿ(բ) Պ կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի ելույթին: Ահա եւ նրա ելույթի սղագրությունը. *«Չնայած ցանկություն չունեի ելույթ ունենալ, բայց լսելով ընկերների խոսքը, ուզում եմ կանգ առնել մի քանի հարցի վրա՝ պարզաբանման կարգով: Հիմնական թերությունը, որ տեղ է գտել Գորիսի պարտիական կազմակերպությունում, ներպարտիական աշխատանքն է: Ինչպես շրջկոմը, նույնպես եւ սկզբնական պարտկազմակերպություններն անբավարար պայքար են տարել պարտիայի դիրեկտիվները ներպարտիական եւ քաղաքական աշխատանքի բնագավառներում լրիվ կատարելու համար: Մոտիկից չեն գլխավորվել շրջանի կոլխոզները եւ թույլ պայքար է տարվել դրանք կազմակերպորեն ու տնտեսապես ամրապնդելու ուղղությամբ, ինչի հետեւանքով վերջին տարիներին գյուղատնտեսությունը շրջանում վերելք չի ապրել: Ելույթ ունեցողներից մի քանի ընկերներ գտնում են, որ տնտեսությունը չի զարգանում ոչ ճիշտ պլանավորման հետեւանքով, իսկ մի մասն էլ գտնում է, որ պետք է կրճատել անասունների գլխաքանակը: Անասնապահության բնագավառում մոնդոլական, քոչվոր կյանքից անցել ենք կուլտուրական անասնապահության: Եվ այդքանից հետո հարց դնել անասունների գլխաքանակի կրճատման համար… Դա կլինի խելագարություն: Մենք հողային տարածքները չենք կարող ավելացնել, պետք է զարգացնել դրանց բերքատվությունը: Հարկավոր է վերցնել մատիտ եւ թուղթ ու պլանավորել, այլ ոչ թե պլանի կրճատման խնդիր դնել: Մի շարք կոլվարչությունների նախագահներ հանդես եկան ոչ թե որպես կոլխոզի նախագահներ, այլ՝ անհատական տնտեսատերեր: Ակտիվը ճիշտ չի պատկերացնում մեր տնտեսության հեռանկարները, իսկ դրա գլխավոր մեղքը ղեկավարներինն է: Հաջորդը, որի վրա ուզում եմ կանգ առնել, կադրերի հետ տարվող աշխատանքն է: Շրջկոմն անբավարար է աշխատել կադրերի դաստիարակության ոլորտում: Շրջկոմի թերությունն այն է, որ մարդկանց թերությունները չեն խփել նրանց երեսին: Նրանց տույժ է տրվել ուշացումով: Կոմունիստներից շատերը պետության հաշվին տուն են կառուցել, գռփել են պետության գումարները, սակայն, շրջկոմի բյուրոն եւ անձամբ ընկեր Խաչատրյանը չեն զբաղվել նրանց հարցով, հովանավորել են Տեղ գյուղացիներին: Ծուխն առանց կրակ չի լինում: Տեղ գյուղի կոլվարչության նախագահին շատ մեծ արտոնություններ է տրվել, ոչ ոք իրավունք չի ունեցել նրան քննադատել: Մենք հարգում ենք արժանավոր պարտիականներին, անցյալի համար շնորհակալություն հայտնում, բայց եթե ներկայումս չեն կատարում պարտիայի եւ կառավարության որոշումները, ապա դրա համար խփում ենք նրանց: Շրջկոմի բյուրոն ինչի՞ հիման վրա է Տեղ գյուղի կոլվարչության նախագահին մինչեւ հիմա պահել պարտիայի մեջ: Երեւի նրա համար, որ շե՞նք է կառուցում կոլխոզի հաշվին: Շատ կոլխոզնիկների էլ ձրի կարգով աշխատեցրել է իր շենքի վրա: Սկզբնական պարտկազմակերպությունների դերը նսեմացվել է, նրանք հանդես չեն եկել ահազանգողի դերում, նրանք մերվել են կոլխոզնախագահների հետ: Քիչ էր մնում, որ շրջկոմը վերացներ սկզբնական պարտկազմակերպությունները: Վատ է նաեւ քննադատությունը, այն եղել է միակողմանի, քննադատությունը եղել է վերեւից, ներքեւի ձայնը չի լսվել: Վատ է աշխատել շրջսովետի գործկոմը, այն չի գլխավորել աշխատանքները, չի ղեկավարել իր բաժինները, որի համար էլ անհրաժեշտ է առաջին հերթին կադրերով ամրապնդել ռայկոմն ու շրջսովետը»:*

Ապրիլի 23-ին պլենումն ընդունում է ծավալուն բանաձեւ՝ ուղղված ՀԿ(բ)Պ կենտկոմի բյուրոյի 1952թ. ապրիլի 1-ի որոշումից բխող խնդիրների կատարմանը: Պլենումը խնդիր է դնում քննարկել մի շարք ղեկավարների՝ կուսակցությունից հեռացնելու հարցը: Պլենումը որոշ ղեկավարների գործունեությունը՝ իրենց հնարավորություններից վեր մասնավոր բնակարանաշինությամբ զբաղվելու եւ պետական միջոցները հափշտակելու, շռայլելու համար, գնահատում է իբրեւ հակապետական, մանրբուրժուական արարք: Պլենումի օրակարգ է մտցվում (ընթացքում) եւս երկու հարց. ՀԿ(բ)Պ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղարի մասին եւ շրջկոմի բյուրոյի կազմի վերանայման մասին: Երկու հարցի վերաբերյալ զեկուցում է Անտոն Քոչինյանը: Պլենումը որոշում է՝ *«ՀԿ(բ)Պ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղարի պար-*

ԱՆՎԱՆԻ ԳՈՐԻՍԵՑԻՆԵՐ

տականությունից ազատել ընկեր Արմենակ Խաչատրյանին: ՀԿ(բ)Պ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար ընտրել ընկեր Հակոբ Մելոյանին»: Շրջկոմի բյուրոյի կազմից հանվում են Պատվական Հարութունյանը եւ Արշակ Շեգունցը: Շրջկոմի բյուրոյի նոր անդամներ են ընտրվում Հակոբ Մելոյանը եւ Լեւոն Իսախանյանը:

Շրջկոմի պլենումն անցավ այդ ժամանակներին բնորոշ ոճով: Ելույթ ունեցողները նախ հավանություն էին տալիս կենտկոմի 1952թ. ապրիլի 1-ի որոշմանը, ապա քննադատում Գորիսի շրջկոմին, շրջխորհրդի գործկոմին, դրանց ղեկավարներին եւ, իհարկե, Արմենակ Խաչատրյանին: Որոշ ելույթներ հասնում էին ծայրահեղության: Պրոպագանդայի եւ ագիտացիայի բաժնի վարիչ Ա.Բարսեղյանը, օրինակ, նշեց, որ «Ժողկրթբաժնի վարիչ Բարխուդարյանը կենակցել է բազմապիսի կանանց հետ: Նա իր կաբինետը դարձրել է կաշառակերության եւ այլասերման օջախ»: Տեղ գյուղի կուսկազմակերպության քարտուղար Ա.Մելքումյանը խոսում է իրենց կոլվարչության նախագահի եւ պահեստապետի կողմից թույլ տրված վատնման փաստերի մասին: Հետաքրքիր է նկատել, որ այդ մթնոլորտում, այնուամենայնիվ, գտնվում են մարդիկ, ովքեր համարձակվում են պաշտպանել Արմենակ Խաչատրյանին: Նրանք էին՝ շրջխորհրդի գործկոմի նախագահ Պատվական Հարությունյանը, ԼԿԵՄ շրջկոմի առաջին քարտուղար Արամ Հարությունյանը, Հալիձորի կուսկազմակերպության քարտուղար Գերասիմ Հարությունյանը: Պատվական Հարությունյանը մատնանշված թերությունները վերագրում է շրջխորհրդին ու իրեն: Նա համարձակվում է Գրիգոր Հարությունյանին ասել, որ առկա արոտավայրերի պայմաններում նախատեսված անասնագլխաքանակը շատ է եւ հնարավոր չէ պահել: Գերասիմ Հարությունյանը նշում է, որ ստեղծված իրավիճակի մեղավորը միայն Արմենակ Խաչատրյանը չէ, բայց ամեն ինչ բարդվում է նրա վրա: Գերասիմ Հարությունյանը քննադատության թիրախ է դարձնում շրջանի դատախազին. *«Գողերին հովանավորում է շրջդատախազ ընկեր Պարոնյանը, գողին բաց է թողնում, իսկ նրա բռնողներին պատժի ենթարկում»:* Արամ Հարությունյանն ավելի կտրուկ է արտահայտվում. *«Մատնանշված բոլոր թերությունները վերաբերվում են բյուրոյի բոլոր անդամներին, ովքեր վատ են աշխատել, եւ ոչ թե ընկեր Խաչատրյանին»:*

Կառավարման բարեփոխումները

1960-ականների սկզբին երկրում տեղի ունեցան իրադարձություններ, որոնց կենտրոնում՝ արդեն Սյունիքի մասշտաբով, հայտնվեց Արմենակ Խաչատրյանը: 1962թ. մարտին ԽՄԿԿ կենտկոմը քննարկեց գյուղատնտեսության ղեկավարումը բարելավելու խնդիրը: Մեկ ամիս անց՝ 1962-ի ապրիլին, այդ հարցը քննարկեց Հայաստանի կոմկուսի կենտկոմի պլենումը: Որոշվեց ստեղծել կոլտնտեսային-սովխոզային տարածքային արտադրական 11 վարչություն, յուրաքանչյուրը՝ երկու-հինգ շրջանի համար: Մի քանի ամիս անց՝ 1962-ի նոյեմբերին, ԽՄԿԿ կենտկոմի հերթական պլենումը որոշեց կուսակցական բոլոր ղեկավար մարմինները վարից վեր վերակառուցել արտադրական սկզբունքով: Գյուղական շրջկոմների փոխարեն ստեղծվեցին կոլտնտեսային-սովխոզային տարածքային արտադրական վարչությունների կուսակցական կոմիտեներ: Այդ որոշումների հիման վրա արմատապես փոխվեց նաեւ Սյունիքի շրջանների կառավարման կերպը: Նախ՝ Սյունիքի մարզի ներկայիս տարածքում ստեղծվեց արդյունաբերական-արտադրական (զոնալ) կուսակցական կոմիտե՝ Ղափան նստավայրով: Կոլտնտեսային-սովխոզային տարածքային արտադրական 11 վարչությունից մեկը ստեղծվեց Սյունիքում (կոչվում էր Զանգեզուրի կոլտնտեսային-սովխոզային տարածքային արտադրական վարչություն՝ Գորիս նստավայրով): Վարչության պետ նշանակվեց Արմենակ Խաչատրյանը, վարչության կուսկոմիտեի քարտուղար՝ Քրիստափոր Պետրոսյանը: Զանգեզուրի տարածքային արտադրական վարչության մեջ մտնում էին Գորիսի, Կապանի , Սիսիանի շրջանները: Մեղրին չէր ընդգրկվել Զանգեզուրի վարչության կողմից սպասարկվող տարածքի մեջ: Ժամանակակիցները վկայում են, որ Արմենակ Խաչատրյանն այդ պաշտոնում մեծ ջանքեր էր գործադրում, ամեն ինչ անում էր տարածքային կառավարման նորաստեղծ այդ մարմնի հստակ աշխատանքն ապահովելու համար: Արտադրական վարչության կոմերիտական կազմակերպիչ Մարտին Մայսուրյանն ասում է. *«Վարչության աշխատակազմը՝ Արմենակ Խաչատրյանի գլխավորությամբ, աշխատում էր գիշեր-ցերեկ: Ինչ վերաբերում է Արմենակ Խաչատրյանին... Այդպիսի աշխատող չեմ տեսել երբեւէ»:* Այդուհանդերձ՝ միշտ չէ, որ արտադրական վարչության գործունեությունը դրական արդյունք էր տալիս: Եվ ահա այս պայմաններում՝ 1963թ. հուլիսին հիվանդանում է Արմենակ Խաչատրյանը: Ըստ երեւույթին նրա հանկարծական հիվանդացումը (ուղեղի կաթված) ծանր եւ լարված աշխատանքի հետեւանք էր: Հուլիսի 26-ին բավարարվում է նրա խնդրանքը եւ նա ազատվում է զբաղեցրած պաշտոնից:

Կյանքը մինչ այդ ցույց էր տվել նաեւ, որ գյուղատնտեսության կառավարման բարելավման ուղղությամբ իրականացված բարեփոխումը ոչ միայն կենսունակ չգտնվեց, այլեւ ջլատեց գյուղատնտեսության ներուժը: Սյունիքում կարծում էին նաեւ, որ մեկ արտադրական վարչությունը չի կարող արդյունավետ կառավարել ամբողջ տարածաշրջանի գյուղատնտեսությունը: Ուստի եւ Զանգեզուրի կոլտնտեսային-սովխոզային տարածքային արտադրական վարչությունը, Արմենակ Խաչատրյանի հրաժարականից մոտ մեկ ամիս առաջ՝ 1963թ. հունիսին, վերակազմակերպվեց: Սիսիանի տարածքն առանձնացվեց, որի հիման վրա ստեղծվեց առանձին կոլտնտեսային-սովխոզային տարածքային արտադրական վարչություն (ղեկավար նշանակվեց Գառնիկ Խաչատրյանը): Գորիսի ու Կապանի շրջանները մնացին մեկ առանձին վարչության մեջ, որի ղեկավար (Արմենակ Խաչատրյանի հրաժարականից հետո) նշանակվեց Սերյոժա Օհանջանյանը՝ Կապանի Դավիթբեկ գյուղից, ով ավելի ուշ՝ 1973-83թթ. Կապանի շրջխորհրդի գործկոմի նախագահն էր:

1964թ. մարտի 11-12-ին տեղի ունեցած ՀԿԿ կենտկոմի պլենումում քննադատվեց նաեւ Գորիսի ու Սիսիանի արտադրական վարչությունների աշխատանքը՝ շրջանառության մեջ գտնվող վարելահողերի մի մասը խոպանի վերածելու համար:

Գյուղվարչությունների չկայացման իրողությունը, ըստ էության, բնորոշ էր ամբողջ երկրին ու հանրապետությանը: Այդ իսկ պատճառով 1964թ. նոյեմբերին ԽՄԿԿ կենտկոմի, ապա՝ ՀԿԿ կենտկոմի պլենումները նպատակահարմար գտան վերացնել կոլտնտեսային-սովխոզային տարածքային արտադրական վարչությունները, վերականգնել կուսակցության շրջկոմները (կառավարման նախկին եղանակը համարվեց սխալ եւ վնասակար): Վերացվեցին նաեւ գյուղական շրջաններում ստեղծված արդյունաբերական-արտադրական (զոնալ) կուսակցական կոմիտեները: 1964-ի վերջին արդեն վերականգնված էին կուսակցության շրջանային կոմիտեները: Հանրապետությունում ստեղծվեց 33 շրջան՝ կուսշրջկոմներով, այդ թվում չորսը՝ Սյունիքում (Կապան, Գորիս, Սիսիան, Մեղրի): Գորիսի կուսշրջկոմի առաջին քարտուղար դարձավ Քրիստափոր Պետրոսյանը (1961-62թթ. նույնպես եղել էր Գորիսի կուսշրջկոմի առաջին քարտուղար), ով Գորիսի շրջանը ղեկավարեց մինչեւ 1974թ.:

Արմենակ Խաչատրյանի կինը՝ Աշխեն Շահնազարյանը

Արմենակ Խաչատրյանի եղբայրը՝ Հովհաննես Խաչատրյանը (Մանուչը)

Արմենակ Խաչատրյանի ավագ որդին՝ Ռոբերտ Ալեքսանյանը

Արմենակ Խաչատրյանի ավագ որդին՝ կուսակցության Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանը, 1989թ. ապրիլի 30-ին Գորիս-Սիսիան սահմանագլխին դիմավորում է երջանկահիշատակ Վազգեն Ա կաթողիկոսին

Գերդաստանը

Տեղ գյուղի գերդաստաններից մեկն էր՝ 20-րդ դարասկզբին բնորոշ սոցիալական-տնտեսական հոգսերով: Գերդաստանի ավագը՝ Ալեքսանը, ընտանիքի կարիքները հոգալու համար գնացել էր Բաքու, բայց ոտքը թողել էր այնտեղ ու վերադարձել հեռակներով՝ «ծոցում ցարական գերբով մի թուղթ», որպեսզի թոշակ ստանա: Բայց 1916-ին մահացավ, եւ ընտանիքի թոշակը կտրեցին: Տան հոգսը ծանրացավ Ալեքսանի տիկնոջ՝ Համասփյուռի եւ Ալեքսանի մոր՝ Ազիի վրա: Նրանք պետք է հոգային չորս որբի՝ Թովմասի, Արմենակի, Շարմաղի եւ հոր մահից մի քանի ամիս անց լույս աշխարհ եկած Հովհաննեսի (Մանուչի) կարիքները:

Ահա այդպիսի սկիզբ ունի Արմենակ Խաչատրյանի ընտանիքը՝ որբություն, սով, աղքատություն, պատը ծռված գյուղական մի խրճիթ: Ժամանակի ընթացքում ընտանիքի հոգսերի մի մասն աստիճանաբար ծանրանում է զավակներից ավագի՝ Արմենակի ուսերին: Համասփյուռ մայրիկը, այնուամենայնիվ, կարողանում է չորս երեխային դպրոց ուղարկել: Գյուղի յոթնամյակն ավարտելուց հետո, ինչպես նշել ենք, Արմենակին ուսման ուղարկեցին Գորիսի մանկավարժական տեխնիկում: Գորիսում էլ՝ 1935 թվականին, ամուսնացավ Աշխեն Շահնազարյանի հետ, ունեցան երեք զավակ՝ Ռոբերտ (1938թ.), Էդիկ (1942թ.), Ժասմենա (1949թ.):

Աշխեն Շահնազարյանը ծնվել է 1916թ. սեպտեմբերի 4-ին Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում: 1924-31թթ. սովորել է Խնձորեսկի յոթնամյա դպրոցում, հետո ընդունվել Գորիսի մանկավարժական տեխնիկումը, որն ավարտել է 1934-ին: Նույն թվականից էլ աշխատել է Գորիսի N1 դպրոցում: Աշխատանքին զուգահեռ՝ 1955-ին, ավարտել է Երեւանի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1960թ. արժանացել է «ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ» բարձր կոչման: 1971-83թթ. աշխատել է Երեւանի N120 դպրոցում, որից հետո անցել է կենսաթոշակի: Մահացել է 2003թ. մայիսին, թաղված է Երեւանի քաղաքային պանթեոնում:

Արմենակի եղբայրը՝ Թովմաս Խաչատրյանը, զոհվեց Մեծ Հայրենականում՝ 1945թ. մայիսի 2-ին, Կալինինգրադի մատույցներում:

Մյուս եղբայրը՝ Հովհաննեսը, ծնվել է 1916թ. հոկտեմբերի 9-ին: Նորածին մանկանը տարօրինակ անուն են տվել՝ Մանուչ: Մինչեւ վերջ էլ այդ անունը կպած մնաց Հովհաննես Խաչատրյանին, այդ անվամբ էլ շատերը ճանաչում էին եւ են նրան: Նա լույս աշխարհ եկավ արդեն հորից զրկված: Գորիսի գյուղտեխնիկումն ավարտելուց հետո 1937թ. զորակոչվեց բանակ: Իրեն ամբողջովին ռազմական գործին նվիրած երիտասարդն առաջին իսկ օրվանից մասնակցեց Հայրենական մեծ պատերազմին՝ դասակի հրամանատարի տեղակալից հասնելով 620-րդ հատուկ պարտիզանական միավորման հրամանատարի, Բելառուսի Բարանովիչի մարզի Նեսվի կուսշրջկոմի առաջին քարտուղարի պաշտոններին: Ընդգրկվելով պարտիզանական շարժման մեջ, ծանրակշիռ ներդրում ունեցավ Բելառուսը ֆաշիստական լծից ազատագրելու գործում եւ արժանացավ այդ երկրի երախտագիտությանը. նրան շնորհ-

էջ 10

ԱՆՎԱՆԻ ԳՈՐԻՍԵՑԻՆԵՐ

²ñÙ»Ý ³Ï Ê³ã³ï ñÛ³Ý՝ մեզ ծանոթ եւ անծանոթ

Գրիգոր Հարությունյան
ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար 1937-53թթ.



Սուրեն Թովմասյան
ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար 1953-60թթ.

Յակով Զարոբյան
ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար 1960-66թթ.

էջ 9

վեց Բելառուսի պատվավոր քաղաքացու կոչում: Պատերազմական տարիների հուշերը, դառնությունները մինչեւ կյանքի վերջ թարմ էին նրա հիշողության մեջ եւ հիմք դարձան իր իսկ հեղինակած «Թշնամու թիկունքում՝ ընդդեմ թշնամու» հուշապատումի, Միքայել Հակոբյանի «Կոմիսարը» վավերագրական վիպակի, գեղարվեստական ու վավերագրական այլ երկերի: Գորիս վերադառնալուց հետո աշխատել է շրջխորհրդի գործկոմի մշակույթի բաժնի վարիչ, Գորիսի մեքենատրակտորային կայանի փոխտնօրեն, կրկին մշակույթի բաժնի վարիչ, «Միկրոշարժիչ» գործարանի փոխտնօրեն, Գորիսի ավտոնորոգման գործարանի տնօրեն, ճանապարհորդությունների եւ էքսկուրսիաների միջշրջանային բյուրոյի տնօրեն: Նրա գործնական, կազմակերպչական, մարդկային արժանիքներն առավել լիարժեք դրսեւորվեցին աշխատավորների դեպուտատների Գորիսի քաղսովետի գործկոմի նախագահի պաշտոնում աշխատելու ընթացքում՝ 1964-70թթ.: Հովհաննես Խաչատրյանի գործունեությունն ըստ արժանվույն է գնահատվել համերկրացիների կողմից: Եղել է Գորիսի շրջանային, քաղաքային խորհուրդների երկու գումարման պատգամավոր, արժանացել է հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրի, պարգեւատրվել է 13 շքանշանով ու մեդալով: Հովհաննես Խաչատրյանի մարտական ուղու մասին տեղեկություններ են պարունակում բելառուսական բազմաթիվ հանրագիտարաններ, դպրոցական դասագրքեր: Հովհաննես Խաչատրյանի կերպարը հիացմունք է պատճառել ժողովրդական ճանաչված երգիչ ու բանաստեղծ Գուսան Աշոտին: Նրա «Լեռները կանչում են» (Երեւան, «Սովետական գրող», 1988թ.) բանաստեղծությունների շարքում տեղ է գտել հետաքրքիր մի ստեղծագործություն՝ «Պարտիզան Մանուչ, կոմիսար Մանուչ»: Ահա մի հատված այդ բանաստեղծությունից.

Քեզ կորյուն ասեմ,
թե՝ լեռանց հսկա,
Հայրենի կանչով ցասման
թուր առար,
Լեռնեցու ոգով ամուր
բերդ դարձար.
Չարքը քո թրով, հրով
մոխրացավ:
Հովն էր լուր բերում,
մոր արցունք ծորում:
Պարտիզան Մանուչ,
կոմիսար Մանուչ:

Հովհաննես Խաչատրյանին վավերագրական մի վիպակ է նվիրել Միքայել Հակոբյանը: «Կոմիսարը» վավերագրական վիպակի («Սովետական գրող», Երեւան-1982) առաջաբանում ահա թե ինչ է գրում հեղինակը. *«Վաղուց գիտեմ նրան, գրքերում եմ հանդիպել ու թերթերում կարդացել: Բայց հետը խոսելու առիթ չեմ ունեցել: Միայն հիմա է, որ նստած եմ կողքին, ու զրուցում ենք: …Եկել եմ, որ մոտիկից ծանոթանամ ու պատմեմ նրա մասին: Հովհաննես Խաչատրյանն է: Գորիսեցի է եւ Գորիսի կենդանի մի մարմնացումը՝ խոսքով, շարժ ու ձեւով, վարվեցողությամբ, իսկ կեցվածքով՝ առավել եւս: Հաղթանդամ է, ամրապինդ, հուժկու ձայնով, նաեւ լիաբերան ծիծաղով: Խոսում էր անցյալից, 35-40 տարի առաջ տեղի ունեցածից: Ամեն ինչ հիշում է այնպես, կարծես երեկ է կատարվել: Եվ այնքան ազատ ու կոլորիտով, որ մնում է միայն գրի առնել: Կենդանի մի պատմություն է Հովհաննես Խաչատրյանը…»:* Հովհաննես Խաչատրյանը վախճանվեց 1993թ. հունվարի 13-ին, կյանքի 77-րդ տարում: Սյունյաց աշխարհի արժանավոր այդ զավակը, գորիսեցիների սիրելի անձնավորությունը վերջին հանգրվանը գտավ հայրենի Տեղ գյուղում:

Արմենակ Խաչատրյանի ավագ որդին՝ Ռոբերտ Ալեքսանյանը դարձավ կուսակցական, պետական ու տնտեսական գործիչ: Ծնվել է 1938թ. հունիսի 5-ին Գորիս քաղաքում: Ավարտել է տեղի Ա.Բակունցի անվան միջնակարգ դպրոցը, Երեւանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը (1961թ.) եւ ԽՄԿԿ կենտկոմին կից բարձրագույն կուսակցական դպրոցը: 1961-64թթ. եղել է Տաթեւհէկի շինարարության ավագ ինժեներ, 1964-68թթ. եղել է Գորիսի գարեջրի գործարանի գլխավոր ինժեներ, 1968-73թթ.՝ Գորիսի քաղսովետի գործկոմի շինարարության գրասենյակի պետ, 1973-74թթ.՝ Գորիսի ռետինե կոշիկների ֆաբրիկայի տնօրեն, 1974-82թթ.՝ կուսակցության Գորիսի շրջկոմի քարտուղար, 1982-91թթ.՝ ՀԿԿ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար, 1991-95թթ.՝ Գորիսի շրջխորհրդի գործկոմի նախագահ: Եղել է ՀԽՍՀ 11-րդ գումարման եւ ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր: Ռոբերտ Ալեքսանյանը Գորիսի շրջանի ղեկավարն էր հայոց ազգային զարթոնքի եւ Արցախյան գոյակռվի տարիներին, երբ Գորիսի շրջանը եւս դարձել էր ռազմական գործողությունների թատերաբեմ: Նա մեծ դեր խաղաց Գորիսում ազգային արժեքների վերականգնման, սահմանամերձ գյուղերի պաշտպանության կազմակերպման, շրջանի տարածքում ինքնապաշտպանական ջոկատների ձեւավորման գործում: Նրա նախաձեռնությամբ էր, որ Գորիսի կենտրոնական զբոսայգում կանգնեցվեցին 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարասկզբին հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումն առաջնորդած ազգային հերոսների հուշարձանները: Ռոբերտ Ալեքսանյանի գործունեության ամենաուշագրավ էջերից մեկը, այնուամենայնիվ, Ադրբեջանի սահմանագլխին Ներքին Խնձորեսկ գյուղի հիմնադրումն է, որն իրականություն դարձավ 1980-ականների երկրորդ կեսին:

Մարտ 1962թ., Գորիսի պատվիրակությունը՝ Արմենակ Խաչատրյանի գլխավորությամբ, Կապանի կայարանում դիմավորում է Անաստաս Միկոյանին

Բնութագրումներ Արմենակ Խաչատրյանին

Լեւոն Սարգսյան, կուսակցության Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար 1938-47թթ.՝ *«Սկսած 1932թ. Գորիսում եղել է մի շարք պատասխանատու աշխատանքներում… Միշտ էլ ցուցաբերել է ակտիվություն եւ նվիրվածություն: Իրեն միշտ էլ արդարացրել է, սոցիալապես հարազատ է, տեսականապես պատրաստված է, պարտակտիվի մեջ վայելում է հեղինակություն»* (3.06.1941թ.):

«Ընկեր Խաչատրյանը միշտ էլ ցույց է տվել իր նվիրվածությունը: … Կայուն բոլշեւիկ է, նվիրված աշխատող է, շրջանում ունի հեղինակություն, քաղաքական սխալներ չի գործել, տիրապետում է իր աշխատանքի տեխնիկային, պարգեւատրված է Կովկասի պաշտպանության եւ թիկունքի քաջարի աշխատանքի համար մեդալներով, սոցիալապես հարազատ է, անհարազատ բարեկամներ չունի» (1945թ.):

Աղասի Չարչօղլյան, Հայաստանի կոմկուսի կենտկոմի քարտուղար կադրերի գծով 1941-43թթ.՝ *«Քաղաքականապես պատրաստ անձնավորություն է»* (19.08.1941թ.):

«Գիտի կուսակցական աշխատանքը: Կուսակցական աշխատանքում միշտ էլ իրեն դրսեւորել է դրականորեն» (4.08.1943թ.):

Գրիգոր Հարությունյան, Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար 1937-53թթ.՝ *«Ընկեր Խաչատրյանը եռանդուն աշխատող է, հեռանկարային կադր: Տիրապետում է կուսակցական աշխատանքին եւ գյուղատնտեսությանը: Սերտորեն կապված է շրջանի կուսակցական ակտիվի եւ սկզբնական կազմակերպությունների հետ: Պարտշրջկոմի երկրորդ քարտուղար աշխատելիս լավագույնս է կատարել իր պարտականությունները»* (8.08.1947թ.):

Գեորգի Տեր-Ղազարյան, Հայաստանի կոմկուսի կենտկոմի քարտուղար 1961-66թթ.՝

ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՈՒՇ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՍՎԱՐԱՆՑ ԳՅՈՒՂԻՑ

ՔԵՇԻՇՅԱՆ ՄԵՐԻ

Այունիքի մարզի Սվարանց գյուղում (1)՝ Գորիսից 19 կմ հարավ-արեւմուտք, 2005թ. գարնանը գյուղատնտեսական աշխատանքներ կատարելիս պատահականորեն հայտնաբերվել են ուշ բրոնզեդարյան խեցեղեն եւ մետաղե առարկաներ (2), որոնցից մի քանիսը, բացի հնագիտական նշանակությունից, կարեւորվում են որպես արվեստի նմուշներ: Տարաբնույթ գտածոների ուսումնասիրությունը վկայում է, որ վաղ անցյալից սկսած՝ Սվարանցի տարածքում մարդը ծավալել է մշակութաստեղծ գործունեություն, որն ընթացել է իր բնականոն եւ օրինաչափ զարգացմամբ:

Նյութերի ժամանակագրման եւ դամբարանների կառուցվածքի մասին պատկերացում կազմելու նպատակով կատարված դիտարկումներից եւ զննումներից պարզել ենք, որ դամբարանախցերը եղել են քարարկղաձեւ՝ ծածկված մոտ 2-մետրանոց հարթավուն քարերով, սակայն խիստ ավերված լինելու պատճառով հնարավոր չի եղել որոշել դրանց ստույգ չափերը, դիրքը եւ այլ մանրամասներ: Դատելով նյութական մնացորդների զուգահեռներից՝ Սվարանցի հնագիտական նյութը վերաբերում է ուշ բրոնզի դարաշրջանին (մ.թ.ա. XIII-XII դդ.):

Նյութերը հայտնաբերվել են՝

1) «Քոլի վեղ» (Հողի թաղ) անվանվող վայրից. միականք, միջին եւ փոքր չափի, սեւ փայլաներկով վեց կավաման, երկու հատ կեղծ կանթով, միջին մեծության թասեր, կավամանի երկու բեկոր, որոնցից մեկը հավանաբար փոքրիկ ակոսազարդ թասի բեկորամաս է, մյուսը՝ ծագարաձեւ, փոքր չափի կավամանի բեկոր,

2) «Ջրի տեղեր» կոչվող վայրից. բրոնզե կրծքազարդ եւ գոտու ճարմանդ հիշեցնող առարկա, որոնք ուշ բրոնզեդարյան մետաղագործական առարկաների զարդարման արվեստի կատարյալ նմուշներ են,

3) Աղվեսաշեն թաղից (կոչվում է նաեւ Հացամարգ), գտնվել է բրոնզե երեք ապարանջան, մանյակ, բրոնզե ծողիկ (3) «Քոլի վեղից» հայտնաբերված առաջին կավանոթը միականք, լայնաբերան անոթ է՝ ուռուցիկ իրանով, կարճ վզով, դուրս ճկված շուրթերով: Կանթը մոտ 1 սմ շուրթից բարձր է, ինչը բնորոշ է Այունիքում հայտնաբերված երկարավուն միականք կավամաններին: Կճուճը սեւ փայլաներկով է, անզարդ, բարձրությունը՝ 11 սմ, շրթի տրամագիծը՝ 6,5, բերանի տրամագիծը՝ 4, կանթի երկարությունը՝ 9, պարանոցի տրամագիծը՝ 5,5, իրանի տրամագիծը՝ 11, 5:

Երկրորդը միականք, փոքր սեւ գույնի կճուճ է, բարձրությունը՝ 7,5 սմ, շրթի տրամագիծը՝ 6,5, բերանի տրամագիծը՝ 4,5, կանթի երկարությունը՝ 9, պարանոցի տրամագիծը՝ 5,5, իրանի տրամագիծը՝ 9,5: Անզարդ է, միայն իրանի եւ պարանոցի սահմանագծում նշմարվում է զույգ գծով տարված տեխնիկական (դուրգի պտույտից առաջացած) խազվածքազարդ:

Երրորդը միականք փոքր սեւ կճուճ է, նման նախորդին: Բարձրությունը 7 սմ է, շրթի տրամագիծը՝ 5,5, բերանի տրամագիծը՝ 4, կանթի երկարությունը՝ 9, պարանոցի տրամագիծը՝ 5, իրանի տրամագիծը՝ 9,5: Դարձյալ նախորդի նման տեխնիկական խազվածքազարդով:

Չորրորդը նույնպես ձեւաբանորեն այս խմբին պատկանող կճուճ է: Բարձրությունը 8,5 սմ է, շրթի տրամագիծը՝ 5,5, բերանի տրամագիծը՝ 4, կանթի երկարությունը՝ 9, պարանոցի տրամագիծը՝ 5, իրանի տրամագիծը՝ 8,5: Իրանի վրա ձեռքի թույլ հպումով բրուտը տարել է հազիվ նշմարելի երկու զուգահեռ խազագիծ: Սա ձեւաբանորեն նման է ակոսազարդով բեկորին:

Հինգերորդը համեմատաբար մեծ, միականք սեւ գույնի կճուճ է՝ ուռուցիկ իրանով, կարճ վզով, լայնացող եւ հետ ճկված շուրթերով: Ի տարբերություն առաջին խեցանոթի՝ սրա կանթը շրթից հավասարաչափ իջնում է ցած: Իրանի հատվածում նշմարվում են թույլ խազագծեր: Հավանաբար բրուտը ցանկացել է նախշել՝ նախապես թույլ ուրվագիծ-խազեր անելով, բայց անավարտ է մնացել: Կավամանի բարձրությունը 11 սմ է, շրթի տրամագիծը՝ 6,2, բերանի տրամագիծը՝ 4, կանթի երկարությունը՝ 9, պարանոցի տրամագիծը՝ 5,3, իրանի տրամագիծը՝ 13:

Վեցերորդը կճուճ է, պարանոցի եւ իրանի միջնահատվածում ունի թույլ արտահայտված տեխնիկական զարդանախշին բնորոշ նուրբ խազվածքազարդ: Ձեւաբանորեն նման է մյուս կավամանին: Բարձրությունը 7 սմ է, շուրթի տրամագիծը՝ 5, բերանի տրամագիծը՝ 3,5, կանթի երկարությունը՝ 9, պարանոցի տրամագիծը՝ 4,5, իրանի տրամագիծը՝ 8,5: Կանթիկը փոքր-ինչ բարձր է շրթնահատվածից:

Յոթերորդը փոքր անցք ունեցող կեղծ կանթով, գորշավուն, անզարդ խոհանոցային թաս է: Բարձրությունը 8 սմ է, շրթի տրամագիծը՝ 11,5, բերանի տրամագիծը՝ 10, իրանի տրամագիծը՝ 13: Անցքը հավանաբար արվել է թասը կախելու նպատակով:

Ութերորդը երկու կեղծ կանթով (մեկը՝ վնասված), գորշ գույնի անզարդ խոհանոցային կոպիտ մշակվածքով թաս է: Բարձրությունը 8 սմ է, շրթի տրամագիծը՝ 11, բերանի տրամագիծը՝ 10, իրանի տրամագիծը՝ 13,5:

Վերոհիշյալ խեցանոթներն աղերսվում են առհասարակ Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. XII-XI դդ. խեցեղենին, սակայն առավել սերտ տարատեսակները մեծաթիվ են հենց Այունյաց աշխարհում (Գորիս, Կապան, Սիսիան): Նման նյութեր գտնվել են Կապանի տարածաշրջանում՝ Շիկահողում, Կապանի Սարահարթ թաղամասում, Քաջարանում (4): Տիպաբանորեն սրանք շատ նման են Վահանավանքի եւ Տաթեւի «Քրիհանուց» վայրի ուշ բրոնզեդարյան նյութերին (5), Արարատի մարզի Վանաշեն (նախկին Թայթան) գյուղի նույն ժամանակաշրջանով թվագրվող դամբարանադաշտում պեղված խեցեղենին (6), զուգահեռներ ունեն Օ.Խնկիկյանի՝ Անգեղակոթում պեղած նյութերին, որոնք թվագրվում են մ.թ.ա. IX դ. վերջով եւ VIII դ.-ով, նաեւ Գորիսի Խանածախ եւ Բռուն գյուղերի շրջակա դամբարանադաշտերի վաղ երկաթի դարի նյութերի հետ (մ.թ.ա. X-IX դդ.), որոնք օրգանապես կապված են ուշ բրոնզի դարաշրջանին (7,8): Նմանատիպ խեցանոթներ 1950 թ. Սիսիանի Ախլաթյան գյուղի Ջաղացի գլուխ կոչվող վայրից հայտնաբերել է ակադ. Մորուս Հասրաթյանը՝ դրանք թվագրելով մ.թ.ա. III-I հազարամյակներով (9):

Բոլոր կավամանների կանթերը ամրացվել են դուրգի վրա կավամանը պատրաստելուց հետո:

Կարելի է եզրակացնել, որ զանգեզուրյան ուշ բրոնզեդարյան խեցանոթները Հայաստանի համաժամանակյա մյուս հնավայրերի նյութերից տարբերվում են կառուցվածքային ձեւով եւ լայն կանթերով, միմյանց նման են տիպաբանորեն եւ ձեւաբանորեն: Ուրեմն, դրանք մի ընդհանուր տարածաշրջանի՝ համաժամանակյա մշակույթների փոխկապերի արդյունք են:

Սվարանցի «Աղվեսաշեն» թաղից գտնվել են նաեւ ուշ բրոնզի դարի մետաղագործության նմուշներ՝ մանյակ, երեք ապարանջան եւ բրոնզե ծող:

Բրոնզե մանյակի տրամագիծը 18 սմ է, երկարությունը՝ 50, որի երկու ծայրերի ոլորապարույր բեւեռները կազմում են 2 սմ: Պատրաստվել է բրոնզի կլոր լարից:

Մեծ ապարանջանը հարթեցված տակամասով է, տրամագիծը՝ 7 սմ: Միջինը եւ փոքրը (համապատասխանաբար՝ 6 եւ 5,5 սմ տրամագծերով) պատրաստվել են կլոր լարից: Սրանց հետ եղել է նաեւ 7 սմ երկա-

էջ 12

«Ընկեր Ա.Խաչատրյանը բազմիցս ընտրվել է Հայաստանի կոմկուսի կենտկոմի անդամ, Հայաստանի Գերագույն խորհրդի դեպուտատ, ընդունակ ղեկավար է եւ կազմակերպիչ, համեստ է, սկզբունքային է, փորձառու է: Գյուղական կուսշրջկոմի քարտուղարի պաշտոնում 15-ամյա աշխատանքի ընթացքում լավագույնս է ուսումնասիրել գյուղատնտեսական էկոնոմիկան: Սիսիանի եւ Գորիսի շրջաններում վայելում է աշխատավորների եւ ակտիվի վստահությունն ու հարգանքը» (ապրիլ 1962թ.):

Չնայած ակտիվ աշխատանքային գործունեությանը (Ա.Խաչատրյանի այդ արժանիքը վկայում են բոլոր ճանաչողները), նրա գործունեությունը համեստ գնահատականի է արժանացել: Այսպես՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1945թ. հունիսի 27-ի հրամանագրով պարգեւատրվել է «Կովկասի պաշտպանության համար» մեդալով: 1956թ. հունիսի 25-ին պարգեւատրվել է ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի կողմից՝ ոչխարաբուծության զարգացման, բրդի արտադրության եւ մթերումների ուղղությամբ կատարած լավ աշխատանքի համար:

Արմենակ Խաչատրյանի ղեկավարման ընթացքում Գորիսը քանիցս հյուրընկալեց հայ ժողովրդի նշանավոր զավակներից շատերին: Հատկապես հիշարժան են Ավետիք Իսահակյանի (1947թ. օգոստոս), Արամ Խաչատրյանի (1948թ. հոկտեմբեր), Մարիետա Շահինյանի (1957թ.) այցելությունները: Հետագայում, ինչպես վկայում են Արմենակ Խաչատրյանի հարազատներն ու մերձավորները, նրանց միջեւ հարատեւել են բարեկամական կապերը:

Տարիներ շարունակ իսկական ընկերական ու բարեկամական հարաբերություններ են իշխել Արմենակ Խաչատրյանի եւ Սերո Խանզադյանի միջեւ: Երբ Ա.Խաչատրյանը 1936-37 ուստարում ղեկավարում էր Շինուհայրի, հաջորդ ուստարում՝ Տեղի դպրոցը, Ս.Խանզադյանն աշխատում էր նրա հետ՝ Տեղ գյուղում ուսուցիչ էր, Շինուհայրում՝ ուսմասվար: Հետագայում՝ «Հայրենապատում» գրքի առաջին հատորում (Երեւան-1980թ.), «Հորս հետ եւ առանց հորս» ինքնակենսագրական վիպակում Սերո Խանզադյանը քանիցս անդրադարձել է այդ բարեկամությանը եւ նրան անվանել «Հրաշալի Արմենակ Խաչատրյան»: Սերո Խանզադյանի հիշողություններից երեք դրվագ, այնուամենայնիվ ուզում ենք հիշել: Արմենակ Խաչատրյանը մեծ ջանք գործադրեց (երբ աշխատում էին Տեղի դպրոցում) Սերո Խանզադյանին կոմերիտմիության մեջ վերականգնելու համար. նրան քաղաքական լուրջ մեղադրանքներով էին հեռացրել կոմերիտմիության շարքերից, որը կարող էր եւ ծանր հետեւանքներ ունենալ: Եվ երբ վերականգնվեց կոմերիտմիության շարքերում, դա մեծ հաղթանակ եւ հաջողություն համարեց գրողը: Հետագայում այդ առիթով գրեց՝ *«Այդ բանով ամենից շատ, մորիցս հետո, իհարկե, ուրախացավ իմ բարեկամ Արմենակ Խաչատրյանը: …Ի՜նչ լավ է, որ Արմենակի նման մարդիկ կան»:* Տեղ գյուղում աշխատելու ժամանակ լուսաբաժնի մի հրահանգիչ է դպրոց գալիս եւ հայհոյանքներով հարձակվում Սերո Խանզադյանի վրա՝ *«Ռաֆֆի՞ ես քարոզում դպրոցում: Ռաֆֆին արգելված է: Ես քեզ ցույց կտամ: Մի՛ մոռանա, թե ինչ վիճակում ես դու: Սրան տեսեք…»:* Սերո Խանզադյանը հետագայում այդ կապակցությամբ գրում է՝ *«Հրահանգչի ասածն ինձ վախեցրեց, իհարկե: Սակայն մեր դիրեկտոր Արմենակը նորից կողքիս է.*

– Մի լսիր այդ տգետին, Ռաֆֆու մասին լավ ես արել, որ խոսել ես, գտիր նրա գրքերից, տուր աշակերտներին: Մի վախեցիր»:

Երբ 1949թ. հունիսի 14-ին աքսորեցին Սերո Խազանդյանի մորը եւ երկու քրոջը, նա կարողացավ աքսորի ճանապարհից հարազատներին հետ բերել: Ինչպես արդեն նշել ենք՝ անորոշության եւ հուսահատության այդ ժամին Գորիսի կուսշրջկոմի առաջին քարտուղարը կրկին ընկերոջ կողքին էր:

Երիտասարդ Արմենակ Խաչատրյանի կերպարն արտացոլել է նաեւ Սուրեն Այվազյանը: «Ասուր, հե՜յ Ասուր» վիպակում գրողը պատմում է այն մասին, թե ինչպես էր կոմերիտական բջջի քարտուղար, 17-18-ամյա Արմենակ Խաչատրյանը կազմակերպում Գորիսի երիտասարդությանը՝ Ղափան՝ «Պղնձի ֆրոնտ» գնալու համար: Գորիսեցի երիտասարդները Կապանի կոմսոմոլի անվան 6-րդ հանքում, ինչպես աշխատանքի ավարտին հայտարարեց Ղափանի կուսշրջկոմի առաջին քարտուղար Ենոք Ղարիբջանյանը, պատվով կատարեցին առաջադրանքը:

Արմենակ Խաչատրյանի կյանքին ու գործունեությանը, թեեւ համառոտ, անդրադարձ է կատարվել «Գորիս. ականավոր գործիչներ, նշանավոր դեմքեր, արժանավոր զավակներ» հանրագիտարանային արժեք եւ ճանաչողական նշանակություն ունեցող գրքում (Դավթյան Շ., Զիլֆուղարյան Մ., Հրազդան-2003) եւ է.Զոհրաբյանի, Հ.Միրզոյանի հեղինակած «Գորիսի հանրագիտարանում» (Երեւան, ՎՄՎ-Պրինտ, 2008): Մեկ քաղվածք այդ հանրագիտարանից՝ *«Արմենակ Խաչատրյանը մեծ վաստակ ունի Գորիս քաղաքի եւ շրջանի բարգավաճման ասպարեզում: Նրա ջանքերի շնորհիվ Գորիսի շրջանի մի շարք գյուղեր (Խնձորեսկ, Շինուհայր, Խոտ, Հալիձոր, Ազատաշեն, Այգեձոր, Ձորաշեն) տեղափոխվեցին նոր գյուղատեղիներ, սկսվեց Որոտանի կասկադի եւ ոռոգման համակարգերի շինարարությունը»:*

Արմենակ Խաչատրյանի գործունեությանը, ինֆորմացիայի ժանրին բնորոշ հակիրճությամբ, տարիներ շարունակ անդրադարձել է շրջանային թերթը (1939 թվականից՝ «Ստալինյան դրոշով», 1956-62թթ.՝ «Որոտան», 1963 թվականից՝ «Զանգեզուր» անվամբ):

Արմենակ Խաչատրյանին բնութագրող խոսքեր, այդ ժամանակների ոգուն համահունչ, տեղ են գտել երեք անգամ (1951թ., 1959թ., 1963թ.) ՀՍՍՌ Գերագույն սովետի դեպուտատության թեկնածուի քարոզչական տեղեկագրերում եւս:

Տարիների հեռվից կարելի է ասել, որ Արմենակ Խաչատրյանի պատանեկան օրերի նախասիրությունը մանկավարժությունն էր, հանրակրթական դպրոցը: Ինչպես վկայում է Շինուհայրի մերօրյա պատմագիր Ժորա Մանուցյանը «Շինուհայր» գրքում (Երեւան-2004թ., «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, էջ 321-325), Արմենակ Խաչատրյանը 1936-37 ուստարում Շինուհայրի դպրոցի տնօրենն էր: Այդ ժամանակ նույն դպրոցում էր աշխատում նաեւ նրա տիկինը՝ Աշխեն Շահնազարյանը: Շինուհայրում, ըստ Ժորա Մանուցյանի, Արմենակ Խաչատրյանի մասին պահպանվել են ամենալավ հուշերը:

Արմենակ Խաչատրյանի հիշատակը 1975թ. հավերժացրել են համագյուղացիները՝ Տեղ գյուղի նորակառույց մշակույթի տունը կոչելով նրա անվամբ: Մշակույթի այդ օջախի սրահում (մի քանի տարի առաջ կատարված հիմնանորոգումից հետո), սակայն, այլեւս չկա նրա մեծադիր նկարը, որ կար տարիներ շարունակ: Չկա նաեւ մշակույթի տան ցուցանակը՝ նրա անունը հիշատակող: Տեղի գյուղապետարանը, կարծում ենք, պետք է շտկի այս բացթողումը:

Ահա այսպիսի ճանապարհ է անցել Արմենակ Խաչատրյանը, որ կարելի է եւ փորձությունների ճանապարհ անվանել: Նրա ապրած ժամանակն էլ փորձությունների ժամանակ էր ե՛ւ երկրի, ե՛ւ ամեն մի մարդու, առավել եւս՝ որեւէ շրջան կամ հանրապետություն ղեկավարած անձնավորության համար: Եվ դժվարին, անորոշ, որոգայթներով լի այդ ժամանակներում նա կարողացավ, նախեւառաջ մարդկային առումով, քննություն բռնել ու մարդկանց հարգանքը վայելել՝ առայսօր նկատվող: Երբեք եւ ոչ մի պարագայում չհայտնվեց ծայրահեղությունների մեջ ու ամենադժվարին պահերին անգամ փորձեց օգտակար լինել գորիսեցիներին: Արմենակ Խաչատրյանի անցած ճանապարհը կարելի է եւ ստեղծագործ աշխատանքի ճանապարհ անվանել: Հետպատերազմյան շրջանում կարողացավ առավելագույնն անել շրջանի սոցիալ-տնտեսական, կրթական ու մշակութային կյանքի վերակազմակերպման համար: Նրա ձեռագիրը, կարելի է ասել առանց չափազանցության, առայսօր պահպանվում է գորիսյան իրականության գրեթե բոլոր բնագավառներում՝ էներգետիկա, արդյունաբերություն, քաղաքաշինություն, գյուղապահպանություն, մշակույթ, կրթություն…

Գորիսն այսօր հիշում է կուսակցական ու պետական գործիչ Արմենակ Խաչատրյանին եւ ծննդյան 100-ամյակի կապակցությամբ վերստին հարգանքի տուրք մատուցում նրա հիշատակին:

■

Հ.Գ. Հոդվածը գրվել է 2012թ. Ռոբերտ Ալեքսանյանի նախաձեռնությամբ:

ՈՒՇ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՍՎԱՐԱՆՑ ԳՅՈՒՂԻՑ





էջ 11

րությամբ եւ 9x6 մմ չափերով կիսակոր բրոնզե ձողի կտոր:

Բրոնզե ձողի առկայությունը, ապարանջանների հետ, թույլ է տալիս ենթադրել, որ դրանք եղել են ոչ թե զարդ, այլ հարստություն:

Ծիսական եւ տոտեմապաշտական երեւույթների հետ սերտորեն առնչվելով, ունենալով հավատալիքներ՝ հնագույն հայքամարդը բրոնզե որոշ իրեր, ծանրության պատճառով մշտապես չկարողանալով իր վրա կրել, դրանք պահել է՝ դիտելով որպես հարստություն, գանձ, հետեւապես, կիրառել նաեւ որպես ուղեկցող նյութ հանդերձյալ աշխարհում: Այսինքն՝ բրոնզե իրերից շատերը մարդը կրել է ոչ միայն որպես զարդարանք, ելնելով դրանց խորհրդապաշտական նշանակությունից, այլեւ դիտել որպես փոխանակման միջոց եւ հարստություն:

Սվարանցի «Ջրի տեղեր» վայրից գտնված բրոնզե առարկաները թերեւս ամենաուշագրավն են: Սրանք շատ ուշագրավ են արվեստաբանական եւ իմաստաբանական առումներով, ինչպես նաեւ գեղազարդմամբ: Նկատելի է, որ դրանք պատրաստող վարպետը եղել է իր գործի գիտակը՝ ունենալով բազմակողմանի զարգացած ու ձեւավորված աշխարհայացք, որը երեւում է բրոնզե ճարմանդ կամ կախոնազարդ հիշեցնող առարկայի եւ կրծքազարդի հորինվածքից:

Գոտու «ճարմանդ» հիշեցնող առարկան ունի 6 սմ երկարություն, 3,2 սմ լայնություն, որի նախշահորինվածքը՝ զարդարիկներով հանդերձ, հավաքված է երեք ձողի վրա՝ երեք շարքով, որոնք էլ կազմում են «ճարմանդի» հիմքը:

Առաջին շարքի ձողը զարդարված է թվով 6 բրոնզե, ոսպահատիկ հիշեցնող, տափակ զարդերով: Երկրորդ՝ մեջտեղի ձողի վրա թվով 7 զարդ է, որոնցից յոթերորդը՝ կիսալուսնաձեւ: Երրորդ ձողի վրայի զարդերի թվաքանակը դարձյալ կրկնում է 6 թիվը:

Մեջտեղի ձողը՝ երկրորդը, կենտրոնական երկու կողմում ունի հմտորեն արված մեկական պարույրազարդ, որոնք ձուլված են մյուս երկուսին: Տեսքը հուշում է, որ սա եղել է իմաստակիր զարդ եւ որպես լրացում երկու պարույրի՝ միջնամասը կարծես վերածվել է խաչի:

Հին Հայաստանի ժայռարվեստում, խեցեգործական, փայտագործական եւ մետաղագործական արվեստի նմուշներում պարույրը կիրառվել է հնագույն հավատալիքների եւ պաշտամունքի հետ կապված: Գեղամա եւ Վարդենիսի ժայռապատկերներում պարույրը խորհրդանշում է «արեւ», իսկ գալարապարույրը՝ «անմահ» գաղափարագիրը: Ժայռապատկերներում սրանք իմաստավորում են անընդհատ շարժ, անսպառություն (10), հավերժանշան (11):

Պարույրը եւ դրա տարատեսակները բրոնզեդարյան մշակույթի սիրված ու ընդունված կիրառելի գաղափարակիր եւ իմաստակիր զարդարիկ տարրերից են, եւ դրանց վերարտադրությունն առկա է բոլոր ժամանակների հայկական արվեստի նմուշներում:

Հայաստանի բրոնզեդարյան խեցեղենի նմուշներում կարելի է հաճախակի հանդիպել պարույրի այն զարդաձեւին, որն արված է Սվարանցի «ճարմանդի» վրա: Դրա զուգահեռները կարելի է տեսնել Շենգավիթի, Լորուտի, Մոխրաբլուրի, Շրեշբլուրի խեցեգործական արվեստի նմուշներում (12):

Նույնը նկատելի է փայտագործական արվեստի աշխատանքներում: Այսպես. Լճաշենի N 9 դամբարանի սայլի հետնամասի տախտակը զարդարված է նմանատիպ մեծ ու փոքր պարույրներով, որն իր հորինվածքային համադրությունը գտել է եղեւնանախշի եւ եռանկյունանախշի հետ (13): Նկատենք, որ լեռնաշխարհի տարբեր ժամանակների մշակույթում պարույրը պահել է իր իմաստային նշանակությունն ու կիրառելիությունը, եւ անկախ տարածքային հեռավորությունից՝ մարդն ունեցել է միանման մտածողություն եւ հավատալիք, կիրառել է նույն զարդանախշ-տարրերը արվեստի տարբեր բնագավառներում: Դիտենք, որ, օրինակ, գոտին («կամար») իմաստաբանորեն կապվում է երկնակամարի հետ եւ իր կրոնահմայական, իմաստային զարդարիկներով ու բովանդակությամբ միտված է եղել պահպանելու եւ չարքերից պաշտպանելու այն անձի կյանքը, որ կրում էր գոտին: Դրանք առնչվում էին նաեւ հավերժական կյանքի եւ պտղաբերության հավատալիքի գաղափարին: Այս դեպքում հասկանալի է դառնում ճարմանդի վրայի երկու պարույրի կիրառումը: Որպես զարդ՝ այն նաեւ թալիսմանի դեր է խաղացել, ինչպես գորտանման ճարմանդներն են (14):

Մեկ դիտարկում եւս. ոսպահատիկ հիշեցնող զարդարիկներն ընդհանուր թվով 19-ն են, դրան գումարելով երկու պարույրը՝ ստացվում է 21 զարդատարրից բաղկացած իմաստակիր-գոտաճարմանդ: Այս թվերը խորհրդաբանական առումով գերակշիռ են բրոնզի դարաշրջանի տարբեր առարկաների զարդարիկներում:

Կատարողական առումով գեղազարդ հրաշալի աշխատանք է սվարանցյան բրոնզե կրծքազարդը, որն արված է ինչպես պարույրազարդերով (մեծ ու փոքր), այնպես էլ ոլորուն հյուսվածքազարդով:

Սա հմուտ արհեստագործվարպետի շինածո աշխատանք է: Կրծքազարդը վնասված է, սակայն դա չի խանգարում ընդհանուր պատկերացում կազմելու եւ վերականգնելու այն:

Զարդը կիսալուսնաձեւ է: Բեկորի երկարությունը 8 սմ է, երկու ծայրին կախելու համար միջանցիկ կլոր անցք է, վերին եւ միջին եզրահատվածում ոլորուն պարանազարդեր են, որոնց միջեւ մեծ պարուրազարդ է, իսկ ստորին պարանազարդից (հյուսվածքազարդ) կախված է 10 փոքրիկ պարուրազարդիկ:

Պարզ է, որ սա մեկ հավաքածու է՝ լինելով մեկ վարպետի ստեղծագործ ձեռքի աշխատանք: Հավանաբար դրանք կրվել են միասին՝ կազմելով տարազի անբաժան եւ զարդարիկ մաս:

Նշենք, որ պարուրազարդի կիրառումը բնորոշ է եղել ոչ միայն Հայաստանի տարածքում ապրող վաղամարդուն, այլեւ բազմաթիվ հնագույն քաղաքակրթություններից ժառանգած արվեստի ստեղծագործություններին, որոնց կիրառումը փաստացի առկա է (15):

Հմայական գործառույթ կատարող իմաստակիր այս զարդանախշը Արեւի աստծո կամ լուսատուների պաշտամունքի հետ առնչվող տեսակներից է, որն օգտագործվել է նաեւ մետաղագործական արվեստում:

Ընդհանուր եզրահանգմամբ, Սվարանցի տարածքը լուրջ ուսումնասիրման կարիք ունի, ինչը կարող է նպաստել Այունյաց հատվածի հնագույն մշակույթի հետ կապված հարցերի լուսաբանմանը: Այս առումով կարեւորվում է նաեւ զարդանախշի պարուրազարդ տեսակի իմաստաբանական մեկնության ու դասակարգման հարցը: Քանզի զարդանախշը, լինելով իմաստակիր, կարեւոր աղբյուր է հնագույն մարդու աշխարհայացքի ընկալման ու պարզաբանման համար:

Թե՛ խեցեղեն արվեստի, թե՛ մետաղի ու փայտի զարդարվեստի առարկաները, ինչպես նաեւ զարդանախշերը մեկ բնատարածքի տարբեր հատվածներում հաճախ զարգանում են ընդհանուր մակարդակից, փոխազդեցություններից բխող ոճական, ձեւական, իմաստաբանական նմանություններով եւ ընդհանրություններով: Սակայն յուրաքանչյուր դեպքում՝ առանձին վայրերում ձեւերի եւ նախշերի առանձին խմբերում ի հայտ են գալիս ներքին զարգացման ընդհանուր օրինաչափություններ, տարբեր ոճավորումներ, որոնք զուտ տեղական միջավայրի ազդեցության արգասիք են:

Դրանք ընդհանրապես ներկայացնում են որոշակի մարդկային խմբի կամ էթնոմիավորի նյութական եւ հոգեւոր փոխկապակցված կյանքի պատկերը:

Ծանոթագրություն

1. Գյուղը նույնացվում է պատմական Յուր բնակավայրի հետ: Այստեղ է գտնվում Յուրաբերդը: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ Յուրը տեղադրված է Սյունիքի Ծղուկ գավառում (Օրբելյան Ս., Սյունիքի պատմություն, Ե., 1986, էջ 394): Հիշատակվում է, որ 1450թ. Տաթեւի վանահայր Շմավոն վարդապետը, Սյունյաց այլ գյուղերի հետ, Սվարանցը (Յուր) նվիրել է Տաթեւի վանքին: Ըստ ավանդության՝ Սվարանց անվան ծագումն առնչվում է Լենկ Թեմուրի արշավանքներին: Յուրի բնակիչները երկար պայքարից հետո խաբվում եւ անձնատուր են լինում: Մոնղոլ առաջնորդը խոստացել էր «սրի չքաշել» ոչ մեկի, սակայն դրժում է իր խոստումը, նրանց քշում է մի դաշտ եւ կենդանի թաղում: Դրանից հետո վայրն անվանվում է «սեւարանց շեն=Սեւարանց շեն»՝ սեւ մարդկանց շեն, սեւերես արածների գյուղ կամ Սեւարանց-Սվարանց (Ղանալանյան Ա., Ավանդապատում, Ե.,1969, էջ 171, թիվ 444): Ներկայիս խոսվածքում օգտագործվում են նաեւ Սուարանց, Սուվարանց տարբերակները:

2. Նյութերը հավաքել եւ մեզ է տրամադրել (2006թ.) Սվարանց գյուղի բնակչուհի Ժենյա Վարդանյանը (Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանողուհի):

3. Նյութերը գտել են. «Քոլի վեղից» Ալետա Վարդանյանը, «Ջրի տեղերից»՝ Լուսինե Հակոբյանը, «Աղվեսաշենից»՝ Անուշավան Գալստյանը: «Քոլի վեղի» տարածքում տնամերձ այգին ջրելիս նկատվել է, որ ջուրը ոռոգման ժամանակ չի հոսում, այլ անցնում է գետնի տակ, որտեղ առատորեն եղինջ է աճում:

4. Ավետյան Վ., Հին հուշարձաններ Տաթեւ գյուղի մերձակայքում (Պատմա-բանասիրական հանդես, այսուհետեւ՝ ՊԲՀ, 2001, N 3, էջ 261):

5. Ավետյան Վ., նույն տեղում, էջ 259-264: Նույնի, Բրոնզեդարյան հուշարձաններ Վահանավանքի տարածքում (Հայկ. ՍՍՀ-ում 1985-1986թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի թեզիսներ, Ե., 1987, էջ 24-26):

6. Ավետյան Վ., Վանաշենի հին հուշարձանները (Սովետական Հայաստան, 1985, N 3, էջ 30-31):

7. Խնկիկյան Օ., Պեղումներ Անգեղակոթում (Լրաբեր հասարակական գիտությունների, 1978, N 3, էջ 99-107):

8. Խնկիկյան Օ., Պեղումներ Գորիսի շրջանում (ՊԲՀ, 1985, N 3, էջ 164-177):

9. Հարաթյան Մ., Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ (Հնագիտական հետազոտություններ Սիսիանում), Ե., 1985, էջ 168, աղ. 4:

10. Մարտիրոսյան Հ., Գիտությունն սկսվում է նախնադարում, Ե., 1978, էջ 121, աղ. XXVI ա,Պետրոսյան Ս., Հայկական ժայռապատկերներ, Ե., 2005, էջ 78, նկ. 135, էջ 177, նկ. 496, էջ 189, նկ. 541, Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ., Գեղամա լեռների ժայռապատկերները, Ե., 1971, աղ. 145, Կարախանյան Գ., Սաֆյան Պ., Սյունիքի ժայռապատկերները, Ե., 1970, նկ. 70, 257, 232:

11. Մարտիրոսյան Հ., Մայր աստվածուհու ժայռանկարային պատկերները (Գիտություն եւ տեխնիկա), Ե., 1978, N 9, էջ 30-31:

12. Խանզադյան Է., Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Ե., 1967, աղ. XV, XVIII, XXV, Սարդարյան Ս., Հայաստանը քաղաքակրթության օրրան, Ե., 2004, էջ 336, աղ. LXXIV, աղ. C, աղ. CXVI:

13. Мнацаканян А., Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан (Советская археология, М., 1960, N 2, с. 139-141); Քեշիշյան Մ., Լճաշենի ուշ բրոնզեդարյան սայլերի զարդանախշերը, Գարուն, Ե., 2005, N 9, էջ 62-64:

14. Նահապետյան Ռ., Աղձնիքահայերի ընտանիքը եւ ընտանեկան ծիսակարգը, Ե., 2004, էջ 165-167, Քեշիշյան Մ., Բրոնզե գոտիների զարդանախշման իմաստաբանության հարցի շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների, 2007, N 2, էջ 248-257:

15. Sandars N., Prehistoric Art in Europe, London, 1968. pp. 171-176, 179-185:

■

Թող մեր հիվանդները քիչ լինեն, ոչ թե քիչ դիմեն

Առողջապահություն

Գորիս քաղաքում գտնվող «Սյունիք» բժշկական կենտրոնը, որ «Դիագնոստիկա» բժշկական միավորման մասնաճյուղերից է, գործում է 1992 թվականից: Կենտրոնում իրականացվում են գործիքային եւ լաբորատոր հետազոտություններ, ինչպես նաեւ մասնագիտական խորհրդատվություն:

«Սյունիք» բժշկական կենտրոնի տնօրեն, բժիշկ-սրտաբան Կարինե Հայրապետյանը նշեց, որ կենտրոնը մեծ հաստատություն էր, բայց աստիճանաբար մասնագետների թիվը նվազել է: Բայց, ինչպես տնօրենը հավաստիացրեց, հաճախորդների պակաս չի զգացվում, քանի որ տարիների հարուստ փորձն ու բարի համբավը դեռեւս շարունակում են պահպանել իրենց դերակատարությունը: Տարիներ շարունակ կենտրոնը սպասարկել է ոչ միայն Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերը, այլեւ ԼՂՀ-ի որոշ տարածաշրջաններ, հատկապես Քաշաթաղը:

Կենտրոնում կատարվում են հետեւյալ գործիքային հետազոտությունները՝ գերձայնային հետազոտություններ (սոնոգրաֆիա)՝ որովայնի եւ փոքր կոնքի օրգանների, վահանաձեւ եւ հարվահանաձեւ գեղձի, ավշահանգույցների, ենթամաշկային գոյացության, թքագեղձերի, կրծքագեղձի եւ այլ ներքին օրգանների, էլեկտրասրտագրություն (ԷԿԳ), գերձայնային սրտագրություն՝ դոպլեր հետազոտությամբ (էխոԿԳ), արտաքին շնչառական ֆունկցիայի որոշում, վերջութային (վերին եւ ստորին) անոթների դոպլեր հետազոտություններ:

Կենտրոնում կատարվում էին նաեւ լաբորատոր հետազոտություններ՝ ընդհանուր կլինիկական, կենսաքիմիական (բիոքիմիա), իմունոլոգիական եւ հորմոնալ: Բայց մասնագետ չունենալու պատճառով ներկայումս ժամանակավորապես դադարացվել են լաբորատոր հետազոտությունները:

Տարբեր հիվանդությունների երիտասարդացման մասին մասնագետներն անընդհատ բարձրաձայնում են: *«Եթե միայն իմ մասնագիտության գծով նշեմ, ապա սիրտ-անոթային հիվանդությունները բավականին երիտասարդացել են: Իհարկե, հաճախակի դա կապում են, օրինակ, օրգանիզմում խոլեստերինի բարձրացման հետ, բայց տարիների փորձը ցույց է տալիս նաեւ, որ հայ մարդու դեպքում ժառանգական գործոնն առաջնային է: 30-32 տարեկան անձանց հետազոտելիս արդեն արյան ճնշման հետ կապված հիվանդություններ են հայտնաբերվում: Չնայած ես նաեւ այն կարծիքին եմ, որ մեր օրերում ախտորոշումն է հեշտացել, դրա համար էլ թվում է, թե հիվանդությունները շատացել եւ երիտասարդացել են»,* – նշեց Կարինե Հայրապետյանը եւ հավելեց, որ գիտության մեջ շրջանառվում է նաեւ այն վարկածը, որ աթերոսկլերոզը միկրոբ է:

Կարինե Հայրապետյան «Սյունիք» բժշկական կենտրոնի տնօրեն

Կարմեն Սերգեյան «Սյունիք» բժշկական կենտրոնի բժիշկ-սոնոգրաֆիստ

Բժշկուհին փաստեց նաեւ, որ մարդկանց գիտակցական մակարդակն էլ է բարձրացել, երիտասարդները թեկուզ աննշան գանգատի դեպքում դիմում են բժշկի: Հիվանդության ախտորոշումից հետո տեղում նաեւ բուժում են նշանակում, իսկ եթե ավելի խիստ մասնագիտական օգնության կարիք է լինում, ուղարկում են Գորիսի ֆրանս-հայկական սրտաբանական կենտրոն կամ մայրաքաղաք: *«Գորիսում գործող սրտաբանական կենտրոնը հագեցած է արդի սարքավորումներով, որոնցով որոշ հիվանդությունների ախտորոշումն ավելի արագ եւ ճշգրիտ է լինում: Ճիշտ ախտորոշման համար մեզ նույնիսկ ֆրանսիացիները շնորհակալություն են հայտնել»,* – անկեղծանում է բժշկուհին: Հիվանդություններից գերակշռում են հիպերտոնիան եւ սրտի իշեմիկ հիվանդությունները: Եթե նախկինում տղամարդկանց շրջանում էր գերակշռում, ներկայումս կանանց շրջանում նույնպես շատացել են սիրտ-անոթային հիվանդությունները:

Մեր այցելության օրը բժշկուհի Կարինեն ընդունել էր 25 հիվանդ, որոնցից 1-2-ն էին առողջ, մյուսներն ունեին տարբեր խնդիրներ:

Կենտրոնի տնօրենը նշեց, որ իրենց սարքավորումները լավ վիճակում են, լիովին բավարար են համապատասխան հետազոտություններ կատարելու համար: Ներկայումս ամենալուրջը շենքի խնդիրն է. ցանկալի կլիներ ավելի լավ պայմաններով շենք ունենալ (այդ հարցը քննարկման փուլում է): *«Ցանկալի կլիներ տնային կանչերի համար սոնոգրաֆիայի հարմարավետ սարքավորում ունենալ»,* – նշեց տնօրեն Կ.Հայրապետյանը:

Կենտրոնի բժիշկ-սոնոգրաֆիստ Կարմեն Սերգեյանը փաստեց, որ գերակշռում են լեղաքարային եւ երիկամաքարային հիվանդությունները, կանանց շրջանում՝ արգանդի միոմաները, կիստաները, կրծքագեղձի մաստոպաթիան, ներքին օրգանների բարորակ եւ չարորակ գոյացությունները, ինչպես նաեւ հորմոնալ խանգարումով պայմանավորված տարբեր հիվանդությունները, հատկապես շաքարային դիաբետն ու խպիպը (զոբ): *«Հատկապես կանանց շրջանում լայնորեն տարածում գտած հիվանդությունների պատճառը հիմնականում անհետեւողականությունն է, հորմոնալ խնդիրների առաջացումը: Հազվադեպ է պատահում, որ առողջ մարդը գա եւ հետազոտվի: Մեզանում մինչեւ գանգատ չեն ունենում, չեն դիմում բժշկի»,* – նշեց Կ.Սերգեյանը եւ հավելեց, որ երբ գլխավոր բժշկական կենտրոնից բժիշկներ են այցելում, զարմանում են, որ ամեն երրորդ հետազոտվող ունի քարային հիվանդություն: Բայց բժշկուհի Կարմենը հակված է այն կարծիքին, որ այդ հիվանդության համար նույնպես գենետիկ նախատրամադրվածություն կա. միեւնույն գերդաստանի տարբեր սերունդների շրջանում նույն հիվանդությունը ժառանգաբար փոխանցվում է: Իհարկե, հիվանդության առաջացման պատճառներից են նաեւ նյութափոխանակության խանգարումը, ոչ ճիշտ ապրելակերպը:

Չնայած քաղաքում այլ սոնոգրաֆիստներ կան, բայց Կարմեն Սերգեյանը չի դժգոհում. *«Յուրաքանչյուր բժիշկ իր հիվանդն ունի: Տարիների հարուստ փորձը մեզ վստահելու առաջին նախապայմաններից է»:* Հիվանդության ախտորոշումից հետո բուժում նշանակում են, եթե, իհարկե, ավելի նեղ մասնագետի մոտ հիվանդին հետազոտման ուղարկելու կարիք չի լինում:

> *Հետազոտությունը հիմնականում կատարվում է վճարովի հիմունքներով, որ ավելի մատչելի է, քան այլ բուժհաստատություններում: Իհարկե, գործում է նաեւ պետպատվեր, ինչպես նաեւ, եթե կարելի է այդպես անվանել, մարդկային խղճի գործոնը: «Պատահում է՝ հիվանդը վճարունակ չի լինում, եւ հետազոտում ենք անվճար», - նշեցին բժիշկները:*

Ինչպես բժշկագիտության բնագավառում կուտակված միջազգային փորձը, այնպես էլ բժշկական կենտրոնի ավելի քան 25-ամյա աշխատանքը վկայում են, որ հիվանդությունների մեծ մասը հնարավոր է արդյունավետ բուժել վաղ հայտնաբերման դեպքում, իսկ ճիշտ ախտորոշումը լիարժեք բուժման նախապայմանն է: Ուստիեւ բժիշկները խորհուրդ են տալիս կանխարգելիչ բուժզննման նպատակով ժամանակին դիմել բժշկի: *«Թող մեր հիվանդները քիչ լինեն, ոչ թե քիչ դիմեն»,* – այսպես ամփոփեցին զրույցը բժշկուհիները:

Ժողովրդական խոսք կա՝ դեղը, խոսքը, հետո՝ դանակը: Բժիշկներից փորձեցինք պարզել՝ արդյո՞ք համամիտ են այս ձեւակերպման հետ: Կարմեն Սերգեյանը նշեց, որ դրանք մեկը մյուսին լրացնում են, յուրաքանչյուրն իր չափով, իսկ Կարինե Հայրապետյանի համոզմամբ՝ նախեւառաջ կարեւոր է բժշկի խոսքը, այնուհետեւ՝ մնացածը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Սյունիք» բժշկական կենտրոնի շենքը

Մտորումներ

«Ելնում են, ելնում են տներից ու քայլում են դանդաղ, ու բացվում են խանութներն իրար ետեւից. հացագործ, մանրավաճառ, կոշկակար, կողքին՝ մրգեղենի խանութ, կողքին՝ կտորեղեն, խալիներ, բրինձ, համարյա ոչ մի խանութ չկա, որ մի գործով զբաղվի. հացթուխի խանութում միեւնույն ժամանակ նավթ էլ է ծախվում...»:

Ե.Չարենց, Երկիր Նաիրի

Վերջին հաշվով ուրիշ քաղաքներ, տարբեր լինելով հանդերձ, նաեւ նման են իրար: Նույն աշխարհն է, նույն մոլորակը, նույն ձորերն ու լեռները, տները, փողոցները, շվարած, թախծոտ դեմքերը: Նույնն է խուճապահար վազքը, հիասթափությունն ու հրճվանքը, դրախտն ու դժոխքը, նույնն են մարդկային հիմարությունները... Կարելի է հեռանալ այս քաղաքից, որ ԿԱՊԱՆ է կոչվում, կամ փոխել այն, փոխել այս ամենը: Չգիտեմ: Գիտեմ, որ անխուսափելի է կյանքը: Եվ մահը, որ նրա մի մասն է կազմում:

Ուրե՞մն... Ուրեմն հազարերորդ անգամ ինքդ քեզ հետ կռիվ տուր գնացողների հետ, ներողամտաբար ժպտա՛ եւ ընդունի՛ր եկողներին՝ նրանց, ովքեր քո այս քաղաք-դժոխքը լքեցին արհավիրքի օրերին եւ հիմա գալիս են...

Իսկ դու չես գնացել, իսկ դու այս ծննդավայր կոչվածի փեշից կախ ես ընկել ու մնացել: Պարտքի զգացո՞ւմն էր մեծ զոհվածների աճյունների առաջ, թե՞ մոլորակի այս անկյունը, որ քոնն ես համարել, չես թողել, որ շներին կեր դառնա... Ուրե՞մն... Ուրեմն ոչինչ, որ կյանքի ու մահվան սարսափն առանց նրանց «վայելեցիր»: Տխրությունն ու հաղթանակի ցնծությունն էլ մենակ վայելեցիր: Գալի՞ս են: Գլուխը քարը, թող գան... Այս քաղաքը նաեւ նրանցն է:

...Սակայն գալիս են հոխորտալով, դրոշ ծածանելով, անարգելով իրենց նման մահկանացուներին...

Նկարիչ ընկերոջս խոսքերը հանգիստ չեն տալիս ինձ. *«Շատ չէ՞ մեր քաղաքի համար այսքան ատելություն, որ մարդիկ ունեն միմյանց նկատմամբ...»:* Իսկ ես, դու, նա մտածում ենք վեհ բաների մասին, այս փոշու ու անորոշության մեջ կորած քաղաքի մասին, ազգի անունից՝ ազգի փրկության մասին:

Սակայն... Ավելի շատ չարացած ենք միմյանց դեմ, զարմացնում ենք մեկս մյուսիս ցեխի մեջ գցելով ու կոխկռտելով: Չարությունից, ստից, ճղճիմությունից սառչում է քաղաքի օդը. ինչքա՞ն բարություն է պետք այն հալեցնելու համար:

Պոեմի հերոսը կասեր. *«....Ամեն ինչ սկսվում է նաիրյան գործերի կենտրոնից»:* Դրան հակառակ պնդողներ էլ կլինեն, թե ամեն ինչ հոսում է դեպի «նաիրյան գործերի կենտրոն»:

Ով է ճիշտ, ով՝ սխալ: Չգիտեմ: Ինքդ քեզ հետ կռիվ տալով, ճանապարհիդ ծանոթ մեկի հետ միտքդ կիսելով եւ քո ակնկալած պատասխանը չստանալով՝ ափսոսում, թախծում եւ դժգոհ շարունակում ես ճամփադ՝ հազար անգամ քանդելով ու շինելով այս աշխարհը: Բայց միեւնույնն է: Պրծում չկա յոթգլխանի «ինչու» վիշապից: Փաստորեն մարդ արարածն ինքը դարձել է իր իսկ իրագործած նվաճումների զոհը: Էվրիկա: Եվ... դավաճանելով մարդկային ազնվագույն սկզբունքներին՝ շատերն են փորձում նվաճել բարձունքներ... Ուրեմն... Մի՛ զարմացիր, որ ոմանք հենց այդպես էլ կապրեն... որ դա կարող է լինել մոլորակի այն անկյունը, որը ԿԱՊԱՆ է կոչվում...

Եվ... Եվ կարո՞ղ ես լինել, կարո՞ղ ես մնալ մարդ՝ իր անհամար ու բազմապատկվող դժվարություններով հանդերձ...

ՍՈՒՍԱՆՆԱ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՏԻՄ ընտրություններ Տաթեւ նորակազմ համայնքում

էջ 1 2015թ. նոյեմբերի 24-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց օրենք *««Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին»*, որն էլ ՀՀ նախագահի կողմից վավերացվեց 2015թ. դեկտեմբերի 15-ին: Ըստ այդ օրենքի՝ վերջնականապես ձեւավորվեց Տաթեւ համայնքը:

Այնուհետեւ՝ 2016թ. հունվարի 14-ին, ՀՀ կառավարությունը վաղաժամկետ դադարեցրեց Սյունիքի մարզի Շինուհայր, Տաթեւ, Հալիձոր, Հարժիս, Սվարանց, Խոտ, Տանձատափ, Քաշունի համայնքների ղեկավարների եւ ավագանու անդամների լիազորությունները, իսկ 2016թ. փետրվարի 14-ը հայտարարվեց նորակազմ համայնքի ՏԻՄ ընտրությունների օր:

Տաթեւ համայնքի ղեկավար ընտրվելու համար մրցապայքարի էին ելել Իգոր Աբրահամյանը (անկուսակցական, ինքնաառաջադրում), Վարշամ Բագրատյանը (անկուսակցական, ինքնաառաջադրում), Մուրադ Սիմոնյանը (ՀՀԿ անդամ, առաջադրել է ՀՀԿ-ն):

> *Ընտրությունները, կարելի է ասել ամենայն որոշակիությամբ, անցան ընտրողների ակտիվ մասնակցության մթնոլորտում. քվեարկության իրավունք ունեցող 4395 քաղաքացուց քվեարկությանը մասնակցեց 2729 հոգի (մոտ 62%): Ընդ որում՝ Շինուհայրի 1771 ընտրողից քվեարկությանը մասնակցեց 1130-ը, Տաթեւի 653 ընտրողից՝ 401-ը, Խոտի 652 ընտրողից՝ 414-ը, Հարժիսի 569 ընտրողից՝ 313-ը, Հալիձորի 444 ընտրողից՝ 300-ը, Սվարանցի 221 ընտրողից՝ 114-ը, Տանձատափի 69 ընտրողից՝ 50-ը, Քաշունիի 16 ընտրողից՝ 7-ը:*

Քվեարկության նախնական արդյունքներով համայնքի ղեկավարի համար առաջադրված թեկնածուները ստացան հետեւյալ քանակությամբ ձայներ՝ Աբրահամյան Իգոր՝ 824, Բագրատյան Վարշամ՝ 598, Սիմոնյան Մուրադ՝ 1236:

Արդյունքում՝ Տաթեւ համայնքի ղեկավար ընտրվեց Մուրադ Սիմոնյանը, ով մինչ այդ Տաթեւի գյուղապետն էր:

Ձեւավորվեց նաեւ համայնքի ավագանի: Առաջադրված 12 թեկնածուից դուրս մնաց մեկը, իսկ ավագանու անդամներ ընտրվեցին՝ Անդրանիկյան Հայկ, Բախշյան Գեւորգ, Գալստյան Արամ, Գառնիկյան Սեւակ, Գերասիմյան Մարտին, Խաչատրյան Անդրանիկ, Կարապետյան Գրիգոր, Հակոբյան Սեդրակ, Հայրապետյան Սարգիս, Մաթեւոսյան Գեսիկ, Մինասյան Գուժ: Ընդ որում՝ ամենաշատ ձայներ ստացավ Գեւորգ Բախշյանը՝ 365 կողմ, իսկ Գեւորգ Ավետյանը, ով դուրս մնաց, ստացավ 91 ձայն:

Իհարկե, իշխանության վերին օղակներում եւ քաղաքական ու փորձագիտական շրջանակներում վերլուծություններ կարվեն ու գնահատականներ կտրվեն, քանի որ խոշորացված համայնքում առաջին ընտրություններն էին: Բայց, չսպասելով այդ ամենին, մի քանի նկատառում եւ եզրակացություն արդեն իսկ կարելի է հայտնել:

Քվեարկության իրավունք ունեցողներից 1666 հոգի չմասնակցեց քվեարկությանը: Ըստ երեւույթին չմասնակցածների զգալի մասը բացակայում էր մշտական բնակության վայրից: Մենք փետրվարի 14-ին ականատես եղանք ընտրողների իսկական եռուզեռի. քիչ հավանական է, որ նման եռուզեռի պարագայում անտարբերների այդքան մեծ բանակ լիներ: Իսկ եթե նրանք իրոք անտարբերներ են եղել, ապա ավելի շատ մտածելու բան ունենք:

Ընտրական բոլոր տեղամասերում ներկա էին համայնքի ղեկավարի թեկնածուների եւ ավագանու անդամի թեկնածուների վստահված անձինք՝ ամեն տեղամասում մոտ տասը հոգի: Ներկա էին նաեւ մայրաքաղաքային մի քանի լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Ասել է թե՝ ընտրական բոլոր տեղամասերում գործում էր վերահսկողության լուրջ համակարգ, ինչը բացառում էր կեղծարարության հնարավորությունը քվեարկության եւ արդյունքների ամփոփման ընթացքում:

Ընտրության ելքի համար վճռական ճակատամարտը, այնուամենայնիվ, տեղի էր ունենում Շինուհայրում: Համայնքի ղեկավարի երեք թեկնածուից երկուսն այդ գյուղից էին՝ Իգոր Աբրահամյան, Վարշամ Բագրատյան: Նրանց ջանքերի մեկտեղմանը եւ մեկի ինքնաբացարկի կազմակերպմանը միտված բանակցությունները (տեղի ակտիվիստների նախաձեռնությամբ) արդյունք չէին տվել: Այնպես որ՝ ամենամեծ քանակությամբ ընտրողներ ունեցող Շինուհայրում պայքարում էին միմյանց եւ ոչ թե Տաթեւի նախկին գյուղապետ Մուրադ Սիմոնյանի դեմ:

Եթե Շինուհայրը հանդես գար մեկ թեկնածուով, ապա ընտրությունները, ամենայն հավանականությամբ, այլ ելք կունենային:

Քվեարկության օրը բազմաթիվ հանդիպումներ ունեցանք տարածաշրջանի բնակիչների հետ: Մեծ մասը մեզ քաջածանոթ հարցն էր առաջադրում. արդյո՞ք սա է լեռնային գյուղերի փրկության ճանապարհը: Շատերը սխալ էին համարում համայնքների խոշորացման այս միջոցառումը: Եթե նույնիսկ Սվարանցի, Տանձատափի ու Քաշունիի պարագայում դա անհրաժեշտություն էր, ապա Շինուհայր, Տաթեւ, Հալիձոր, Խոտ, Հարժիս կենսունակ գյուղերի պարագայում՝ անբացատրելի ու անտրամաբանական: Ոմանք էլ ենթադրություններ արեցին, որ համայնքների խոշորացման ներկա հայեցակարգը չի դիմանա պատմության ու ժամանակի քննությանը, եւ վաղ թե ուշ շրջադարձ կկատարենք դեպի հետ:

> *Փետրվարի 14-ի ընտրությունները վերստին ցույց տվեցին, որ ՏԻՄ ընտրությունների ժամանակ այնքան էլ կարեւոր չեն կուսակցական պատկանելությունը, գաղափարներն ու ծրագրերը (դրանից, ի դեպ, չպիտի էլ զարմանալ. քաղաքապետերն ու պատգամավորներն անգամ մեզանում գաղափարական ու ծրագրային պլատֆորմով չեն ներկայանում հանրությանը):*

ՏԻՄ ընտրությունների ժամանակ (մանավանդ խոշորացվող համայնքներում) առաջին պլան է մղվում տեղային հայրենասիրությունը: Կարեւոր են, անշուշտ, մարդկային, ընկերական, բարեկամական հարաբերությունները եւ, իհարկե, իշխանությունների դիրքորոշումը. չէ՞ որ համայնքի ապագա ղեկավարը (անկախ անձնավորությունից) չի կարող ինքնուրույն, չեղած սեփական ռեսուրսով որեւէ հարց լուծել առանց բարձր իշխանությունների աջակցության:

Ինչեւէ, Գորիսի տարածաշրջանի ութ գյուղում պատմական նոր ժամանակաշրջանի հաշվարկ է սկսվում: Եվ այդ ժամանակը կպատասխանի բոլորիս հետաքրքրող գլխավոր հարցին՝ *արդյո՞ք համայնքների խոշորացումն այն հաստատ ճանապարհն է, որ լեռնային գյուղերին կբերի հարատեւություն, ամրություն, խնդիրների լուծում եւ վաղվա օրվա հեռանկար:*

Իսկ հիմա շնորհավորենք համայնքի նորընտիր ղեկավար Մուրադ Սիմոնյանին եւ ավագանու անդամներին՝ նրանց մաղթելով հաջողություններ Սյունիքի մարզի ենթաշրջաններից մեկի ղեկավարման գործում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Գրական Սյունիք

Մենք ասպղեր ունենք հովտում...



ԱՐԹՈՒՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գորիսի արյան փոխներարկման կայանի տնօրեն

Գրող, բժիշկ, լրագրող, տնտեսագետ: Գորիսի քաղխորհրդի պատգամավոր (1990-96), Գիտական կոչումը՝ Գորիսի «Սյունիք» ինստիտուտի դոցենտ (1998), ՀՀ Սյունիքի մարզի Շինուհայր համայնքի պատվավոր քաղաքացի (2001), Հայաստանի ժուռնալիստների միության անդամ (2009)-ից:

Հեղինակ է բանաստեղծական, գրականագիտական տպագրված երեք գրքի «Մթնաձորի լույսը» (2001.), «Նյութի հաղթանակը» (2009.), «Լեռներում» (2014.), էսսեների շարքի եւ շուրջ հարյուր հոդվածի (գրականագիտական, գրախոսական, մշակութային, բժշկագիտական, բնապահպանական), որոնք տպագրվել են գիտական հանդեսներում, գրքերում եւ լրագրերում:

Ծնվել է 1959թ. օգոստոսի 11-ին, Գորիս քաղաքում: Ավարտել է Գորիսի Ակսել Բակունցի անվան միջնակարգ դպրոցը (1966-76), Գորիսի N-41 պրոֆտեխուսումնարանը (1976-77), Երեւանի պետական բժշկական ինստիտուտի (այժմ համալսարան) Հասարակական մասնագիտությունների ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինը (1980-82), Երեւանի պետական բժշկական ինստիտուտը (1977-83): ՀԿԿ Գորիսի շրջկոմի բյուրոյի երաշխավորագրով հեռակա սովորել եւ գերազանցությամբ ավարտել է ՀԿԿ Կենտկոմի հասարակական-քաղաքական գիտությունների համալսարանի տնտեսագիտական բաժինը (1989-91):

Աշխատել է Գորիսի շրջանային սանէպիդկայանում՝ սանհիգիենիկ բաժնի վարիչ (1983-92), Ջերմուկի քաղաքային սանէպիդկայանի գլխավոր բժիշկ (1992-94): 1994-ից աշխատել է Գորիսի «Սյունիք» ինստիտուտի գիտական աշխատանքի գծով պրոռեկտոր, դասախոս, ավագ դասախոս, դոցենտ, միաժամանակ (1997-2002թթ.)՝ «Շինուհայրի առողջության կենտրոն» ՓԲԸ տնօրեն, եւ շարունակել է գիտամանկավարժական աշխատանքը մինչեւ 2013 թվականը:

2002-ից մինչեւ այժմ՝ «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ տնօրեն: 2010-ից միաժամանակ Հայաստանի գրողների միության Սյունիքի մասնաճյուղի քարտուղար, «Գրական Սյունիք» թերթի խմբագիր:

1988-89թթ. բժշկական ծառայության լեյտենանտ Ա.Առաքելյանը համատեղությամբ, հատուկ հանձնարարությունների գծով՝ աշխատել է Շիրակում եւ Լոռիում՝ աղետի գոտու հակահամաճարակային բաժնի պետ (զորամաս 63278), որպես կամավորական մասնակցել է Արցախյան ազատամարտին՝ ՀՀ ՊՆ 1-ին բանակային կորպուսի Գորիսի թիվ 2 պաշտպանական գումարտակի բուժմասի պետ-ավագ լեյտենանտ (1994): Աշխատել է Գորիսի թիվ 1 բանտի բուժմասի պետ (1995): Երկրապահ կամավորականների միության անդամ է:

Կենսագրականն ընդգրկվել է «Ականավոր գործիչներ, նշանավոր դեմքեր, արժանավոր զավակներ» (2003), «Հայաստանի գրողների միության մատենագիտական ժողովածու(Գորիս), Սյունիք» (2006), «Շինուհայր» (գիրք 3), (2004), (գիրք 4), (2010), «...Այսպես «հանդիպեցի» Բակունցին» (2008), «Գորիսի հանրագիտարան» (2008), «Գրական Սյունիք-Գրական Գորիս» (2011), «Ձեր ընծայագրերի հետքերով» (2011) եւ այլ գրքերում:

Բնակվում է ՀՀ Սյունիքի մարզ ք. Գորիս, Սյունիքի փ. 2/6

Հեռախոսներ 0284 2-59-23, 2-60-54, 091780116, 093780116

էլ. հասցե՝

syuniqimarzayinaryankayan@mail.ru

ԱՐՑԱԽԻ ԱՌԱՎՈՏԸ

Նախաապրեղծության բոցը քեզ կերտեց՝
Շռա՛յլ այգաբաց, լույսդ ճո՛ղ, վսեմ՝
Ցայգաղի խմած ու մյուռոն գինի
Անսահմանության գովեստ Բարձրյալի:
Հավիտենության տենչանք բաղձալի
Ժայռիդ ու վիմիդ պերճանքը թավիշ,
Ցոլանք է ու ցող, մաշկդ՝ լուսաշող
Խավարդ շուրթերով ըմպել ես՝ ավի՛շ:
Կարոտի ընծա՝ եղյամդ-պարգկա,
Միրաժը հեռվի արտացոլքերի,
Արարչության առեղծվածն անձեւ,
Ջրերդ հորձանք կայծակնահարի:
Դիշեցում են, մե՛ծ ճոխության հրաշք
Հակվել են բարուն դղիրդ ու որոտ
Արեւի հրով բողբոջդ խրոխտ
Քո ճշմարտության առջեւ ծնկաչոք:
Պայթյունը ցրել՝ ծաղկունքի բերկրանք-
Դարձրել երկրային, ներկայությո՛ւնդ,

Անձրեւն ու ձյունը քամիդ է բերել,
Մաքրել փոշին ու խավը փռել:
Անծիր բերկրանք հեղել սերմերին՝
Հովերիդ բովում ու եզերքներում,
Գարունդ՝ նայի՛ր, ափոփանք էր երեկ
Բազմաշնորհ ձիրքեր խորքերում:
Հավատարի՛մ են անուրջներդ, լուրջ
Կախարդանքի անմնան հորձանք,
Ամռան արեւդ՝ վայելքի պարծանք,
Շիկնա՛նք՝ ամոթիած ծաղկաբույլերում:
Մշտահոլով է աշունդ, երկի՛ր,
Կրկին զապված դաշտերում ձմռան,
Հավերժ պատվար երկչոտ ցողունիդ-
Նախաապրե՛ղծ Բարձրյա՛լ, քո բարձրաթռիչ՝
Մեծահոգության բողբոջը պայթած,
Ճայթեց հողին կայծակդ վերին,
Որ արդար, անձուկ սերմերը տեսնեմ՝
Միրճած հողի սիրանքում բերրի:
Տապալիր թերին անհամաձայնիս,
Բազմամեղիս կամք ներարկիր ըմբոստ,
Համոզմունքը մեծ դեռ ծածկագրիր,
Կամքդ՝ անիսորոր, գթառատ՝ ուղի՛դ:

14.07.2012, ք. Երեւան

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ

Ժայռերի ծոցում արդեն ամառ է՝
Հանդի պատրիարք անձրեւը լռել,
Ուշաթափ՝ ալպյան մանուշակները,
Իսկ նարցիսները հրդեհ են փռել:

Անապակ հողի, շուշանի առջեւ
Ջվարթ է հովը, արտը երկյուղել՝
Ալեկոծ են հասկի շշուկնե՛ր,
Ժայռերի խուրձը հրդեհը լարել:

Նախիրը քայլող-քաշվամա՝ շոգին
Ժայռի ծոցին անձրեւը ցայտի,
Մարի առնական հրդեհը ցուլի,
Արտերի ոսկին՝ թո՛ղ չճարճատի:

2011, ք. Գորիս

ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐԸ

Ցուրեր կային մտած ձորի մեջ՝
Ծովափնյա երկրից հայտնվել,
Ուրիշ աշխարհից ջրահարսեր,
Փարոսի լույսեր ձորում՝ փռել:

Թվացել է, թե մեկն ուժով պոկել՝
Քույրերին խելահեղ ծովից,
Ծանոթս՝ ծովահեն ահել
Հարուստ ավա՛ր է թոցրել նորից:

Զագեձորում կարոտ է, հուրթի՝
Տաք ձորի միջին սարսուռը ներուժ,
Նրանց անծայր շըշուկը հարբել,
Դողդոջ թրթիռ է ծովածոց խուժում:

Այդպես դեռատի հմայքը հեւում,
Առագաստները՝ ծովի մեջ անծիր,
Աղջկական բարձր հեւոցը մղում՝
Դողում են հեւքից ձիգ ու հրացիր:

Կարծես չկամ իրապես այնտեղ,
Ջմրուխտ պատրանք է աննահանջ ուխտի,
Ժայռերի ծոցի զեփյուռը մղեց՝
Ամոթխել, նիրհել ականջում ուղտի:

Ու թվում էր ինձ, գործել է մեղք,
Բնության վերին կրկներգը երեկ,
Որ ճկվել գիտեն ու գիտեն չքվել
Փարոսի ցոլքի ցնորքները մերկ:

2012, ք. Գորիս

ԿԱՐՈՏԻ ՄԱՌԱՆ

Ոռնաց լեռան ոհմակը քամոտ,
Ապառաժները ժանիքը սրել,

Ժայռի ահռելի շեղբերը արնոտ
Ամպի շապիկը ուզում են բռնել:
Երկչոտ է ամպը՝ քաշում է փեշը,
Կամրջի տակով ահով անցնում,
Այդպես է սահում անուրջի խոհը
Ժայռի ծոցի մեջ ու ցմահ մնում:
Ամեն ժայռափոր կաքավանը խոր՝
Բրուտի անձավ, համաբուժարան,
Մեծ սիրտ է թվում, երդիկը՝ թոք,
Ժայռանստաղը՝ կարոտի՛ մառան:

2011, ք. Գորիս

Մենք ասպղեր ունենք հովտում
Կախարդի՛չ, շղթայած ասպղեր,
Այս հովտի երկար ենդուցում
Ասպղեր հին ու նոր, շատ ասպղեր:
Հրավառ ծաղկունքի հեղեղ.
Ժայռերի հեծանն ասպղոտ
Խրվել է թողել խորքում,
Հրաբխի ուժ ու բազուկ:
Քարայրի գլխին՝ շողացող,
Ասպղացող այսբերգի բյուրեղ՝
Հակիներ շողերում ապրող,
Ժայռերի գլխին մերթ տնկված,
Քարափի ցածում լողացող:
Ծագի լույսերը վառել՝
Բերկրալի ջերմն ասպղոտ՝
Տանում են գերը հունով՝
Մեր հովտի գերն ասպղոտ:

03. 07. 2010, ք. Երեւան

Բարձրացար հնքնավստահ՝ ինչպես ամպը
Փեշերը ժայռին քսելով ստուգեց՝
Ի՞նչ խլիրտ մարմնում, թախիծ՝ հոգու՛մ,
Խոստումի ժպիտ պարգեւեց:
Կրակոտ, ճարճա՛տ, արեւն իջել
Ժրաջան ու վառ գիջել չուզեց,
Անձրեւի՛, մեջքի՛դ պես՝ բարակ, ճկուն
Մեղմօրոր հովը ցնորք հուշեց:

2012, ք. Գորիս

ԳՐԱԴԻ ՏԱՐԱԾ-ԲԵՐԱԾ

Հեռվի Մուղանից՝
Քառասնարկ բզզաց
Ականջիս՝ դղի՛րդ
Հովտում նախնյաց:

Քերծի վերնամաշկ,
Բացվեց՝ ժայռ տնքաց
Խավոտ, վարդագույն
Երակներ պատռած:

Բարբարոս ձայնի
Ալիքը թնդաց,
Վերից զանակոծ
Ձորում Սյունյաց:

Հանցանքի անկոչ
Դրթիռներ՝ վարում,
Թպրտոց անանց
Ջառանցանքում:

Անթիվ շիրմաքար
Կրկին մեռան՝
Թշնամյաց մաղձի
Հոգոցներ վրան:

Գաղթեցին՝
Ստյուռքից մոտիկ,
Ինչպես փախչում են
Նավթի հոտից:

Սակայն մեկը՝
Կասպի ծովափից,
Ջասաց ոչինչ,
Մաշկին՝ թուխ սպի:

Անմման էր նա,
Եղեգնածին,
Հագին՝ ջրիմուռ,
Խեցիներ՝ լանջին:

18.03.2012, ք. Գորիս

ԲՆՈՐԴԸ

Համատարած թափանց,
ճշմարտացի, նրբին
Իմ բնորդը դարձար անդիմադիր,
հուրթի՛,
Անեղծ ու տաք՝ ինչպես կիսերանգը
սանձած, բնությունը խորքի՛
Խիստ արվեստի նման
իր մերկությամբ շվա՛յտ-
Իմ բնորդը դարձար, քո բնույթը պահի՛ր,
օ՛ բնություն, օ՛ կյանք.
Ինչպես գույնի գաղտնին՝
որդան կարմիր,
Քամիր օրհնությունը աբանչ լույսի-
Ջորեր, պարկեշտ, ջնա՛ղ նույնքան՝
Բեղուններություն անսպառ ու ճշմարիտ
օ՛ բնություն, օ՛ կյանք
... Եվ ո՛վ բնորդ՝ ծաղկունք:

Թիթեռը ամպի կիթառը լարել
Կարապի երգ է շշնջում հասկին,
Մինչդեռ բողբոջը նախագիծ էր՝
Ճայթել է արդեն ամբողջ մի ամիս:
Արտի արծաթը ծփում է շուքով՝
Նեկտարի ծանր բյուրեղը ներսում
Ջրույց է ասպղոտ ակոսում եռուն
Երկրային բերկրանք խոնարհ քարոզում:
Հասկացա՛, ինչու՞ խորհուն է հասկը,
Լիքը, գլխահակ ու ներհուն:.

2012, ք. Գորիս

ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻ

Մե՛ր, առաջին հայացքից ծնված
Դրաշքը գուցե- հենց այս է եղել՝
Սրտաբուխ ու բաց, շողացել անմեղ
Ցմահ միմյանցից հեռու տեղ ցրել:

Այս դեպքն է գուցե միայն այդպիսին.
Ամուրի էր կարծել դեռատին՝
Բաղձալի կինը վարանումներին
Լուռ տարակուսեց՝ ինչու՞ հայտնվեցիր:

Արշավել էին իր խորունկ սրտին.
Ազնիվ գտնվեց՝ ջինջ, իրագեկել
Եկել էր ժամը՝ անձամբ պարգել
Գաղտնիքը հոգու՝ խոստովանել:

Խոստովանանքը նետեց հույսով,
Որ պիտի ժխտեմ լուրը ստահող,
Հոգու գաղտնիքը ընծայեց սիրո՛վ,
Ու ես չասացի՛, զո՛ր ես մտահոգ:

Նա սպասել, արդեն՝ ժամանակ չուներ
Բացեց սիրտն իր անմեղ, արտառուչ,
Կարծել էր, թե ստել են իրեն՝
Ընդանիք իրո՛ք ունեի վաղուց:

Իզո՛ր էր փախել նա իր «նշանից»,
Մխիթարող խոսք վերո՛ւստ չասացի,
Խոսել սիրուց՝ մի՛շտ խուսանավեցի,-
Օրիորդին այդպես «մեղքս» քավեցի:

24. 06. 2011, ք. Գորիս

Տեառնընդառաջի կամ Տրնդեզի խորհուրդը

Հայ առաքելական եկեղեցին ամեն տարվա փետրվարի 14-ին (համաձայն եկեղեցական օրացույցի՝ օրը փոխվում է երեկոյան պատարագից հետո)՝ Քրիստոսի Սուրբ ծննդյան օրվանից 40 օր հետո, նշում է քառասուն օրական մանուկ Հիսուսին տաճարին ընծայաբերելու տոնը՝ Տյառնընդառաջը: Տոնի անվանումը ստուգաբանվում է քրիստոնեական ավանդությամբ:

Համաձայն նախնյաց օրենքի՝ ծննդաբերած կինը քառասուն օրական զավակին պիտի տաներ տաճար, Աստծուն նվեր մատուցեր եւ աղոթեր: Մարիամը քառասուն օրական Հիսուսին տանում է տաճար: Այստեղ էր Սիմեոն անունով բարեպաշտ ծերունին, որն Աստծուց խնդրում էր իր կյանքը երկարացնել այնքան, մինչեւ տեսնի աշխարհի ու մարդկության Փրկչին: Նա հրաշքով զգում է Փրկչի ներկայությունը եւ ընդառաջ է գնում Հիսուս մանուկին: Այստեղից էլ «Տիրոջն ընդառաջ» արտահայտությունը: Ծեսը լույսի մի յուրօրինակ տոնախմբություն է, որը Սիմեոն ծերունու՝ Քրիստոսին տված Լույս անվանման խորհուրդն ունի:

Հայ եկեղեցին այն մեծ հանդիսավորությամբ տոնել է դեռեւս վաղ շրջանում: Այդ մասին են վկայում սուրբ Սահակ Պարթեւի քառասուներորդ կանոնը եւ Մովսես Խորենացու Տյառնընդառաջ տոնին նվիրված շարականը:

Սակայն Տեառնընդառաջի ծեսերն ունեն ավելի հին՝ հեթանոսական հիմքեր, ու կապված են կրակի մաքրող հատկությունների հետ: Տոնի հիմնական ծեսը կրակ վառելն է: Հնում կարծում էին, որ կրակը ջերմացնում է, դաշտերը բերրի դարձնում ու նպաստում ամուսնական կապերին:

Տրնդեզը հեթանոսական, կռապաշտական տոն է, երբ, հինավուրց ավանդույթի համաձայն, խարույկ են վառում, ինչը սահմանված չէ քրիստոնեական եւ եկեղեցական որեւէ օրենքով կամ կանոնով, այլ նույնիսկ արգելված է նման արարողություն (պաշտամունքի ձեւ, պաշտամունք կուռքերին): Ուսումնասիրողները կարծում են, որ կրակ վառելու ավանդույթը գալիս է հեթանոսական շրջանից, հայոց մեջ՝ կապված Միհր կամ Տիր կուռքերի, հնդիրանական ժողովուրդների մոտ՝ Ագնիի կամ նույն Միհր (Միթրա) կուռքի պաշտամունքի հետ: Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը հավանական է համարում, որ ժողովրդի մեջ գործածվող տերնտաս (տրնդեզ) անվանումը վկայում է հենց Տիր կուռքի պատվին կատարված վաղնջական ծեսի մասին:

Ծեսը հետեւյալ տեսքն ուներ. տաճարի բակում մեծ կրակ էին վառում: Հավաքվում էր ամբողջ ժողովուրդը՝ կոչ անելով «այրել ձմեռը»: Ծիսակատարության մասնակիցները երգեր էին ձոնում իրենց ցանկություններին: Տարիքավորները, օրինակ, երգում էին «հավերս ձու ածեն, կովս կաթ տա, հարսներս ծնեն»: Երիտասարդ տղաներն ու աղջիկներն իրենց երգերի մեջ սերն էին գովաբանում: Անզավակ կանայք ցատկում էին կրակի վրայով՝ հավատալով, որ դա կօգնի հղիանալ: Ապաքինման հույսով կրակի մոտ էին բերում հիվանդներին:

Տների բակերում էլ էին կրակ վառում, որի շուրջը պտտվում էր նորապսակ զույգն ամուսնական տարազով: Սա համարվում էր երկրորդ հարսանիքի պես մի բան: Հարսն այդ ընթացքում ձեռքն էր առած լինում նորածին տղա, որպեսզի իր զավակն էլ տղա լինի: Եթե նա դեռ հայրական տանն էր ապրում, սկեսուրն ուղարկում էր նրան «բաժինքը»՝ ընկույզ, մրգեր, չամիչ, շաքար ու տարբեր զարդեր:

Կրակի շուրջ հավաքվածներն ուշադիր հետեւում էին ծխի ուղղությանը, քանի որ վստահ էին, որ այն ցույց է տալու այն այգիները, դաշտերն ու արոտավայրերը, որոնք այդ տարի առավել բերրի էին լինելու: Կրակի վրայով առաջինը ցատկում էր տան ամենատարեց կինը՝ «տունը չարից մաքրելով»: Նրանից հետո գալիս էին երիտասարդներն ու երեխաները: Եթե այդ ընթացքում աղջկա շորի փեշն այրվում էր, համարում էին, որ այդ տարի նա ամուսնանալու է: Մեծ կրակից հանում էին այրվող փայտեր, որպեսզի տների բակերում էլ կրակ վառեն: Մանավանդ այնտեղ, որտեղ նորապսակներ կամ նշանված աղջիկներ էին ապրում. սկեսուրներն այդ օրը պետք է «կրակին ի ցույց տային հարսին»:

Քրիստոնեությունն ընդունելուց հետո տոնն այլ խորհուրդ ստացավ: Եկեղեցու բակում վառված կրակը խորհրդանշում է Քրիստոսի լույսը: Ինչպես հոգեւորականներն են վկայում, հեթանոսները Աստծո պատիվը կրակին էին մատուցում, իսկ մենք ցույց ենք տալիս կրակը որպես Քրիստոսի ծառա, որի համար բերում ենք Աստծուն ծառայեցնելու, իսկ կրակի վրայով թռչելով՝ այն ոտնատակ ենք տալիս, թե դու աստված չես, այլ Նա է Աստված, ով քառասուն օրական եկավ տաճար: Նորապսակները, ցատկելով խարույկի վրայով, հավատում են, որ այն իրենց հաջողություն կբերի: Ամենայն հայոց Գարեգին Բ կաթողիկոսի տնօրինությամբ Տյառնընդառաջը հռչակվել է նորապսակների օրհնության օր:

Ինչպես ամեն տարի, այս տարի նույնպես մարզի բոլոր քաղաքների եկեղեցիներում նախատոնակի ժամերգությունից հետո կատարվեց նորապսակների օրհնության կարգ, որից հետո եկեղեցիների բակերում վառվեց ավանդական խարույկը: Նորապսակները, շնորհավորական խոսքերից բացի, ստացան նվերներ համայնքի ղեկավարների եւ տվյալ համայնքի եկեղեցու խաչի քավորների կողմից:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրություն (11 դասաժամ), ինֆորմատիկա (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ մարտի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի «Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա մարտի 21-ին՝ ժամը 12:00-ին, «Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 0285-2-55-92 հեռախոսահամարով:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը ցավակցում է Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին եւ տիկին Լորետա Բարսեղյանին՝ Սերոբ Խաչատրյանի եւ Լեւիկ Բարսեղյանի վաղաժամ մահվան կապակցությամբ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ Սյունիքի մարզի Գեղանուշի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի (9.25 դասաժամ), ֆիզկուլտուրայի (19.75 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ:
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ մարտի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ն, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա մարտի 21-ին՝ ժամը 14:00-ին, Գեղանուշի միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ գ. Գեղանուշ, Վերին թաղ. 4

Տեղեկությունների համար զանգահարել (0285)2-44-87 եւ 077-76-88-36 հեռախոսահամարներով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Աշոտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (19,25 ժամ) եւ ինֆորմատիկայի (9,25 ժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր, ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Երկու լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ մարտի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի «Աշոտավանի միջնակարգ» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա մարտի 21-ին՝ ժամը 12:00-ին, «Աշոտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098 58 58 48 հեռախոսահամարով:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 4 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1747, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 17.02.2016թ.: